Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
նոյեմբերի 27-ի նիստի N 50
արձանագրային որոշման

FI N° 82.043

Serapis N° 20120322

Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք

Ֆինանսական պայմանագիր

Հայաստանի Հանրապետության

և

Եվրոպական ներդրումային բանկի
միջև

Երևան, 2014 թվականի հունիսի 24

Լյուքսեմբուրգ, 2014 թվականի հունիսի 27

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ 10
ՀՈԴՎԱԾ 1 23
1.01 ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԸ 23
1.02 ՀԱՏԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 23
1.03 ՀԱՏԿԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ 25
1.04 ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ..... 25
1.05 ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԵՏԱԳՈՒՄԸ.....28
1.06 ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ ԵՎ ԿԱՍԵՑՆԵԼԸ 29
1.07 ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ.....31
1.08 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎՃԱՐԸ 31
1.09 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ 31
ՀՈԴՎԱԾ 2.....31
2.01 ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ 31
2.02 ՀԵՏՎՃԱՐՄԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ, ՏՈԿՈՍԸ ԵՎ ԱՅԼ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ 31
2.03 ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 31
ՀՈԴՎԱԾ 3..... 32
3.01 ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ 32
3.01.Բ ԼՈՂԱՑՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՈՎ ՏՐԱՆՇՆԵՐԸ 32
3.02 ԺԱՄԿԵՏԱՆՑ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՏՈԿՈՄՆԵՐԸ 33
3.03 ՇՈՒԿԱՅԻ ԽԱԹԱՐՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 33
ՀՈԴՎԱԾ 4..... 34
ՀԵՏՎՃԱՐՈՒՄԸ 34
4.01 ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԵՏՎՃԱՐՈՒՄԸ..... 34
4.02 ԿԱՄԱՎՈՐ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ 35
4.02.Ա. ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....35
4.02.Բ. ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ.....35
4.02.Բ.1 ՖԻՔՍՎԱԾ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՈՎ ՏՐԱՆՇԸ.....35
4.02.Բ.2. ԼՈՂԱՑՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՈՎ ՏՐԱՆՇԸ.....35
4.02.Գ. ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.....’’’35
4.03. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ 36
4.03.Ա. 6) ԵՆԹԱՎԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ 39
4.03. Ա. 7) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ.....40

4.03.Ա.8) ՎՎԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 41
4.04 ԸՆԴՀԱՆՈՒՐ 42
ՀՈԴՎԱԾ 5 42
ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ 42
5.01 ՕՐԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԸ 42
5.02 ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ 43
5.03 ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ՉԿԱՏԱՐՎԵԼԸ 43
5.04 ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԽԱԹԱՐՈՒՄԸ 43
5.05 ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 44
ՀՈԴՎԱԾ 6 45
ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ 45
6.01 ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 45
6.02 ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԸ 45
6.03 ԾՐԱԳՐԻ ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱԽՍԵՐԸ 45
6.04 ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 46
6.05 ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 46
6.06 ՕՐԵՆՔՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼԸ 48
6.07 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ 48
6.08 ԱՄՀ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ 50
6.09 ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ 51
6.10 ԵՆԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎԸ 52
6.11 ՍԱԿԱԳՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄԸ 52
6.12 ՀԱՇՎԵՄԱՏՅԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ 52
6.13 ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ 52
6.14 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 53
ՀՈԴՎԱԾ 7 53
ԵՐԱՇԽԻՔԸ 53
7.01 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՀԱՎԱՍԱՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ 53
7.02 ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՐԱՇԽԻՔԸ 54
7.03 ՆԵՐԱՌՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ 54
ՀՈԴՎԱԾ 8 55
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՑԵՐԸ 55
8.01 ԾՐԱԳՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 55
8.02 ՎԱՐԿԱՌՈՒԻՆ, ՕԺԱՆԴԱԿՈՂԻՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 56
8.03 ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 58
8.04 ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 58
ՀՈԴՎԱԾ 9 59

ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ 59
9.01 ՀԱՐԿԵՐԸ, ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ 59
9.02 ԱՅԼ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ 60
9.03 ԱՎԵԼԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԸ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՆՑՈՒՄԸ 60

ՀՈԴՎԱԾ 10 61
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ 61
10.01 ՀԵՏՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ 61
10.02 ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 63
10.03 ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ 64
10.04 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ 64
ՀՈԴՎԱԾ 11 64
ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՋՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 65
11.01 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ 65
11.02 ԻՐԱՎԱՋՈՐՈՒԹՅՈՒՆԸ 65
11.03 ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՅՐԸ 65
11.04 ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ 65
11.05 ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 65
11.06 ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ 65
11.07 ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ 66
11.08 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 66
11.09 ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐԸ 67
ՀՈԴՎԱԾ 12 67
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 67
12.01 ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈՂՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ 67
12.02 ԾԱՆՈՒՑՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ 67
12.03 ԿՈՂՄԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 68
12.04 ԼԵԶՈՒՆ 68
12.05 ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ 68
12.06 ԴԵԿԼԱՐԱՏԻՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ, ԱՌԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ 69
ԱՌԴԻՐ Ա 70
Ա.1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 70
Ա.2. ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ՝ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑԸ 72
ԱՌԴԻՐ Բ 8077
ԱՌԴԻՐ Գ 80
ԱՌԴԻՐ Դ 82

Սույն Պայմանագիրը կնքվել է

մի կողմից՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝

ի դեմս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար պարոն Գագիկ Խաչատրյանի,

(**Վարկառու**)

մյուս կողմից՝

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ, նստավայրը՝ 98-100 blvd Konrad Adenauer, Luxembourg, L-2950 Luxembourg, միջև՝ ի դեմս ~~փոխնախագահ Մագ. Վիլհելմ Մոլթերերի~~,

պարոն Հայնց Օլբերսի, Վարչության պետ, և

պարոն Վիեբկե Ջարդեի, Բաժնի պետ

միջև:

(**Բանկ)**

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ.

1) Համաձայն հմ. 1080/2011/ԵՄ որոշման՝ Եվրոպական Խորհրդարանը և Եվրոպական միության խորհուրդը որոշել են Բանկին երաշխիք տրամադրել այն կորուստների դիմաց, որոնք նա կրում է 2007–2013 թվականներին տրամադրված վարկերի և վարկային երաշխիքների ներքո՝ այն ծրագրերի մասով իր կանոններին և ընթացակարգերին համապատասխան, որոնք իրականացվում են Եվրոպական միության տարածքից դուրս գտնվող՝ նշված որոշման մեջ թվարկված կոնկրետ երկրներում **(ԵՄ Երաշխիք)**: Վերը նշված որոշման III հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են իրականացվել այդպիսի ծրագրեր:

2) 2008 թվականի փետրվարի 29-ին Վարկառուն և Բանկը ստորագրեցին Հայաստանի Հանրապետությունում Բանկի գործունեությունը կանոնակարգող Շրջանակային համաձայնագիր **(Շրջանակային համաձայնագիր)**, որը շարունակում է ամբողջությամբ ուժի և գործողության մեջ լինել սույն Պայմանագրի ամբողջ ընթացքում:

3) Սույնով Վարկառուն հաստատում է, որ Ծրագիրը գտնվում է Շրջանակային համաձայնագրի գործողության ներքո, ընդ որում՝ Համաձայնագրի 7-րդ հոդվածը սահմանում է, *ի թիվս այլ հարցերի,* որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելիս Բանկին տրամադրվում են նման գործունեության համար միջազգային կազմակերպությանը տրամադրվող ամենաբարենպաստ պայմանները կամ նման գործունեությանը վերաբերող ցանկացած միջազգային պայմանագրով տրամադրվող պայմանները, եթե դրանք ավելի բարենպաստ են: Բանկը Վարկառուին տրամադրում է Վարկը, ինչպես սահմանված է սույն փաստաթղթում, այն հիմքով, որ նա միջազգային ֆինանսական հաստատություն է՝ համաձայն Շրջանակային համաձայնագրի, և իրավունք ունի օգտվելու Շրջանակային համաձայնագրի ներքո միջազգային ֆինանսական այլ հաստատություններին տրամադրվող հավասար վերաբերմունքից:

4) Վարկառուն հայտնել է, որ ներկայումս չորս ջրամատակարար ընկերություններ, մասնավորապես՝ «Նոր Ակունք» ՓԲԸ-ն, «Շիրակ» ՓԲԸ-ն, «Լոռի» ՓԲԸ-ն և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն (**ՀՋԿ**), (այսուհետ՝ բոլորը միասին՝ **Վերջնական շահառուներ** և յուրաքանչյուրն առանձին՝ **Վերջնական շահառու**), պատասխանատու են Հայաստանի ջրային ենթակառուցվածքի համար (բացառությամբ Երևանի): 2009 թվականին Ջրային տնտեսության պետական կոմիտեն (**Օժանդակող**) և կոնսորցիումը (որը ներկայումս բաղկացած է *SAUR S.A.S., MVV Decon GmbH, MVV Energie AG* և *AEG Service* ՍՊԸ ընկերություններից), (**Կոնսորցիում**), կնքեցին կառավարման պայմանագիր՝ կառավարելու համար Ջրային տնտեսության պետական կոմիտեին պատկանող ջրային ենթակառուցվածքը: Կառավարման երկու պայմանագրերը (**Կառավարման պայմանագրեր** և, յուրաքանչյուրն առանձին՝ **Կառավարման պայմանագիր**) փոփոխվել են

2013 թվականի դեկտեմբերի 12-ին՝ մինչև 2016 թվականի մայիսի 31-ը իրենց ժամկետը երկարաձգելու նպատակով: Վերջնական շահառուները Օժանդակողի պատասխանատվության ներքո և կառավարման պայմանագրերով վարձած կապալառուների օգնությամբ կիրականացնեն ծրագիրը, որն իրենից ներկայացնում է Հայաստանի փոքր քաղաքներում և համայնքներում (բացառությամբ Երևանի) ջրային ենթակառուցվածքի վերականգնումն ու կառուցումը, ինչն ավելի մանրամասն նկարագրված է տեխնիկական նկարագրության մեջ (**Տեխնիկական նկարագրություն**), որը ներկայացված է Ա Առդիրում (**Ծրագիր**):

5) Ծրագրի ընդհանուր արժեքը Բանկի գնահատմամբ կազմում է 73,000,000 եվրո (յոթանասուներեք միլիոն եվրո), և Վարկառուն հաստատել է, որ մտադիր է Ծրագիրը ֆինանսավորել հետևյալ կերպով.

Աղբյուր	**Գումար (եվրո)**
Վարկ ՎՎԲ-ից	30.00 մլն
Վարկ Բանկից	25.50 մլն
Հարևանության ներդրումային գործիքից (ՀՆԳ) ներդրումային դրամաշնորհ	15.00 մլն
Տնտեսական համագործակցության և զարգացման Գերմանիայի դաշնային նախարարության կողմից (BMZ) ներդրումային դրամաշնորհ	2.50 մլն
ԸՆԴԱՄԵՆԸ՝	***73.00 մլն***

6) 5-րդ Դեկլարատիվ դրույթում սահմանված ֆինանսական ծրագիրն իրականացնելու նպատակով Վարկառուն դիմել է Բանկին 25,500,000 եվրո (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար եվրո) վարկ ստանալու համար, որը հասանելի կլինի Բանկի սեփական միջոցներից՝ համաձայն Եվրոպական խորհրդի և Եվրոպական Խորհրդարանի հմ. 1080/2011/ԵՄ որոշման՝ 2007-2013 թթ. ընդհանուր մանդատի (**Մանդատ**):

7) Բանկը, հաշվի առնելով այն փաստը, որ Ծրագրի ֆինանսավորումը իր գործառույթների շրջանակներում է և համապատասխանում է Մանդատի նպատակներին, ինչպես նաև նկատի ունենալով նշված Դեկլարատիվ

դրույթներում մեջբերված հաստատումներն ու փաստերը, որոշում է կայացրել բավարարել Վարկառուի խնդրանքը և սույն Ֆինանսական պայմանագրի (**Պայմանագիր**) շրջանակներում նրան տրամադրել վարկ 25,500,000 եվրո (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար եվրո) գումարի չափով՝ պայմանով, որ Բանկի փոխառության չափը ոչ մի դեպքում չպիտի գերազանցի 5-րդ Դեկլարատիվ դրույթում ամրագրված Ծրագրի ընդհանուր արժեքի 50% (հիսուն) տոկոսը:

8) Հայաստանի Կառավարությունը լիազորել է ստանալու 25,500,000 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար) եվրոյի չափով փոխառությունը՝ սույն Պայմանագրում ամրագրված դրույթների համաձայն:

9) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը պատշաճ կերպով լիազորվել է ստորագրելու սույն Պայմանագիրը Վարկառուի կողմից և անունից:

10) *Kreditanstalt für Wiederaufbau* (ՎՎԲ) Վարկառուի հետ կնքել է համաձայնագիր («**ՎՎԲ Վարկային համաձայնագիր**»), ըստ որի՝ ՎՎԲ-ն համաձայնում է Ծրագրի ֆինանսավորման համար Վարկառուին տրամադրել մինչև 30,000,000 եվրո (երեսուն միլիոն եվրո) ընդհանուր գումարի չափով փոխառություն (**ՎՎԲ Վարկ**):

11) Բանկը, ՎՎԲ-ն և Եվրոպական հանձնաժողովը (**Հանձնաժողով)** ֆինանսական այլ հաստատությունների հետ համատեղ կնքել են «Հարևանության ներդրումային գործիքի (**ՀՆԳ**) շրջանակներում համագործակցության վերաբերյալ» շրջանակային համաձայնագիր (ուժի մեջ է 2009 թվականի դեկտեմբերի 21-ից, այսուհետ՝ **ՀՆԳ Շրջանակային համաձայնագիր**). ՎՎԲ-ն և Հանձնաժողովը 2013 թվականի դեկտեմբերի 27-ին կնքել են պատվիրակման համաձայնագիր, ըստ որի՝ Հանձնաժողովը տրամադրում է անհատույց ներդրումային դրամաշնորհի օժանդակություն 15,000,000 եվրոյի չափով (տասնհինգ միլիոն եվրո)՝ Ծրագրի իրականացման ֆինանսավորման նպատակով (ԵՄ Պատվիրակման համաձայնագիրը ՀՆԳ Շրջանակային համաձայնագրի հետ միասին՝ **ՀՆԳ փաստաթղթեր**): Բանկը, ՎՎԲ-ն ու Հանձնաժողովը համաձայնության են եկել, որ ՎՎԲ-ն, համաձայն ՀՆԳ փաստաթղթերի, կգործի որպես գլխավոր ֆինանսական հաստատություն Ծրագրի շրջանակներում իրականացվելիք համագործակցության առնչությամբ՝ ՀՆԳ փաստաթղթերի համաձայն:

12) ՎՎԲ-ն կնքել է իրականացման ֆինանսավորման համաձայնագիր Վարկառուի հետ («ՎՎԲ Իրականացման ֆինանսավորման համաձայնագիր») ներդրումային դրամաշնորհի օժանդակության իրականացման առնչությամբ՝ ֆինանսավորելու համար Հանձնաժողովի կողմից տրամադրված Ծրագրի իրականացումը՝ Պատվիրակման համաձայնագրի դրույթներին համապատասխան:

13) Տնտեսական համագործակցության և զարգացման Գերմանիայի դաշնային նախարարությունը (BMZ) Վարկառուի հետ կնքել է կամ պետք է կնքի ֆինանսավորման համաձայնագիր, որի ներքո BMZ-ն տրամադրում է 2,500,000 եվրո (երկու միլիոն հինգ հարյուր հազար եվրո) անհատույց ներդրումային դրամաշնորհ՝ Ծրագրի իրականացման համար տեխնիկական աջակցության բաղադրիչը ֆինանսավորելու նպատակով:

14) Բանկի Կանոնադրությամբ սահմանվում է, որ Բանկն ապահովում է իր կողմից հատկացված ֆինանսական միջոցների առավելագույնս արդյունավետ օգտագործումը՝ ելնելով Եվրոպական միության շահերից, և, համապատասխանաբար, Բանկի վարկային գործառնությունների պայմանները համահունչ են ԵՄ համապատասխան քաղաքականությանը:

15) Բանկը գտնում է, որ տեղեկատվության հասանելիությունը առանցքային դեր է խաղում շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի նվազեցման խնդրում, ներառյալ իր կողմից ֆինանսավորվող ծրագրերի հետ կապված՝ մարդու իրավունքների խախտումները, և սահմանել է իր Թափանցիկության քաղաքականությունը, որի նպատակն է բարձրացնել ԵՆԲ խմբի հաշվետվողականության մակարդակը շահառուների առջև:

16) Անձնական տվյալների մշակումը Բանկի կողմից իրականացվում է Եվրոպական միության հաստատությունների ու մարմինների կողմից անձնական տվյալների մասով անհատների իրավունքների պաշտպանության և այդպիսի տվյալների ազատ տեղաշարժի վերաբերյալ Եվրոպական միության կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՎԵՐՈՆՇՅԱԼԸ՝ ձեռք է բերվել հետևյալ համաձայնությունը.

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ա) Մեկնաբանումը

Սույն Պայմանագրում.

i) Հոդվածներին, դեկլարատիվ դրույթներին (սույն Պայմանագրի ներածության համապատասխան պարբերություններին), Առդիրներին ու հավելվածներին կատարվող հղումները, եթե հստակորեն այլ կերպ սահմանված չէ, համարվում են հղումներ, համապատասխանաբար, սույն Պայմանագրի հոդվածներին, դեկլարատիվ դրույթներին, Առդիրներին ու հավելվածներին:

ii) Որևէ իրավական դրույթի կատարվող հղումները համարվում են հղումներ այդ իրավական դրույթին՝ փոփոխված կամ վերահաստատված:

iii) Որևէ այլ համաձայնագրի կամ փաստաթղթի կատարվող հղումները համարվում են հղումներ այդ մյուս համաձայնագրին կամ փաստաթղթին՝ փոփոխված, լրամշակված, լրացված, ժամկետը երկարաձգված կամ վերահաստատված:

բ) Սահմանումները

Սույն Պայմանագրում՝

«**Ընդունման վերջնաժամկետ**» ծանուցման առնչությամբ նշանակում է՝

ա) ծանուցման օրվա դրությամբ Լյուքսեմբուրգի ժամանակով ժամը 16:00-ն, եթե ծանուցումը Աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվել է Լյուքսեմբուրգի ժամանակով մինչև ժամը 14:00–ն, կամ

բ) հաջորդ օրը՝ Լյուքսեմբուրգի ժամանակով ժամը 11:00–ն, եթե ծանուցումը ցանկացած աշխատանքային կամ ոչ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվել է Լյուքսեմբուրգի ժամանակով ժամը 14:00-ից հետո:

«Ընդունված տրանշ» նշանակում է՝ Հատկացման առաջարկի մասով Տրանշ, որը պատշաճ կերպով ընդունվել է Վարկառուի կողմից՝ դրա պայմանների համաձայն, Հատկացման առաջարկի ընդունման վերջնաժամկետի օրվա դրությամբ կամ դրանից առաջ:

«**Լիազորություն**» նշանակում է՝ լիազորագիր, թույլտվություն, համաձայնություն, հաստատում, որոշում, լիցենզիա, ազատում, գրանցում, նոտարական վավերացում կամ արձանագրում տրամադրող փաստաթուղթ:

«**ՀՋԿ**»-ն ունի այն իմաստը, որը նրան տրված է 4-րդ Դեկլարատիվ դրույթում:

«Աշխատանքային օր» նշանակում է՝ այն օրը (բացի շաբաթ և կիրակի օրերից), որի ընթացքում Լյուքսեմբուրգի տարածքում գործող Բանկը և առևտրային բանկերը բաց են իրենց գործառնական գործունեության համար:

«**Հսկողության փոփոխության իրավիճակ**»-ը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է 4.03.Ա.5 հոդվածում:

«**Օրենքի փոփոխության իրավիճակ**»-ը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է 4.03.Ա.3 հոդվածում:

«**Հանձնաժողով**»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 11-րդ Դեկլարատիվ դրույթում:

«**Կոնսորցիում**»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 4-րդ Դեկլարատիվ դրույթում:

«**Պայմանագիր**»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 7-րդ Դեկլարատիվ դրույթում:

«Վարկ»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 1.01-ին հոդվածում:

«**Գործողության մեջ մտնելու ամսաթիվ**»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 12.05-րդ հոդվածում:

«Պարտքային փաստաթուղթ» նշանակում է՝

ա) փաստաթուղթ, այդ թվում՝ ցանկացած ստացական կամ քաղվածք, որով հաստատվում կամ սահմանվում է փոխառության, երաշխիքի, կանխավճարի կամ վարկի համանման տրամադրման դիմաց վճարելու պարտավորությունը (ներառյալ, բայց չսահմանափակվելով վերաֆինանսավորման կամ ժամկետների երկարաձգման վերաբերյալ համաձայնագրի համաձայն վարկի տրամադրմամբ),

բ) պարտատոմսով, պարտամուրհակով կամ պարտքի առկայությունը գրավոր հաստատագրող որևէ այլ համանման փաստաթղթով հաստատվող պարտավորություն, կամ

գ) մեկ այլ պարտապանի պարտքային փաստաթղթից բխող պարտավորության երաշխիք՝ պայմանով, որ յուրաքանչյուր դեպքում այդ պարտավորությունը պիտի կանոնակարգվի Հայաստանի Օրենքից տարբերվող իրավական համակարգով:

«**Հետաձգման դիմաց փոխհատուցում**» նշանակում է՝ հետաձգված կամ դադարեցված հատկացման գումարի դիմաց այնպիսի տոկոսադրույքով (եթե այն բարձր է զրոյից) հաշվարկվող փոխհատուցում, որով

- այդ գումարի նկատմամբ կիրառվելիք տոկոսադրույքը, այն դեպքում, եթե այդ գումարը Վարկառուին հատկացվեր Հատկացման սահմանված ամսաթվին,

գերազանցում է.

- EURIBOR-ը (մեկ ամսվա դրույքաչափով) 0.125%-ից պակաս (12.5 բազիսային կետ), եթե այդ արժեքը ցածր չէ զրոյից, որի դեպքում այն կսահմանվի զրո:

Նման փոխհատուցումը հաշվարկվում է Հատկացման սահմանված ամսաթվից մինչև Հատկացման ամսաթիվը կամ, ըստ դեպքի, մինչև Ընդունված տրանշի չեղյալ հայտարարելու օրը՝ սույն Պայմանագրին համապատասխան:

«**Հատկացման ընդունում**» նշանակում է՝ Վարկառուի կողմից պատշաճ կերպով ստորագրված Հատկացման առաջարկի օրինակ:

«**Հատկացման ընդունման վերջնաժամկետ**» նշանակում է՝ Հատկացման առաջարկում նշված՝ դրա ժամկետը լրանալու ամսաթիվն ու ժամը:

«Հատկացման ամսաթիվ» նշանակում է՝ այն ամսաթիվը, երբ Բանկի կողմից կատարվել է Տրանշի իրական հատկացումը:

«Հատկացման առաջարկ» նշանակում է՝ Գ.1 Առդիրում տրված ձևաթղթի համաձայն կազմված գրություն:

«Խաթարման իրավիճակ» նշանակում է՝ ստորև նշվածներից որևէ մեկը կամ բոլորը՝

ա) էական խաթարում վճարման կամ հաղորդակցման այն համակարգերում կամ ֆինանսական այն շուկաներում, որոնց միջոցով կատարվում են սույն Պայմանագրով նախատեսված վճարումները, կամ

բ) ցանկացած այլ իրավիճակ, որի հետևանքով խաթարվում են (տեխնիկական կամ համակարգային բնույթի այլ պատճառներով) Բանկի կամ Վարկառուի գանձապետական կամ վճարային գործողությունները՝ խոչընդոտ դառնալով, որ Կողմը՝

i) կատարի սույն Պայմանագրով նախատեսված վճարային գործողությունները կամ

ii) հաղորդակցվի այլ կողմերի հետ,

և սույն խաթարումը (վերոնշյալ *ա* կամ *բ* կետերում նշված դեպքերում) չի առաջացել այն Կողմի մեղքով, որի գործողությունները խաթարվել են, կամ դուրս է այդ Կողմի վերահսկողությունից:

«ԵՆԲ Վարկային հաշիվ» նշանակում է՝ Վարկառուի հաշիվ, որին Բանկի կողմից կատարվում են հատկացումներ, և որը Հայաստանի Հանրապետության միասնական գանձապետական հաշվի առանձին ենթահաշիվ է՝ առանձնացված

Վարկառուի այլ ակտիվներից, և որից տարբեր հաշիվների վճարումներ են կատարվում Ծրագրի իրականացման նպատակով՝ սույն Պայմանագրի, Վերավարկավորման համաձայնագրի և, առկայության դեպքում, այլ համապատասխան համաձայնագրերի համաձայն:

«ԵՆԲ հայտարարություն շրջակա միջավայրի և սոցիալական սկզբունքների ու չափանիշների մասին» նշանակում է՝ ԵՆԲ վեբ-կայքում հրապարակված հայտարարություն, որը սահմանում է այն չափանիշները, որոնք Բանկը պահանջում է իր կողմից ֆինանսավորվող ծրագրերից, ինչպես նաև տարբեր կողմերի պարտականությունները:

«**Շրջակա միջավայր**» նշանակում է հետևյալը՝ այնքանով, որքանով այն ազդում է մարդկանց առողջության և սոցիալական բարեկեցության վրա:

Դրանք են՝

ա) բուսական և կենդանական աշխարհը,

բ) հողը, ջուրը, օդը, կլիման ու լանդշաֆտը և

գ) մշակութային ժառանգությունը և

դ) ձևավորված միջավայրը:

«Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր» նշանակում է՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը՝ պատրաստված առաջարկված Ծրագրի առնչությամբ և հաստատված Բանկի կողմից:

«Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման ուսումնասիրություն» նշանակում է՝ ուսումնասիրություն՝ որպես շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման արդյունք, որը բացահայտում և գնահատում է Ծրագրի հետ կապված՝ շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցությունները, առաջարկում է միջոցառումներ ցանկացած ազդեցությունից խուսափելու, այն նվազեցնելու և (կամ) շտկելու համար: Ուսումնասիրության շուրջ պետք է տեղի ունենա հանրային քննարկում Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուների հետ:

«Բնապահպանական և սոցիալական փաստաթղթեր» նշանակում է՝ ա) Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման ուսումնասիրություն, բ) Շահառուի ներգրավվածության պլան և գ) Բնապահպանական ու սոցիալական գործողությունների ծրագիր:

«Բնապահպանական և սոցիալական չափանիշներ» նշանակում է՝

ա) Շրջակա միջավայրի մասին օրենքներ և Սոցիալական օրենքներ, որոնք կիրառելի են Ծրագրի և Օժանդակողի նկատմամբ,

բ) ԵՆԲ հայտարարությունը բնապահպանական և սոցիալական սկզբունքների ու չափանիշների մասին և

գ) Բնապահպանական և սոցիալական փաստաթղթեր:

«Բնապահպանական կամ սոցիալական հաստատում» նշանակում է՝ ցանկացած թույլտվություն, լիցենզիա, լիազորություն, համաձայնություն կամ այլ հաստատում, որը պահանջվում է Բնապահպանական իրավունքով կամ Սոցիալական իրավունքով Ծրագրի ձևավորման կամ գործարկման առնչությամբ:

«Բնապահպանական կամ սոցիալական հայց» նշանակում է՝ որևէ անձի կողմից ցանկացած հայց, ընթացակարգ, պաշտոնական ծանուցում կամ հետաքննություն՝ Ծրագրի վրա ազդեցություն ունեցող՝ բնապահպանական կամ սոցիալական հայցերի առնչությամբ՝ ներառյալ բնապահպանական և սոցիալական չափանիշների խախտումը կամ ենթադրյալ խախտումը:

«Բնապահպանական հաստատում» նշանակում է՝ Բնապահպանական իրավունքով սահմանված ցանկացած լիազորություն:

«Բնապահպանական իրավունք» նշանակում է՝

ա) Եվրոպական միության իրավունքը՝ ներառյալ սկզբունքներն ու չափանիշները,

բ) Հայաստանի օրենքները և կանոնակարգերը, և

գ) Հայաստանի կողմից ստորագրված և վավերացված կամ այլ կերպ Հայաստանի համար ընդունելի և պարտադիր միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ,

որոնց հիմնական նպատակն է շրջակա միջավայրի պահպանությունը, պաշտպանությունը և բարելավումը:

«ԵՄ Պատվիրակման համաձայնագիր»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 11-րդ Դեկլարատիվ դրույթում:

«**ԵՄ Երաշխիք**»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 1-ին Դեկլարատիվ դրույթում:

«EUR» կամ **«եվրո»** նշանակում է՝ Եվրոպական միության անդամ պետությունների օրինական արժույթ, որն այդ երկրներում ընդունվում կամ ընդունվել է որպես իրենց արժույթ՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրի և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի կամ դրանց հաջորդած պայմանագրերի համապատասխան դրույթների համաձայն:

«Պարտավորությունը չկատարելու դեպք» նշանակում է՝ 10.01-ին հոդվածում նշված հանգամանքներից, դեպքերից և իրավիճակներից ցանկացածը:

«Միջոցների հասանելիության վերջնաժամկետ» նշանակում է՝ 48

(քառասունութ) ամիս սույն Պայմանագրի ամսաթվից:

«Վերջնական Շահառուներ» ունի այն իմաստը, որը տրված է նրան Դեկլարատիվ դրույթ (4)-ում:

«Ահաբեկչության ֆինանսավորում» նշանակում է՝ ուղղակի կամ անուղղակի կերպով ցանկացած պարագայում միջոցների տրամադրում կամ հավաքագրում՝

ամբողջապես կամ մասնակիորեն օգտագործելու մտադրությամբ կամ այն գիտակցությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ԵՄ խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի հմ. 2002/475/ԱՆԳ շրջանակային որոշման 1-4-րդ հոդվածների շրջանակներում իրավախախտումները կատարելու համար:

«Ֆիքսված տոկոսադրույք» նշանակում է՝ Բանկի կողմից սահմանվող տարեկան տոկոսադրույք, որը ժամանակ առ ժամանակ սահմանվում է Բանկի կառավարման մարմինների կողմից կիրառելի սկզբունքներին համապատասխան՝ այն փոխառությունների համար, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք՝ արտահայտված Տրանշի արժույթով, և որի նկատմամբ կիրառվում են նույն պայմանները, ինչ կապիտալի հետվճարման և տոկոսադրույքի վճարման համար:

«Ֆիքսված տոկոսադրույքով տրանշ» նշանակում է՝ տրանշ, որի նկատմամբ կիրառվում է ֆիքսված տոկոսադրույքը:

«Լողացող տոկոսադրույք» նշանակում է՝ լողացող տոկոսադրույքի հաստատուն տարբերություն, այսինքն՝ Բանկի կողմից սահմանված՝ յուրաքանչյուր հաջորդական Լողացող տոկոսադրույքի ժամանակահատվածին համարժեք EURIBOR՝ գումարած Սպրեդը:

«**Լողացող տոկոսադրույքի կողմնորոշիչ ժամանակահատված**» նշանակում է՝ Վճարման ամսաթվից մինչև համապատասխան հաջորդ Վճարման ամսաթիվն ընկած յուրաքանչյուր ժամանակահատված: Լողացող տոկոսադրույքի առաջին կողմնորոշիչ ժամանակահատվածն սկսվում է տրանշի հատկացման ամսաթվից:

«Լողացող տոկոսադրույքով տրանշ» նշանակում է՝ տրանշ, որի նկատմամբ կիրառվում է լողացող տոկոսադրույքը:

«Շրջանակային համաձայնագիր»-ը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է 2-րդ Դեկլարատիվ դրույթում:

«ՖՀՄՍ–ներ» նշանակում է՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ՝ ՀՀՄՍ-ի 1606/2002 կանոնակարգի իմաստով, որքանով դրանք կիրառելի են համապատասխան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ:

«ԱՄԿ» նշանակում է՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն:

«ԱՄԿ չափանիշներ» նշանակում է՝ Հայաստանի կողմից ստորագրված և վավերացված կամ այլ կերպ Հայաստանի նկատմամբ կիրառելի և պարտադիր՝ ԱՄԿ ցանկացած միջազգային պայմանագիր, կոնվենցիա կամ դաշնագիր և Աշխատանքի հիմնական չափանիշներ (ինչպես սահմանված է Աշխատանքում հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին ԱՄԿ հայտարարագրում):

«Իրականացման համաձայնագիր»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է Դեկլարատիվ 12-րդ դրույթում:

«Կանխավճարի փոխհատուցման դեպք» նշանակում է՝ 4.03.Ա հոդվածով նախատեսված կանխավճարի դեպք:

«ՎՎԲ փաստաթղթեր» նշանակում է՝ հավաքական ՎՎԲ-ի Վարկային համաձայնագիր, ՎՎԲ Իրականացման ֆինանսավորման համաձայնագիր և ՎՎԲ Առանձին համաձայնագիր:

«**ՎՎԲ Վարկ**»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 10-րդ Դեկլարատիվ դրույթում:

«**ՎՎԲ վարկային համաձայնագիր**»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 10-րդ Դեկլարատիվ դրույթում:

«ՎՎԲ Իրականացման ֆինանսավորման համաձայնագիր»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 12-րդ Դեկլարատիվ դրույթում:

«ՎՎԲ Առանձին համաձայնագիր» նշանակում է՝ այն համաձայնագիրը, որը կնքվելու է ՎՎԲ-ի և Վարկառուի միջև, որն առանձին է ՎՎԲ Վարկային համաձայնագրից և ՎՎԲ Իրականացման ֆինանսավորման համաձայնագրից, և որտեղ նշվում են, ի թիվս այլ հարցերի, Ծրագրի մանրամասները, հատկացման ընթացակարգերը և Ծրագրի իրականացումը (ներառյալ Վարկառուի կողմից ՎՎԲ-ին տրամադրվող՝ Ծրագրին առնչվող տեղեկատվության բովանդակությունը և ձևը, ինչպես նաև՝ Ծրագրին առնչվող նման տեղեկատվության փոխանցումը):

«Վարկ» նշանակում է՝ սույն Պայմանագրին համապատասխան՝ Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ հատկացվող տրանշների հանրագումար:

«Կառավարման պայմանագրեր»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 4-րդ Դեկլարատիվ դրույթում:

«Մանդատ»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 6-րդ Դեկլարատիվ դրույթում:

«Շուկայի խաթարման իրավիճակ» նշանակում է հետևյալ հանգամանքներից ցանկացածը.

ա) եթե, Բանկի հիմնավորված կարծիքով, առաջ են եկել դեպքեր կամ

հանգամանքներ, որոնք բացասաբար են անդրադառնում Բանկի կողմից իր ֆինանսավորման աղբյուրներին հասանելիությանը,

բ) եթե, Բանկի կարծիքով, բացակայում են ֆինանսավորման սովորական աղբյուրներից հասանելի միջոցները՝ համապատասխան արժույթով տրանշը համարժեք ֆինանսավորելու և (կամ) մարելու և (կամ) այդպիսի տրանշի հատուցման պայմանները կատարելու համար,

գ) այնպիսի տրանշի դեպքում, որի տոկոսադրույքը վճարվում է կամ կվճարվեր Լողացող տոկոսադրույքով՝

i) Բանկի պայմաններին համապատասխան ֆինանսավորման իր աղբյուրներից միջոցներ ձեռք բերելու ծախսը Բանկի համար տրանշի Լողացող տոկոսադրույքի ժամանակահատվածին հավասար ժամանակահատվածում (այսինքն՝ դրամական շուկայում) կգերազանցի կիրառելի համապատասխան EURIBOR-ը, կամ

ii) Բանկը եզրահանգում է, որ կիրառելի EURIBOR-ը սահմանելու համար անհրաժեշտ և բավարար միջոցները բացակայում են, կամ հնարավոր չէ որոշել կիրառելի համապատասխան EURIBOR-ը Բ Առդիրում ներկայացված սահմանմանը համապատասխան:

«Էական անբարենպաստ փոփոխություն» նշանակում է՝ Վարկառուի կամ Օժանդակողի կամ Վերջնական շահառուների համար ցանկացած դեպք կամ իրավիճակի փոփոխություն, ինչը, Բանկի կարծիքով, էականորեն վնասում է.

ա) Վարկառուի՝ սույն Պայմանագրի ներքո իր պարտավորությունները կատարելու կամ Ծրագրի մասով Վերջնական շահառուների պարտավորությունները կատարելու կարողությունը,

բ) Վարկառուի, Օժանդակողի կամ Վերջնական շահառուների ֆինանսական պայմանները կամ հեռանկարները, կամ

գ) Բանկին տրամադրված արժեթղթերի վավերությունը կամ կատարման ենթակա լինելը, արդյունավետությունը կամ մակարդակը, կամ արժեքը, կամ սույն Պայմանագրի ներքո Բանկի իրավունքները և իրավական պաշտպանության միջոցները:

«Մարման ամսաթիվ» նշանակում է՝ տրանշի հետվճարման վերջին ամսաթիվը՝ համաձայն 4.01-ին հոդվածի:

«Փողերի լվացում» նշանակում է.

ա) սեփականության անօրինական էությունը թաքցնելու կամ քողարկելու կամ նմանատիպ գործողություն իրականացնելու մեջ ներգրավված անձնավորությանը աջակցելու նպատակով սեփականության փոխակերպումը կամ փոխանցումը՝ իր գործողության իրավական հետևանքներից խուսափելու համար՝ իմանալով, որ

այդ սեփականությունը ծագել է քրեական գործողության կամ նման գործողությանը մասնակցության հետևանքով.

բ) սեփականության Օրենքի իրական էության, աղբյուրի, վայրի, տնօրինման, տեղաշարժի քողարկումը՝ իմանալով, որ այդ սեփականությունը ծագել է քրեական գործողության կամ նման գործողությանը մասնակցության հետևանքով.

գ) սեփականության ձեռքբերում, տիրապետում կամ օգտագործում՝ իմանալով, որ ստանալու պահին այդ սեփականությունը ծագել է քրեական գործողության կամ նման գործողությանը մասնակցության հետևանքով.

դ) վերոնշյալ կետերում նշված գործողություններում մասնակցություն, կատարելու առնչություն, կատարելու փորձեր և կատարմանը օժանդակություն, նպաստում, դյուրացում, խորհրդատվություն:

«ՀՆԳ»-ն ունի այն իմաստը, որը նրան տրված է 11-րդ Դեկլարատիվ դրույթում:

«ՀՆԳ փաստաթղթեր»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 11-րդ Դեկլարատիվ դրույթում:

«ՀՆԳ Շրջանակային համաձայնագիր»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 11-րդ Դեկլարատիվ դրույթում:

«Վերավարկավորման համաձայնագիր» նշանակում է՝ Վարկառուի, Օժանդակողի և Վերջնական շահառուների միջև վերավարկավորման համաձայնագիր, որը սահմանում է Վարկի հետագա տրամադրումը Վերջնական շահառուներին:

«Արգելված վարքագիծ» նշանակում է՝ ահաբեկչության ֆինանսավորում, փողերի լվացում կամ արգելված գործելակերպ:

«Արգելված գործելակերպ» նշանակում է՝ ցանկացած.

(i) հարկադիր գործելակերպ, որը նշանակում է ուղղակի կամ անուղղակի կերպով որևէ կողմի կամ կողմի սեփականության նկատմամբ վտանգի կամ վնասի հասցնում կամ վտանգ կամ վնաս հասցնելու սպառնալիք՝ ոչ պատշաճ կերպով կողմի գործողությունների վրա ազդելու համար.

(ii) գաղտնի համաձայնության գործելակերպ, որը նշանակում է երկու կամ ավելի կողմերի միջև պայմանավորվածություն՝ անազնիվ նպատակի հասնելու՝ ներառյալ ոչ պատշաճ կերպով կողմի գործողությունների վրա ազդելու համար.

(iii) կոռուպցիոն գործելակերպ, որը նշանակում է մի կողմից ուղղակի կամ անուղղակի կերպով արժեքավոր որևէ բան առաջարկելը, տալը, ստանալը կամ պահանջելը՝ ոչ պատշաճ կերպով կողմի գործողությունների վրա ազդելու համար.

(iv) խարդախ գործելակերպ, որը նշանակում է որևէ գործողություն կամ բացթողում՝ ներառյալ խեղաթյուրումը, որը գիտակցաբար կամ անփութորեն մոլորեցնում կամ փորձում է մոլորեցնել կողմին ֆինանսական կամ այլ շահ ստանալու կամ պատասխանատվությունից խուսափելու նպատակով, կամ

(v) խոչընդոտող գործելակերպ, որը նշանակում է, սույն Վարկի կամ Ծրագրի առնչությամբ, հարկադիր, գաղտնի համաձայնության, կոռուպցիոն կամ խարդախ գործելակերպի հետաքննության մասով՝ ա) հետաքննության իրեղեն ապացույցների միտումնավոր վերացում, կեղծում, փոփոխում կամ քողարկում և (կամ) որևէ կողմին հետաքննության առնչությամբ ունեցած իր տեղեկատվության բացահայտումը կամ հետաքննության իրականացումը կանխելու նպատակով սպառնում, ոտնձգություն կամ ահաբեկում, բ) աուդիտի պայմանագրային իրավունքների կամ տեղեկատվության հասանելիության իրականացումն էապես խաթարելուն ուղղված գործողություններ:

«Վճարման ամսաթիվ» նշանակում է՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ը և հոկտեմբերի 16-ը, մինչև Մարման ամսաթիվը՝ բացառությամբ այն դեպքերի, եթե նման ամսաթիվը Համապատասխան աշխատանքային օր չէ, ինչը նշանակում է.

ա) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի դեպքում՝ Համապատասխան հաջորդ աշխատանքային օրը՝ առանց 3.01-ին հոդվածի համաձայն տոկոսադրույքի փոփոխության, և

բ) Լողացող տոկոսադրույքով տրանշի դեպքում՝ տվյալ օրացուցային ամսվա համապատասխան հաջորդ օրը, եթե այդպիսին առկա է, որը Համապատասխան աշխատանքային օր է, կամ, հակառակ դեպքում, մոտակա նախորդ օրը, որը նույնպես Համապատասխան աշխատանքային օր է, բոլոր դեպքերում՝ 3.01-ին հոդվածի համաձայն տոկոսադրույքի համապատասխան փոփոխությամբ:

«**Կանխավճարի գումար**» նշանակում է՝ 4.02.Ա հոդվածի համաձայն՝ Վարկառուի կողմից նախապես վճարվելիք տրանշի գումար:

«Կանխավճարի ամսաթիվ» նշանակում է՝ այն ամսաթիվը, որը համարվում է Վճարման ամսաթիվ, երբ Վարկառուն առաջարկում է նախապես վճարել Կանխավճարի գումարը:

«Կանխավճարի դեպք» նշանակում է՝ այն բոլոր դեպքերը, որոնք նկարագրված են 4.03.Ա հոդվածում:

«**Կանխավճարի փոխհատուցում**» նշանակում է՝ նախնական վճարման ենթակա կամ չեղյալ հայտարարված հիմնական գումարի առնչությամբ ԵՆԲ կողմից Վարկառուին տրամադրված գումար, որը ներկայացվում է ստորև տրված ավելցուկի ընթացիկ արժեքով (Կանխավճարի ամսաթվի դրությամբ).

ա) այն տոկոսը, որը կգումարվեր Կանխավճարի գումարին դրա Վճարման ամսաթվից մինչև Մարման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում, եթե կանխավճարը կատարված չլիներ, և

բ) այն տոկոսը, որը կգումարվեր վերոնշյալ ժամանակահատվածում, եթե այն հաշվարկված լիներ Վերաբաշխման դրույքաչափով՝ 0.15% պակաս (տասնհինգ բազիսային կետ):

Վերոնշյալ ընթացիկ արժեքը հաշվարկվում է Վերաբաշխման դրույքաչափին հավասար հաշվարկային տոկոսադրույքով՝ կիրառելի յուրաքանչյուր Վճարման ամսաթվի դրությամբ:

«**Կանխավճարի վերաբերյալ ծանուցում**» նշանակում է՝ Վարկառուի կողմից Բանկին տրվող գրավոր ծանուցում՝ համաձայն 4.02.Գ հոդվածի:

«Կանխավճարի վերաբերյալ հարցում» նշանակում է՝ Վարկառուի կողմից Բանկին ուղղված գրավոր հարցում՝ կանխավճարելու համար ամբողջ Փոխառությունը կամ դրա մի մասը՝ համաձայն 4.02.Ա հոդվածի:

«**Ծրագիր**»-ը ունի 4-րդ Դեկլարատիվ դրույթում իրեն տրված նշանակությունը:

«Օժանդակող»-ը ունի այն իմաստը, որը նրան տրված է 4-րդ Դեկլարատիվ դրույթում:

«Վերաբաշխման դրույքաչափ» նշանակում է՝ Ֆիքսված տոկոսադրույքով այնպիսի փոխառությունների համար հատուցման հաշվարկման օրվա դրությամբ գործող Ֆիքսված տոկոսադրույք, որոնք արտահայտվում են նույն արժույթով, և որոնց Մարման ամսաթվի մասով ունեն տոկոսի վճարման նույն պայմանները և նույն վճարման սխեման, ինչ Տրանշի դեպքում, որի նկատմամբ առաջարկվում է կամ հայցվում է կատարել կանխավճար: Այդ դեպքերում, երբ ժամանակահատվածը ավելի կարճ է, քան 48 ամիսը (կամ 36 ամիսը՝ այդ ընթացքում հիմնական գումարի մարումը չկատարելու դեպքում), կկիրառվի արժութային շուկայում գործող ամենամոտ համարժեք դրույքաչափը, որը հավասար է EURIBOR-ից հանած 0.125% (12.5 բազիսային կետ)՝ մինչև 12 (տասներկու) ամիս տևողությամբ ժամանակահատվածի համար: 12 և 36/48 ամիսների միջև ընկած ժամանակահատվածների դեպքում կիրառվում է այն սվոպային տոկոսադրույքների մասով սակարկային դրույքը, որը հրապարակվում է «Ռոյթերզ» գործակալության կողմից համապատասխան արժույթի համար և կիրառվում է Բանկի կողմից հաշվարկման պահին:

«Համապատասխան աշխատանքային օր» նշանակում է՝ օր, երբ Իրական ժամանակի ռեժիմում խոշոր վճարումների արագ կատարման անդրեվրոպական համակարգը, որն օգտագործում է միասնական համօգտագործվող պլատֆորմը, և որը մեկնարկել է 2007 թվականի նոյեմբերի 19-ին (TARGET2), բաց է եվրոյով վճարումների համար:

«Պատժամիջոցների ենթարկված անձինք» նշանակում է՝ Պատժամիջոցների՝

մեկ կամ ավել ցանկերում ընդգրկված որևէ անհատ կամ կազմակերպություն:

«Պատժամիջոցների ցանկեր» նշանակում է.

(i) Եվրոպական միության կողմից սահմանված՝ տնտեսական, ֆինանսական և առևտրային սահմանափակիչ միջոցներ և զենքի վաճառքի արգելքներ՝ համաձայն «Եվրոպական միության մասին» պայմանագրի V բաժնի 2-րդ գլխի, ինչպես նաև «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 215-րդ հոդվածի, ինչը հասանելի է ԵՄ պաշտոնական վեբ-կայքերում՝ http://eeas.europa.eu/cfsp/sanctions/consol-list/index_en.htm և http://eeas.europa.eu/cfsp/sanctions/docs/measures_en.pdf-ում, որոնք ժամանակ առ ժամանակ փոփոխվում և լրացվում են, կամ՝ ցանկացած հաջորդ էջում, կամ

(ii) Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի կողմից սահմանված՝ տնտեսական, ֆինանսական և առևտրային սահմանափակիչ միջոցներ և զենքի վաճառքի արգելքներ՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ հոդվածի, ինչը հասանելի է ՄԱԿ-ի պաշտոնական վեբ-կայքում՝ http://www.un.org/Docs/sc/committeess/INTRO.htm, որը ժամանակ առ ժամանակ փոփոխվում և լրացվում է, կամ՝ ցանկացած հաջորդ էջում:

«**Հատկացման սահմանված ամսաթիվ»** նշանակում է՝ այն ամսաթիվը, երբ 1.02.Գ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է հատկացնել տրանշ:

«**Ապահովում**» նշանակում է՝ ցանկացած հիպոտեկ՝ սեփականության իրավունքը գրավատուին փոխանցելով, գրավ, սեփականության պահման իրավունք, փոխանցում, հիպոտեկ՝ սեփականության իրավունքը գրավատուին չփոխանցելով, կամ որևէ անձի պարտավորությունները ապահովող այլ գրավային փաստաթուղթ կամ համանման իրավական ուժ ունեցող ցանկացած այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն:

«Սոցիալական իրավունք» նշանակում է ստորև նշվածներից յուրաքանչյուրը.

ա) սոցիալական հարցերին առնչվող՝ Հայաստանում կիրառվող ցանկացած օրենք, կանոն կամ կանոնակարգ,

բ) ԱՄԿ ցանկացած չափանիշ,

գ) Հայաստանի կողմից ստորագրված և վավերացված կամ այլ կերպ Հայաստանի նկատմամբ կիրառելի և պարտադիր՝ մարդու իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած պայմանագիր, կոնվենցիա կամ դաշնագիր:

«Սոցիալական հարցեր» նշանակում է՝ նշվածներից բոլորը կամ որևէ մեկը՝ i) աշխատանքային և զբաղվածության պայմաններ**,** ii) աշխատավայրում առողջապահություն և անվտանգություն, iii) բնիկների, էթնիկ փոքրամաս-

նությունների և խոցելի խմբերի իրավունքների ու շահերի ապահովում և պաշտպանություն, iv) մշակութային ժառանգություն (նյութական և ոչ նյութական), v) հանրային առողջապահություն, ապահովություն և անվտանգություն, vi) ոչ կամավոր ֆիզիկական վերաբնակեցում և (կամ) տնտեսական տեղահանում և անձանց ապրուստի կորուստ և vii) հանրային մասնակցություն և շահառուի ներգրավվածություն:

«Սպրեդ» նշանակում է՝ 73,8 բազիսային կետ [յոթանասուներեք ամբողջ ութ տասնորդական բազիսային կետ]:

«Շահառուի ներգրավվածության պլան» նշանակում է՝ Շահառուի ներգրավվածության պլան՝ մշակված առաջարկված Ծրագրի առնչությամբ և հաստատված Բանկի կողմից:

«Հարկ» նշանակում է՝ ցանկացած հարկ, հավաքագրում, գանձում, տուրք կամ համանման բնույթի ցանկացած այլ գանձում և պահում (ներառյալ վերոնշյալ վճարումները չկատարելու կամ դրանք հետաձգելու համար սահմանված ցանկացած տուգանքը կամ տոկոսավճարը):

«Տեխնիկական նկարագրություն»-ը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է 4-րդ Դեկլարատիվ դրույթում:

«Տրանշ» նշանակում է՝ սույն Պայմանագրի համաձայն կատարված կամ կատարվելիք յուրաքանչյուր հատկացում: Այն դեպքում, երբ չի ստացվել որևէ Հատկացման ընդունումը, տրանշ-ը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է 1.02.Բ հոդվածում:

ՀՈԴՎԱԾ 1

Վարկը և հատկացումները

1.01. Փոխառության գումարը

Սույն Պայմանագրով Բանկը հօգուտ Վարկառուի որոշում է կայացնում Ծրագիրը ֆինանսավորելու նպատակով տրամադրել 25,500,000 եվրո (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար եվրո) գումարի չափով փոխառություն (**Վարկ**):

1.02. Հատկացման ընթացակարգը

1.02.Ա. **Տրանշները**

Բանկի կողմից Փոխառությունը հատկացվում է առավելագույնը 10 (տասը) տրանշով: Յուրաքանչյուր տրանշի գումարը, եթե այն չի համարվում Փոխառության չօգտագործված մաս, նվազագույնը կազմում է 2,500,000 ԱՄՆ դոլար (երկու միլիոն հինգ հարյուր հազար եվրո):

1.02.Բ. **Հատկացման առաջարկը**

Վարկառուի կողմից հարցման դեպքում և պայմանով, որ 1.06.Բ հոդվածում նշված որևէ իրավիճակ չի առաջացել կամ չի շարունակվում, Բանկը տրանշի հատկացման նպատակով Վարկառուին ուղարկում է Հատկացման առաջարկ: Վարկառուն Հատկացման առաջարկը ստանում է Միջոցների ստացման վերջնաժամկետից ամենաուշը 10 (տասը) օր առաջ: Հատկացման առաջարկում նշվում են.

ա) Տրանշի գումարը,

բ) Հատկացման սահմանված ամսաթիվը, որը համարվում է Համապատասխան աշխատանքային օր և համարվում է Հատկացման առաջարկի ամսաթվից առնվազն 10 (տասը) օր հետո կամ Միջոցների ստացման վերջնաժամկետի ամսաթվի օրը կամ դրանից առաջ,

գ) Տրանշի տոկոսադրույքը, այն է՝ i) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշ, կամ (ii) Լողացող տոկոսադրույքով տրանշ, յուրաքանչյուր դեպքում՝ 3.01-ին հոդվածի համապատասխան դրույթների համաձայն,

դ) Տրանշի համար տոկոսադրույքի վճարման պարբերականությունը՝ 3.01-ին հոդվածի դրույթներին համապատասխան,

ե) Տրանշի առաջին Վճարման ամսաթիվը,

զ) Տրանշի հիմնական գումարի մարման պայմանները՝ 4.01-ին հոդվածի դրույթներին համապատասխան,

է) Տրանշի հիմնական գումարի մարման առաջին և վերջին ամսաթվերը,

ը) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի դեպքում՝ Ֆիքսված տոկոսադրույքը, իսկ Լողացող տոկոսադրույքով տրանշի դեպքում՝ Սպրեդը, որը կիրառելի կլինի մինչև Մարման ամսաթիվը, և

թ) Հատկացման ընդունման վերջնաժամկետը:

1.02.Գ. **Հատկացման ընդունումը**

Վարկառուն կարող է ընդունել հատկացման առաջարկը՝ Հատկացման ընդունման վերաբերյալ ծանուցումը Բանկին ուղարկելով Հատկացման ընդունման վերջնաժամկետից ոչ ուշ: Հատկացման ընդունման վերաբերյալ ծանուցմանը կից ներկայացվում են.

ա) IBAN ծածկագիրը և ԵՆԲ Վարկային հաշվի SWIFT BIC-ը, որին, 1.02.Դ հոդվածին համապատասխան, կատարվում է Տրանշի հատկացումը, և

բ) Հատկացման ընդունման վերաբերյալ ծանուցումն ստորագրելու լիազորությամբ օժտված անձի կամ անձանց, այդ անձի կամ անձանց ստորագրությունների նմուշների հաստատումը:

Կասկածներից խուսափելու համար, եթե Վարկառուն չի տրամադրում վերոնշյալ *ա)* և *բ)* կետերում սահմանված նոր հատկացմանն առնչվող ապացույցն ու փաստաթղթերը համապատասխան Հատկացման ընդունման հետ միաժամանակ, ապա Բանկը կարող է ենթադրել, որ նախկինում տրամադրված IBAN ծածկագիրը SWIFT BIC-ը և լիազորագիրը շարունակում են վավեր և կիրառելի լինել:

Եթե Հատկացման առաջարկը պատշաճ կերպով ընդունվում է Վարկառուի կողմից՝ սահմանված կարգով, մինչև Հատկացման ընդունման վերջնաժամկետը կամ դրանից առաջ, ապա Բանկը, Հատկացման առաջարկին համապատասխան և սույն Պայմանագրի պայմանների համաձայն, Վարկառուին տրամադրում է Ընդունված տրանշը:

Համարվում է, որ Վարկառուն մերժել է ցանկացած Հատկացման առաջարկ, եթե այն չի ընդունվել սահմանված կարգով՝ Հատկացման ընդունման վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ:

1.02.Դ. **Հատկացման հաշիվը**

Հատկացումը կատարվում է ԵՆԲ Վարկային հաշվին, որի մասին Վարկառուն գրավոր տեղեկացնում է Բանկին ոչ ուշ, քան ժամանակացույցով Հատկացման սահմանված ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ (IBAN ծածկագրով): ԵՆԲ Վարկային հաշիվը Վարկառուի սեփական բանկային հաշիվն է:

Միայն մեկ հաշիվ կարող է սահմանվել որպես ԵՆԲ Վարկային հաշիվ:

1.03. <u>Հատկացման արժույթը</u>

Բանկի կողմից յուրաքանչյուր Տրանշի հատկացումը կատարվում է եվրոյով:

1.04. <u>Հատկացումների պայմանները</u>

1.04.Ա. **Առաջին տրանշը**

Առաջին տրանշի հատկացումը, 1.02-րդ հոդվածին համապատասխան պայմանավորվում է Բանկի կողմից՝ իր պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ, Հատկացման սահմանված ամսաթվից առաջ 5-րդ (հինգ) աշխատանքային օրը կամ դրանից առաջ հետևյալ փաստաթղթերը կամ հաստատումները ստանալով.

ա) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տրամադրված՝ անգլերենով կազմված իրավական եզրակացություն Վարկառուի կողմից սույն Պայմանագրի պահանջները պատշաճ կերպով կատարվելու, դրանք կատարման ենթակա լինելու և պարտադիր բնույթ ունենալու վերաբերյալ: Նման իրավական եզրակացությունը պետք է հիմնավորված լինի կամ դրան կից պետք է ներկայացվեն Վարկառուի՝ սույն Պայմանագիրը կնքելու լիազորությունը հաստատող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան, սույն Պայմանագրի պատշաճ վավերացումը հաստատող փաստաթղթերը,

բ) անգլերենով կազմված հաստատում, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը սույն Պայմանագիրը Վարկառուի կողմից և անունից ստորագրելու համար համապատասխան լիազորությամբ է օժտված,

գ) հաստատում, որ Վարկառուն և Վերջնական Շահառուները ունեն սույն Պայմանագրի և Ծրագրի հետ առնչվող բոլոր անհրաժեշտ թույլտվությունները,

դ) ծառայության գործակալի կողմից իր նշանակման վերաբերյալ հաստատումը,

ե) հաստատում, որ Վերջնական Շահառուները, եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի, ՎՎԲ-ի և Հանձնաժողովի (կամ, առկայության դեպքում, այլ համաֆինանսավորողների) հետ, վարձել են, կվարձեն կամ կապահովեն և (կամ) օգտվում են կամ կօգտվեն այնպիսի խորհրդատուների ծառայություններից, որոնց որակավորումը, մասնագիտական փորձը և տեխնիկական առաջադրանքները համապատասխանում են Բանկի պահանջներին, ներառյալ այն աշխատողները և (կամ) խորհրդատուները, ովքեր աջակցություն են տրամադրում ծրագրի իրականացմանը,

զ) Բանկի կողմից սահմանված կամ *ա)* պարբերությամբ նախատեսված իրավական եզրակացության մեջ նշված արժութային հսկողությանն առնչվող ցանկացած համաձայնություն, որը Վարկառուին անհրաժեշտ է հատկացումներն ստանալու, Վարկը հետ վճարելու, տոկոսները վճարելու և սույն Պայմանագրով նախատեսված այլ վճարումներ կատարելու համար, պատշաճ կերպով ստացվել են, վավեր են և ենթակա են կատարման,

է) գնահատման վճարի ամբողջական կատարման հաստատումը՝ 1.08-րդ հոդվածին համապատասխան,

ը) հաստատում, որ ՎՎԲ-ի Փաստաթղթերը (ինչպես սահմանված է) և ԵՄ Պատվիրակման համաձայնագիրը պատշաճ կերպով կատարվել և ներկայացվել են, և դրանց ուժի մեջ մտնելուն նախորդող բոլոր պայմանները կատարվել են, կամ դրանց կատարումը մերժվել է, և որ Վարկառուն իրավասու է մասհանումներ կատարելու դրա ներքո,

թ) հաստատում, որ, Բանկի պահանջների համաձայն, Վարկառուի, Օժանդակողի և Վերջնական շահառուների միջև կնքվել է Վերավար-կավորման համաձայնագիր Բանկին բավարարող պայմաններով:

1.04.Բ. **Երկրորդ տրանշը**

Առանց հակասելու այն պայմաններին, որոնք իբրև նախադեպ պահանջվում են 1.04.Գ հոդվածով (*Բոլոր տրանշները*) սահմանված բոլոր տրանշների առնչությամբ, 1.02-րդ հոդվածի համաձայն՝ երկրորդ տրանշի հատկացումը պայմանավորվում է Բանկի կողմից վերջինիս պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ ծանուցումն ստանալով, Հատկացման սահմանված ամսաթվից առաջ 5-րդ (հինգերորդ) Աշխատանքային օրը կամ դրանից առաջ, հաստատում, որ ցանկացած անհրաժեշտ ապահովագրական վկայագիր ձեռք է բերվել 6.05-րդ հոդվածին համապատասխան:

1.04.Գ. **Բոլոր տրանշները**

Յուրաքանչյուր տրանշի հատկացումը, 1.02-րդ հոդվածի համաձայն, պայմանավորվում է հետևյալով.

ա) Բանկի կողմից՝ իր պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ (բացառապես իր հայեցողությամբ) և Հատկացման սահմանված ամսաթվից 7 (յոթ) Աշխատանքային օր առաջ կամ դրանից շուտ հետևյալ փաստաթղթերը կամ հաստատումները ստանալուն պես.

i) Դ Առդիրում ներկայացված ձևանմուշի համաձայն՝ Վարկառուի կողմից տրամադրված հավաստագիր՝ ստորագրված Վարկառուի լիազորված ներկայացուցչի կողմից և թվագրված Հատկացման

սահմանված ամսաթվից ոչ շուտ, քան երեսուն օր առաջ,

ii) հաստատում, որ Հատկացման ընդունումը ստորագրելու լիազորություն ունեցող անձը կամ անձինք օժտված են այդ լիազորությամբ, ինչպես նաև՝ այդ անձի կամ անձանց ստորագրությունների հաստատված նմուշները,

iii) բացառությամբ առաջին տրանշի հատկացման դեպքի՝ հաստատումներ, որ ՎՎԲ-ի Վարկային համաձայնագիրը, ՎՎԲ-ի Իրականացման ֆինանսավորման համաձայնագիրը և ՀՆԳ փաստաթղթերը շարունակում են ամբողջությամբ մնալ ուժի մեջ, վավերական են, կատարման ենթակա, և հատկացման բոլոր պայմանները կատարված են,

iv) հաստատում, որ Շրջանակային համաձայնագիրը վավերական է, ունի պարտադիր իրավաբանական ուժ և ենթակա է կատարման, և որ առաջ չի եկել որևէ դեպք կամ հանգամանք, որը, Բանկի հիմնավորված կարծիքի համաձայն, կարող էր բացասաբար անդրադառնալ Շրջանակային համաձայնագրի իրավական, պարտադիր և կատարման ենթակա լինելու բնույթի վրա,

v) ցանկացած այլ թույլտվության կամ որևէ այլ փաստաթղթի, եզրակացության կամ հավաստիացման պատճենը, որոնց վերաբերյալ Բանկը Վարկառուին ծանուցել է, որ դրանք անհրաժեշտ կամ ցանկալի են Ֆինանսական պայմանագրի ուժի մեջ մտնելու, կատարման և սույն Պայմանագրով, Ծրագրի իրականացման համաձայնագրով նախատեսված գործարքների, կամ դրանց վավերության և կատարման ենթակա լինելու համար,

vi) հաստատում, որ համապատասխան տրանշն օգտագործելուց հետո Վարկի հանրագումարը չի գերազանցի Վարկառուի կամ Վերջնական շահառուների կողմից Ծրագրի շրջանակներում մինչև համապատասխան Հատկացման առաջարկի ամսաթիվը կատարված ծախսերի հանրագումարը կամ համապատասխան Հատկացման առաջարկի օրվանից 12 ամսվա համար Պայմանագրով նախատեսված ծախսերի հանրագումարը, և

vii) բացառությամբ առաջին տրանշի հատկացման մասով՝ հաստատում, որ Վերավարկավորման համաձայնագիրը շարունակում է ամբողջությամբ ուժի մեջ մնալ, վավերական է և կատարման ենթակա, հատկացման բոլոր պայմանները կատարվել են, և՝

բ) որ Հատկացման ամսաթվի դրությամբ առաջարկվող Տրանշի առնչությամբ՝

i) 6.07-րդ հոդվածի համաձայն՝ կրկնվող հավաստիացումներն ու երաշխիքները բոլոր առումներով ճշգրիտ են, և

ii) ԵՄ Երաշխիքը վավերական է, ունի պարտադիր իրավաբանական ուժ, ենթակա է կատարման, և որ առաջ չի եկել որևէ դեպք կամ հանգամանք, որը, Բանկի հիմնավորված կարծիքի համաձայն, կարող էր բացասաբար անդրադառնալ ԵՄ Երաշխիքի օրինական, վավերական, պարտադիր և կատարման ենթակա լինելու բնույթի կամ դրա ներքո Բանկի կողմից պահանջ ներկայացվելու վրա, և

(iii) Շրջանակային համաձայնագիրը ամբողջությամբ ուժի մեջ է, վավերական, կատարման ենթակա, և չի առաջացել որևէ իրավիճակ կամ հանգամանք, որը կարող է, Բանկի հիմնավորված կարծիքով, բացասաբար ազդել Շրջանակային համաձայնագրի օրինական, վավերական, պարտադիր և կատարման ենթակա լինելու բնույթի վրա,

(iv) արժութային հսկողությանն առնչվող բոլոր համաձայնությունները, որոնք, Բանկի կարծիքով, անհրաժեշտ կամ ցանկալի են՝ Վարկառուին թույլատրելու համար ստանալ հատկացումները, վճարել տոկոսները և հետ վճարել ցանկացած փոխառություն դրա ներքո, շարունակում են ամբողջությամբ ուժի և գործողության մեջ մնալ,

(v) որևէ իրավիճակ կամ հանգամանք, որն առաջացնում է կամ կարող է ժամանակի ընթացքում կամ սույն Պայմանագրի համաձայն այդ մասին ծանուցելու դեպքում առաջացնել՝

Ա) Պարտավորության չկատարման դեպք, կամ

Բ) Կանխավճարի դեպք,

չի առաջացել և չի շարունակում մնալ չշտկված կամ մերժված կամ առաջարկվող Տրանշից բխող:

1.05. <u>Հատկացման հետաձգումը</u>

1.05.Ա. **Հետաձգման հիմքերը**

Վարկառուի գրավոր հարցման դեպքում Բանկը կարող է մասամբ կամ ամբողջությամբ հետաձգել ցանկացած Ընդունված տրանշի հատկացումը մինչև Վարկառուի նշած ամսաթիվը, որը պետք է լինի Հատկացման սահմանված ամսաթվից 6 (վեց) ամսից ոչ ուշ և Հատկացման առաջարկում նշված՝ Տրանշի մարման օրվան նախորդող 60 (վաթսուն) օրվանից ոչ ուշ: Նման դեպքում Վարկառուն վճարում է Հետաձգման փոխհատուցում, որը հաշվարկվում է հետաձգված Հատկացման գումարի հիման վրա:

Հետաձգման վերաբերյալ ցանկացած հարցում տվյալ տրանշի մասով ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, եթե այն ներկայացվել է Հատկացման

սահմանված ամսաթվից առնվազն 5 (հինգ) Աշխատանքային օր առաջ:

Եթե սահմանված ամսաթվի և Հատկացման սահմանված ամսաթվի դրությամբ (կամ հատկացման ակնկալվող ամսաթվին, եթե նախորդ հատկացումը հետաձգվել է) 1.04-րդ հոդվածում նշված պայմաններից որևէ մեկը չի կատարվել, հատկացումը կհետաձգվի մինչև Բանկի և Վարկառուի միջև համաձայնեցված ամսաթիվը, որը պետք է լինի ոչ շուտ, քան հատկացման բոլոր պայմանները կատարելու օրվանից 5 (հինգ) Աշխատանքային օր հետո (առանց, 1.06.Բ հոդվածի համաձայն, Վարկի չհատկացված բաժինն ամբողջությամբ կամ մասամբ ժամանակավորապես կասեցնելու և (կամ) չեղյալ հայտարարելու՝ Բանկի իրավունքը սահմանափակելու): Նման դեպքում Վարկառուն Բանկին վճարում է Հետաձգման փոխհատուցում, որը հաշվարկվում է Հետաձգված հատկացման գումարի հիման վրա:

1.05.Բ. **6 (վեց) ամսով հետաձգված հատկացումը չեղյալ հայտարարելը**

Բանկն իրավունք ունի, այդ մասին գրավոր ծանուցելով Վարկառուին, չեղյալ հայտարարելու , 1.05.Ա հոդվածի համաձայն, ընդհանուր առմամբ ավելի քան 6 (վեց) ամսով հետաձգված հատկացումը: Չեղյալ հայտարարված հատկացման գումարը շարունակում է հասանելի մնալ հատկացման համար՝ 1.02-րդ հոդվածին համապատասխան:

1.06. <u>Չեղյալ հայտարարելը և կասեցնելը</u>

1.06.Ա.**Վարկառուի չեղյալ հայտարարելու իրավունքը**

Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ Բանկին գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով ամբողջությամբ կամ մասամբ չեղյալ հայտարարել Վարկի չհատկացված մասը, ընդ որում՝ այդ որոշումն ուժի մեջ է մտնում անմիջապես: Այնուամենայնիվ, ծանուցումը ոչ մի ազդեցություն չի ունենում Ընդունված տրանշի առնչությամբ, որի Հատկացման սահմանված ամսաթիվը, ծանուցման ամսաթվից սկսած, 5 (հինգ) Աշխատանքային օրվա ընթացքում է:

1.06.Բ. **Կասեցնելու և չեղյալ հայտարարելու Բանկի իրավունքը**

ա) Բանկը կարող է, այդ մասին Վարկառուին գրավոր ծանուցելով, ամբողջությամբ կամ մասամբ կասեցնել և (կամ) չեղյալ հայտարարել Փոխառության չհատկացված մասնաբաժինը, ընդ որում՝ այդ որոշումն ուժի մեջ է մտնում անմիջապես, եթե առաջ է եկել դեպք կամ իրադարձություն, որը հետագայում կարող է, սույն Պայմանագրի համաձայն, համապատասխան ծանուցման միջոցով համարվել Կանխավճարի կամ Պարտավորության չկատարման դեպք:

բ) Բանկը նաև կարող է Շուկայի խաթարման իրավիճակ առաջանալու դեպքում կասեցնել Փոխառության այն մասը, որի վերաբերյալ ինքը չի ստացել Հատկացման ընդունման վերաբերյալ ծանուցում, ընդ որում՝ այդ

մասին որոշումն ուժի մեջ է մտնում անմիջապես:

գ) Ցանկացած կասեցում շարունակում է ուժի մեջ մնալ մինչև Բանկի կողմից այն դադարեցնելու կամ կասեցված գումարը չեղյալ հայտարարելու վերաբերյալ որոշում կայացվելը:

1.06.Գ. **Տրանշը կասեցնելու և չեղյալ հայտարարելու համար նախատեսված հատուցումը**

1.06.Գ.1) ԿԱՍԵՑՆԵԼԸ

Կանխավճարի փոխհատուցման դեպքի կամ Պարտավորության չկատարման դեպքի առաջացման պատճառով Բանկի կողմից Ընդունված տրանշը կասեցվելու դեպքում Վարկառուն Բանկին վճարում է հետաձգման հատուցում, որը հաշվարկվում է կասեցված Հատկացման գումարի հիման վրա:

1.06.Գ.2) ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

ա) Եթե Վարկառուն, 1.06.Ա հոդվածին համապատասխան, չեղյալ է հայտարարում.

i) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշը, որը Ընդունված տրանշ է, ապա Վարկառուն հատուցում է կատարում Բանկին 4.02.Բ հոդվածով սահմանված կարգով, և

ii) Լողացող տոկոսադրույքով տրանշը, որն Ընդունված տրանշ է, կամ Վարկի որևէ այլ մասնաբաժին, որն Ընդունված տրանշի մաս չէ, ապա փոխհատուցում չի կատարվում:

բ) Եթե Բանկը չեղյալ է հայտարարում.

i) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշը, որն Ընդունված տրանշ է, Կանխավճարի փոխհատուցման դեպքի կամ 1.05.Բ հոդվածում նշված իրավիճակի պատճառով, ապա Վարկառուն Բանկին վճարում է Կանխավճարի փոխհատուցումը, և

ii) Ընդունված տրանշը՝ Պարտավորության չկատարման դեպքի առաջացման պատճառով, ապա Վարկառուն Բանկին փոխհատուցում է կատարում 10.03-րդ հոդվածով սահմանված կարգով:

Բացառությամբ վերոնշյալ դեպքերի՝ Բանկի կողմից Տրանշը չեղյալ հայտարարվելու բոլոր մյուս դեպքերում փոխհատուցում չի վճարվում:

Փոխհատուցումը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով. չեղյալ հայտարարված գումարը հատկացված էր և մարված Հատկացման սահմանված ամսաթվին կամ այնքանով, որքանով տվյալ պահին Տրանշի հատկացումը հետաձգված կամ կասեցված էր չեղյալ հայտարարելու մասին

ծանուցումն ստանալու օրվա դրությամբ:

1.07. <u>Չեղյալ հայտարարելը Փոխառության ժամկետը լրանալուց հետո</u>

Միջոցների ստացման վերջնաժամկետին հաջորդող օրը, եթե Բանկի կողմից գրավոր այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Փոխառության այն մասը, որի վերաբերյալ, 1.02.Գ հոդվածի համաձայն, Հատկացման ընդունում չի կատարվել, ինքնաբերաբար չեղյալ է հայտարարվում՝ առանց Բանկի կողմից Վարկառուին որևէ ծանուցում ուղարկվելու և առանց Կողմերից որևէ մեկի նկատմամբ որևէ պարտավորություն առաջացնելու:

1.08. <u>Գնահատման վճարը</u>

Վարկառուն վճարում է կամ ապահովում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 15 օրվա ընթացքում գնահատման վճարի կատարումը Բանկին, որը կատարվում է Ծրագրի հետ կապված՝ Բանկի կողմից իրականացված գնահատման դիմաց: Գնահատման վճարի գումարը կազմում է 50 000 եվրո (հիսուն հազար եվրո):

1.09. <u>1-ին հոդվածի համաձայն վճարման ենթակա գումարները</u>

1.05-րդ և 1.06-րդ հոդվածներով նախատեսված գումարները ենթակա են վճարման եվրոյով: Դրանք վճարվում են Վարկառուի կողմից՝ Բանկի պահանջագիրն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա կամ Բանկի պահանջագրում նշված որևէ ավելի երկար ժամկետի ընթացքում:

<u>ՀՈԴՎԱԾ 2</u>

<u>Վարկը</u>

2.01. <u>Վարկի գումարը</u>

Վարկը կազմված է տրանշների հանրագումարից, որոնք Փոխառության շրջանակներում հատկացվում են Բանկի կողմից, ինչպես հաստատված է Բանկի կողմից՝ համաձայն 2.03-րդ հոդվածի:

2.02. <u>Հետվճարման արժույթը, տոկոսը և այլ գանձումներ</u>

Յուրաքանչյուր տրանշի համար տոկոսները, հետվճարումները և այլ գանձումները Վարկառուի կողմից վճարվում են եվրոյով:

Ցանկացած այլ վճարում կատարվում է Բանկի կողմից սահմանված արժույթով՝ հաշվի առնելով այն ծախսերի արժույթը, որոնք ենթակա են փոխհատուցման այդպիսի վճարման միջոցով:

2.03. <u>Բանկի կողմից հաստատումը</u>

Յուրաքանչյուր տրանշի հատկացումից հետո՝ 10 (տասը) օրվա ընթացքում,

Բանկը Վարկառուին փոխանցում է 4.01-ին հոդվածում նշված մարման ժամանակացույցի աղյուսակը՝ անհրաժեշտության դեպքում նշելով Հատկացման ամսաթիվը, արժույթը, հատկացված գումարը և այդ տրանշի հետվճարման պայմաններն ու տոկոսադրույքը:

ՀՈԴՎԱԾ 3
Տոկոսը

3.01. Տոկոսադրույքը

3.01.Ա. **Ֆիքսված տոկոսադրույքով տրանշները**

Վարկառուն տոկոսի վճարումը մասերով կատարում է Ֆիքսված տոկոսադրույքով յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ Ֆիքսված տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով, Հատկացման առաջարկում նշված համապատասխան Վճարման ամսաթվերին՝ սկսած տրանշի հատկացման օրվան հաջորդող առաջին Վճարման ամսաթվից: Եթե հատկացման օրվա և առաջին Վճարման ամսաթվի միջև ժամանակահատվածը 30 (երեսուն) օր կամ պակաս է, ապա այդ ժամանակահատվածում կուտակված տոկոսի վճարումը հետաձգվում է մինչև հաջորդ Վճարման ամսաթիվը:

Տոկոսը հաշվարկվում է 5.01.ա) հոդվածով սահմանված կարգով:

3.01.Բ. **Լողացող տոկոսադրույքով տրանշները**

Վարկառուն տոկոսի վճարումը մասերով կատարում է Լողացող տոկոսադրույքով յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ Լողացող տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով, Հատկացման առաջարկում նշված համապատասխան Վճարման ամսաթվերին՝ սկսած տրանշի հատկացման ամսաթվին հաջորդող առաջին Վճարման ամսաթվից: Եթե հատկացման օրվանից մինչև առաջին Վճարման ամսաթիվը 30 (երեսուն) օր կամ պակաս է, ապա այդ ժամանակահատվածում կուտակված տոկոսի վճարումը հետաձգվում է մինչև հաջորդ Վճարման ամսաթիվը:

Բանկը Վարկառուին ծանուցում է Լողացող տոկոսադրույքի մասին՝ Լողացող տոկոսադրույքի սկզբնական յուրաքանչյուր ժամանակահատվածի մեկնարկից հետո՝ 10 (տասը) օրվա ընթացքում:

Եթե, համաձայն 1.05-րդ և 1.06-րդ հոդվածների, Լողացող տոկոսադրույքով որևէ տրանշի հատկացում կատարվում է Հատկացման սահմանված ամսաթվից հետո, ապա Լողացող տոկոսադրույքի սկզբնական ժամանակահատվածի համար կիրառելի EURIBOR-ը որոշվում է այնպես,

ինչպես կորոշվեր, եթե հատկացումը կատարվեր Հատկացման սահմանված ամսաթվին:

Լողացող տոկոսադրույքի կողմնորոշիչ ժամանակահատվածի համար տոկոսը հաշվարկվում է 5.01.բ) հոդվածի համաձայն: Եթե Լողացող տոկոսադրույքի կողմնորոշիչ ժամանակահատվածի համար Լողացող տոկոսադրույքը զրոյից ցածր է, ապա այն սահմանվում է զրո:

3.02. <u>Ժամկետանց գումարների դիմաց տոկոսները</u>

Չխախտելով 10-րդ հոդվածը և բացառություն կատարելով 3.01-ին հոդվածից՝ սույն Պայմանագրի պայմանների ներքո վճարվելիք ցանկացած ժամկետանց գումարի դիմաց գանձվում են տոկոսներ՝ վճարման ենթակա ամսաթվից մինչև վճարման ամսաթիվը, տարեկան տոկոսադրույքով, որոնք համարժեք են՝

ա) Լողացող տոկոսադրույքով տրանշների հետ կապված ուշացած գումարների համար՝ կիրառելի Լողացող տոկոսադրույքին գումարած 2% (200 բազիսային կետ),

բ) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշների հետ կապված որևէ ուշացած գումարի համար՝ այն, որն ավելի բարձր է. ա) կիրառելի Ֆիքսված տոկոսադրույքին գումարած 2% (200 բազիսային կետ) կամ բ) EURIBOR-ին՝ գումարած 2% (200 բազիսային կետ),

գ) եթե ուշացած գումարները տարբերվում են վերը բերած i կամ ii կետերում նշված գումարներից, ապա՝ EURIBOR-ին գումարած 2% (200 բազիսային կետ),

և ենթակա են վճարման Բանկի պահանջի համաձայն: Սույն 3.02-րդ հոդվածի մասով համապատասխան EURIBOR-ը սահմանելու նպատակով համապատասխան ժամանակահատվածները, Բ Առդիրի իմաստով, պետք է լինեն մեկամսյա հաջորդական ժամանակահատվածներ՝ վճարման սահմանված ամսաթվից սկսած:

Եթե ուշացած գումարի արժույթը տարբերվում է Վարկի արժույթից, ապա կիրառվում է հետևյալ տարեկան տոկոսադրույքը. միջբանկային համապատասխան տոկոսադրույքին, որը սովորաբար պահվում է Բանկի կողմից այդ արժույթով կատարվող գործարքների համար, գումարած 2% (200 բազիսային կետ)՝ հաշվարկված այդպիսի տոկոսադրույքի համար գործող շուկայական գործելակերպին համապատասխան:

3.03. <u>Շուկայի խաթարման իրավիճակը</u>

Կոնկրետ Ընդունված տրանշի մասով, եթե որևէ պահի առաջանում է Շուկայի խաթարման իրավիճակ՝ i) սույն Պայմանագրի ստորագրման ամսաթվի և ii) Հատկացման սահմանված ամսաթվին նախորդող 2 (երկու) Աշխատանքային օրվա միջև ընկած ժամանակահատվածում, Բանկը կարող է Վարկառուին տեղեկացնել նշված դրույթն ուժի մեջ մտնելու մասին: Նման դեպքերում կիրառվում են հետևյալ կանոնները.

ա) այդպիսի Ընդունված տրանշի նկատմամբ կիրառելի՝ մինչև Մարման ամսաթիվը գործող տոկոսադրույքը պետք է լինի Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքը (արտահայտված տարեկան տոկոսադրույքով), որը հանդիսանում է համապատասխան տրանշի ֆինանսավորման Բանկի ամբողջ ծախսը, որը հիմնված է Բանկի ներքին համակարգում առաջացած կիրառվելիք բազային տոկոսադրույքի վրա
կամ Բանկի կողմից սահմանված՝ տոկոսադրույքի որոշման այլընտրանքային մեթոդի վրա: Վարկառուն իրավունք ունի ծանուցման մեջ նշված վերջնաժամկետներում գրավոր հրաժարվել այդպիսի հատկացումից՝ կրելով արդյունքում ծագած ծախսերը, եթե այդպիսիք առաջացել են, որի դեպքում Բանկը չի իրականացնում հատկացումը, և համապատասխան Փոխառությունը հասանելի է մնում հատկացման համար 1.02.Բ հոդվածի ներքո: Եթե Վարկառուն ժամանակին չի հրաժարվում հատկացումից, Կողմերը պայմանավորվում են, որ հատկացումը և դրա պայմաններն ամբողջությամբ պարտադիր են երկու Կողմերի համար, և

բ) Հատկացման առաջարկում Բանկի կողմից նախկինում նշված Սպրեդը կամ Ֆիքսված տոկոսադրույքը և սույն Պայմանագրում նշված Սպրեդն այլևս չեն գործում:

ՀՈԴՎԱԾ 4

Հետվճարումը

4.01. Սովորական հետվճարումը

4.01.Ա. **Հետվճարումը մասնաբաժիններով**

ա) Վարկառուն յուրաքանչյուր տրանշ հետ է վճարում մասնաբաժիններով, համապատասխան Հատկացման առաջարկում սահմանված Վճարման ամսաթվերին՝ համաձայն 2.03-րդ հոդվածում նշված մարման ժամանակացույցի:

բ) Յուրաքանչյուր մարման ժամանակացույց կազմվում է հետևյալ կարգով.

i) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի դեպքում հետվճարումը կատարվում է կիսամյակային կտրվածքով՝ հիմնական գումարի հավասար մասնաբաժիններով կամ հիմնական գումարի կայուն մասնա-

բաժիններով՝ գումարած տոկոսը,

ii) Լողացող տոկոսադրույքով տրանշի դեպքում հետվճարումը կատարվում է հիմնական գումարի հավասար կիսամյակային վճարումներով,

iii) յուրաքանչյուր տրանշի առաջին հետվճարման ամսաթիվը սահմանվում է որպես Վճարման ամսաթիվ, որն ընկնում է Հատկացման սահմանված ամսաթվից ոչ շուտ, քան 60 օր առաջ, և ոչ ուշ, քան առաջին Վճարման ամսաթիվը, որն անմիջապես հաջորդում է տրանշի Հատկացման սահմանված ամսաթվի 5 (հինգերորդ) տարվան, և

iv) յուրաքանչյուր տրանշի հետվճարման վերջին ամսաթիվը համարվում է Հատկացման սահմանված ամսաթվից հետո 4 (չորս) տարուց ոչ շուտ և 25 (քսանհինգ) տարուց ոչ ուշ ընկած Վճարման ամսաթիվը:

4.02. <u>Կամավոր կանխավճարը</u>

4.02.Ա. **Կանխավճարի տարբերակը**

Պահպանելով 4.02.Բ, 4.02.Գ և 4.04-րդ հոդվածների դրույթները՝ Վարկառուն կարող է կանխավ ամբողջությամբ կամ մասամբ վճարել ցանկացած տրանշ, ներառյալ կուտակված տոկոսները և կորուստների հատուցումը, եթե այդպիսիք առկա են, առնվազն մեկ ամիս առաջ ուղարկելով Կանխավճարի ծանուցում, որում նշվում է՝ i) Կանխավճարի գումարը, ii) Կանխավճարի ամսաթիվը, iii) 5.05.Գ.i) հոդվածի համաձայն՝ կանխավճարի գումարի մեթոդի կիրառման ընտրությունը, եթե առկա է, և iv) պայմանագրի համարը (“FI nr”), որը նշված է Պայմանագրի առաջին էջին:

Կանխավճարի ծանուցումը համարվում է պարտադիր և անփոփոխ՝ համաձայն 4.02.Գ հոդվածի:

4.02.Բ. **Կանխավճարի փոխհատուցումը**

4.02.Բ.1) ՖԻՔՍՎԱԾ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՈՎ ՏՐԱՆՇԸ

Եթե Վարկառուն նախօրոք վճարում է Ֆիքսված տոկոսադրույքով տրանշը, ապա Վարկառուն Բանկին վճարում է Կանխավճարի փոխհատուցումը Կանխավճարի ամսաթվին՝ Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի առնչությամբ, որը նախապես վճարվում է:

4.02.Բ.2) ԼՈՂԱՑՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՈՎ ՏՐԱՆՇԸ

Վարկառուն կարող է, առանց փոխհատուցման, նախօրոք վճարել Լողացող տոկոսադրույքով տրանշը ցանկացած Կանխավճարի ամսաթվի:

4.02.Գ. **Կանխավճարի մեխանիզմները**

Վարկառուի կողմից Բանկին Կանխավճարի հարցումն ուղարկվելուն պես Բանկը Կանխավճարի ծանուցում է տրամադրում Վարկառուին Կանխավճարի ամսաթվից ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ: Կանխավճարի ծանուցմամբ սահմանվում են Կանխավճարի գումարի չափը, վճարման ենթակա կուտակված տոկոսները և, 4.02.Բ հոդվածի համաձայն, վճարվելիք հատուցման գումարը կամ, ըստ դեպքի, նաև այն, որ փոխհատուցում չկա, Կանխավճարի գումարի կիրառման մեթոդը և Ընդունման վերջնաժամկետը:

Եթե Վարկառուն ընդունում է Կանխավճարի ծանուցումը ոչ ուշ, քան մինչև Ընդունման վերջնաժամկետը, ապա այն ազդում է կանխավճարի վրա: Որևէ այլ դեպքում Վարկառուն չի կարող ազդել Կանխավճարի վրա:

Կանխավճարի հետ միասին Վարկառուն վճարում է նաև Կանխավճարի գումարի կուտակված տոկոսները և, առկայության դեպքում, փոխհատուցման տույժի գումարը, ինչպես նշված է Կանխավճարի ծանուցման մեջ:

4.03. <u>Պարտադիր կանխավճարը</u>

4.03.Ա. **Կանխավճարի դեպքերը**

4.03.Ա.1) ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ

Եթե Ծրագրի հետ կապված ընդհանուր ծախսը նվազում է 5-րդ Դեկլարատիվ դրույթում նշված գումարից մինչև այն մակարդակը, որ Վարկի գումարը գերազանցում է այդ ընդհանուր ծախսի 50%-ը (հիսուն տոկոսը), Բանկը կարող է Վարկառուին կատարվող ծանուցման հիման վրա անհապաղ չեղյալ հայտարարել Փոխառության չհատկացված մասը և (կամ) պահանջել Վարկի կանխավճարի կատարումը այն գումարի չափով, որով Վարկը 50%-ով (հիսուն տոկոսով) գերազանցում է Ծրագրի ընդհանուր արժեքը: Վարկառուն կատարում է պահանջված գումարի վճարումը Բանկի կողմից սահմանված ամսաթվին, ընդ որում՝ այդ ամսաթիվը պահանջի ներկայացման ամսաթվից 30 (երեսուն) օր հետո ընկած ժամանակահատվածից պակաս չէ:

4.03.Ա.2) ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՉ ԵՆԲ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՈՎ

Եթե Վարկառուն կամավոր կանխավճար է կատարում (կասկածներից խուսափելու համար կանխավճարը կիրառման ենթակա դեպքերում ներառում է վերագնում կամ չեղյալ հայտարարում) յուրաքանչյուր ոչ ԵՆԲ ֆինանսավորման մի մասը կամ ամբողջությամբ, և

ա) նման կանխավճարը չի կատարվում ռևոլվերային վարկային գծի շրջանակներում (բացառությամբ ռևոլվերային վարկային գծի չեղյալ

հայտարարման դեպքի), և

բ) նման կանխավճարը չի կատարվում այն վարկային միջոցներից, որի ժամկետն առնվազն հավասար է կանխավճարված ոչ ԵՆԲ ֆինանսավորման չավարտված ժամկետին,

Բանկը կարող է Վարկառուին ծանուցում ներկայացնելուց հետո չեղյալ հայտարարել Փոխառության չհատկացված մասը և պահանջել Վարկի կանխավճար: Վարկի համամասնությունը, որը Բանկը կարող է պահանջել, որ կատարվի, նույնն է, ինչ այն համամասնությունը, որ ոչ ԵՆԲ ֆինանսավորման կանխավճարված գումարը ծածկի ոչ ԵՆԲ ամբողջ ֆինանսավորման չմարված գումարների հանրագումարը:

Վարկառուն կատարում է պահանջված գումարի վճարումը Բանկի կողմից սահմանված ամսաթվին, ընդ որում՝ այդ ամսաթիվը վերոնշյալ պահանջի ներկայացման ամսաթվից 30 (երեսուն) օր հետո ընկած ժամանակահատվածից պակաս չէ:

Սույն հոդվածի նպատակներով **«ոչ ԵՆԲ ֆինանսավորում»** հասկացությունը ներառում է ցանկացած վարկ (բացի Վարկից և Բանկի կողմից Վարկառուին տրամադրված այլ ուղղակի վարկերից), պարտատոմս կամ ֆինանսական պարտավորության որևէ այլ տեսակ կամ որևէ այլ պարտավորություն՝ վճարում կամ հետվճարում կատարելու սկզբնապես Վարկառուին 3 (երեք) տարուց ավել ժամկետով տրամադրված դրամական միջոցների դիմաց:

4.03.Ա.3) Օրենքի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վարկառուն հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկացնում է Բանկին Օրենքի փոփոխության իրավիճակ առաջանալու կամ այդպիսի իրավիճակ առաջանալու հավանականության մասին: Նման դեպքում կամ եթե Բանկը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ ի հայտ է եկել Օրենքի փոփոխության իրավիճակ կամ այդպիսի դեպքի հավանականություն է առաջացել, ապա Բանկը կարող է պահանջել, որ Վարկառուն խորհրդակցի իր հետ: Այդ խորհրդակցությունն անցկացվում է Բանկի կողմից պահանջ ներկայացվելուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում: Եթե խորհրդակ-ցության վերաբերյալ այդպիսի պահանջի օրվան հաջորդող ամենաշուտը 30-օրյա (երեսնօրյա) ժամկետի ավարտից հետո Բանկը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Օրենքի փոփոխության իրավիճակի ազդեցությունը չի կարող մեղմացվել մինչև իրեն բավարարող մակարդակը, ապա Բանկը կարող է, Վարկառուին ծանուցելով, չեղյալ հայտարարել Փոխառության չհատկացված մասը և պահանջել Վարկի կանխավճար կուտակված տոկոսի և սույն Պայմանագրով նախատեսված՝ կուտակված կամ չվճարված բոլոր մյուս գումարների հետ միասին:

Վարկառուն վճարում է պահանջված գումարը Բանկի կողմից սահմանված ամսաթվին, որը պահանջի ներկայացման ամսաթվից ոչ պակաս, քան 30 (երեսուն) օր հետո է:

Սույն հոդվածի նպատակներով **«Օրենքի փոփոխության իրավիճակ»** նշանակում է՝ ցանկացած օրենքի, կանոնի կամ կանոնակարգի (կամ ցանկացած օրենքի, կանոնի կամ կանոնակարգի կիրառման կամ պաշտոնական մեկնաբանության մեջ) ընդունում, հրապարակում, կատարում կամ վավերացում կամ դրանցում փոփոխություն կամ լրացում, որոնք ի հայտ են գալիս սույն Պայմանագրի ամսաթվից հետո, և որը, Բանկի կարծիքով, էական բացասական ազդեցություն կունենա Վարկառուի կողմից սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու կարողության կամ Օժանդակողի կողմից Ծրագրի մասով իր պարտավորությունները կատարելու կարողության վրա:

4.03.Ա.4) ԱՆՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՄ ԵՐԱՇԽԻՔԸ, ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Եթե՝

ա) ԵՄ իրավազորության ներքո կամ Հայաստանի Հանրապետությունում Բանկի համար անօրինական է դառնում սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարումը կամ Վարկի ֆինանսավորումը կամ սպասարկումը, կամ

բ) Շրջանակային համաձայնագիրը,

i) մերժվում է կամ կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության կողմից կամ Հայաստանի Հանրապետության համար պարտադիր չէ կամ կարող է պարտադիր չլինել որևէ առումով, կամ

ii) ուժի մեջ չէ կամ կարող է ուժի մեջ չլինել՝ դրա պայմաններին համապատասխան, կամ Վարկառուի կողմից հայտարարվում է կամ կարող է հայտարարվել ուժը կորցրած՝ դրա պայմաններին համապատասխան,

iii) խախտվել է, այսինքն՝ ցանկացած պարտավորություն, որը Հայաստանի Հանրապետությունը ստանձնել էր Շրջանակային համաձայնագրի ներքո, ալևս չի կատարվում որևէ վարկի հետ կապված, որը որևէ Վարկառուի տրամադրվել էր Հայաստանի Հանրապետության տարածքում Բանկի կամ Եվրոպական միության միջոցներից,

գ) ԵՄ Երաշխիքի մասով՝

(i) ԵՄ երաշխիքը ծածկելու համար անհրաժեշտ պայմանները չեն կատարվում,

(ii) ԵՄ երաշխիքը դադարում է վավեր, գործող կամ կատարման ենթակա լինելուց՝ համաձայն իր պայմանների,

ապա Բանկը, ծանուցելով Վարկառուին, կարող է՝

Ա) անհապաղ կասեցնել կամ չեղյալ հայտարարել Փոխառության չհատկացված մասը և (կամ)

Բ) պահանջել Վարկի կանխավճարի կատարում սույն Պայմանագրի ներքո կուտակված տոկոսների և կուտակված կամ չվճարված բոլոր այլ գումարների հետ միասին՝ այն ամսաթվին, որը Բանկը նշել է Վարկառուին հասցեագրված իր ծանուցման մեջ:

4.03.Ա. 5) ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վարկառուն տեղեկացնում է կամ ապահովում է, որ Օժանդակողը և Վերջնական շահառուներն անհապաղ Բանկին տեղեկացնեն, թե արդյոք Վերջնական շահառուների մասով առաջացել կամ կարող է առաջանալ Հսկողության փոփոխության որևէ իրավիճակ: Այդ դեպքում կամ եթե Բանկը ողջամիտ պատճառներ ունի հավատալու, որ առաջացել կամ առաջանալու է Հսկողության փոփոխության իրավիճակ, Բանկը կարող է պահանջել, որ Վարկառուն խորհրդակցի իր հետ: Այդպիսի խորհրդակցությունը տեղի է ունենում Բանկի կողմից պահանջ ներկայացվելուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում: Խորհրդակցության վերաբերյալ այդպիսի պահանջի օրվան հաջորդող ամենաշուտը՝ ա) 30-օրյա (երեսնօրյա) ժամկետի ավարտից հետո կամ բ) նախատեսված Հսկողության փոփոխության իրավիճակ առաջանալու դեպքում Բանկը Վարկառուին ծանուցելու միջոցով կարող է չեղյալ հայտարարել Փոխառությունը և (կամ) պահանջել Վարկի կանխավճարի կատարում՝ կուտակված տոկոսներով, և սույն Պայմանագրի ներքո կուտակված և չմարված բոլոր մյուս գումարները: Վարկառուն վճարում է պահանջված գումարները Բանկի կողմից սահմանված ամսաթվին, որը պահանջ ներկայացնելու ամսաթվից ոչ պակաս, քան 30 (երեսուն) օր հետո է:

Սույն հոդվածի նպատակներով՝

ա) **«Հսկողության փոփոխության իրավիճակ»** առաջանում է այն դեպքում, երբ.

i) համագործակցելով՝ գործող որևէ անձ կամ անձանց խումբ ստանձնում է Օժանդակողի և Վերջնական շահառուների նկատմամբ հսկողություն, կամ

ii) Վարկառուն դադարում է (x) վերահսկել Օժանդակողին և Վերջնական շահառուներին կամ (y) հանդիսանալ Վերջնական շահառուների բաժնետիրական կապիտալի 51%-ի (հիսունմեկ տոկոս) ուղղակի կամ անուղղակի շահառու սեփականատեր ամբողջությամբ սեփականության իրավունքով պատկանող դուստր ձեռնարկությունների միջոցով կամ (z) լինել Օժանդակողին ներկայացնող միակ սեփականատերը և պետական մարմինը:

բ) **«գործել համագործակցելով»** նշանակում է՝ համատեղ գործել՝ ըստ համաձայնագրի կամ փոխհամաձայնությամբ (պաշտոնական կամ ոչ պաշտոնական), և

գ) **«հսկողություն»** նշանակում է՝ որևէ սուբյեկտի ղեկավարումն ու քաղաքականությունն ուղղորդելու իրավասություն՝ քվեարկող կապիտալի սեփականության, պայմանագրի կամ այլ միջոցներով:

4.03.Ա.6) ԵՆԹԱՎԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ

Եթե որևէ պահի, քանի դեռ Վարկը մնում է չմարված, Վերջնական շահառուներից որևէ մեկը կանխավճարում է այն Վարկը, որը իրեն տրամադրված է Վարկառուի կողմից վերավարկավորման միջոցով՝ Ծրագրի

ֆինանսավորման նպատակով, Բանկը կարող է, ծանուցելով Վարկառուին, չեղյալ հայտարարել Փոխառության չհատկացված մասը և Վարկառուից Վարկի կանխավճարում պահանջել կուտակված տոկոսների և սույն Պայմանագրի ներքո կուտակված կամ չմարված բոլոր մյուս գումարների հետ միասին:

4.03.Ա.7) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վարկառուն անմիջապես տեղեկացնում է Բանկին, եթե անբարենպաստ փոփոխություն է առաջացել կամ կարող է առաջանալ Կառավարման պայմանագրում: Նման դեպքում, եթե Բանկը ողջամիտ պատճառ ունի հավատալու, որ անբարենպաստ փոփոխություն է առաջացել կամ առաջանալու է Կառավարման պայմանագրում, ապա Բանկը կարող է պահանջել Վարկառուից խորհրդակցել իր հետ: Այդպիսի խորհրդակցությունը տեղի է ունենում Բանկի կողմից պահանջ ներկայացվելուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում: Եթե խորհրդակցության նման պահանջի ամսաթվից 30 (երեսուն) օր հետո Բանկն այն կարծիքին է, որ անբարենպաստ փոփոխության ազդեցությունը Կառավարման պայմանագրի մասով չի կարող մեղմացվել իրեն բավարարող մակարդակի, ապա Բանկը կարող է, ծանուցելով Վարկառուին, չեղյալ հայտարարել Փոխառության չհատկացված մասը և պահանջել Վարկի կանխավճարի կատարում կուտակված տոկոսներով և սույն Պայմանագրի ներքո կուտակված և չմարված բոլոր մյուս գումարներով:

Վարկառուն վճարում է պահանջված գումարները Բանկի կողմից

սահմանված ամսաթվին, որը պահանջ ներկայացվելու ամսաթվից ոչ շուտ, քան 30 (երեսուն) օր հետո է:

Սույն հոդվածի նպատակներով **«Կառավարման պայմանագրում անբարենպաստ փոփոխություն»** նշանակում է հետևյալ դեպքերից որևէ մեկի ի հայտ գալը.

ա) «ՀՋԿ»-ն, Օժանդակողը կամ Վերջնական շահառուներից որևէ մեկը, կախված հանգամանքներից, պատշաճ կերպով և ժամանակին չեն կատարում Կառավարման պայմանագրի ներքո որևէ էական պարտավորություն, կամ

բ) ցանկացած Կառավարման պայմանագիր փոփոխվում, նորացվում, երկարաձգվում կամ փոխարինվում է, կամ կնքվում է նոր Կառավարման պայմանագիր՝ առանց նախապես ստանալու Բանկի համաձայնությունը, կամ

գ) Կառավարման պայմանագրի գործողությունը դադարեցվում է և չի փոխարինվում նոր կառավարման պայմանագրով՝ Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ:

4.03.Ա.8) ՎՎԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վարկառուն անմիջապես տեղեկացնում է Բանկին, եթե ՎՎԲ Վարկային համաձայնագրի անբարենպաստ փոփոխություն է առաջացել կամ կարող է առաջանալ: Նման դեպքում, եթե Բանկը ողջամիտ պատճառ ունի հավատալու, որ ՎՎԲ Վարկային համաձայնագրում անբարենպաստ փոփոխություն է առաջացել կամ առաջանալու է, ապա Բանկը կարող է պահանջել Վարկառուից խորհրդակցել իր հետ: Այդպիսի խորհրդակցությունը տեղի է ունենում Բանկի կողմից պահանջ ներկայացվելուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում: Եթե խորհրդակցության նման պահանջի ամսաթվից 30 (երեսուն) օր հետո Բանկն այն կարծիքին է, որ անբարենպաստ փոփոխության ազդեցությունը ՎՎԲ Վարկային համաձայնագրի մասով չի կարող մեղմացվել իրեն բավարարող մակարդակի, ապա Բանկը կարող է, ծանուցելով Վարկառուին, չեղյալ հայտարարել Փոխառության չհատկացված մասը և պահանջել Վարկային կանխավճարի կատարում կուտակված տոկոսներով և սույն Պայմանագրի ներքո կուտակված և չմարված բոլոր մյուս գումարներով:

Վարկառուն վճարում է պահանջված գումարները Բանկի կողմից սահմանված ամսաթվին, որը պահանջ ներկայացնելու ամսաթվից ոչ շուտ, քան 30 (երեսուն) օր հետո է:

Սույն հոդվածի նպատակներով **«ՎՎԲ Վարկային համաձայնագրի**

անբարենպաստ փոփոխություն» նշանակում է, որ ՎՎԲ Փոխառության համաձայնագրի գործողությունը դադարեցվել է և չի փոխարինվել ՎՎԲ-ի հետ նոր փոխառության համաձայնագրով՝ Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ:

4.03.Բ. **Կանխավճարի մեխանիզմները**

Բանկի կողմից 4.03.Ա հոդվածի համաձայն պահանջվող ցանկացած գումար համապատասխան տոկոսների և սույն Պայմանագրի ներքո կուտակված կամ չվճարված այլ գումարների հետ միասին, ներառյալ, առանց սահմանափակման, 4.03.Գ և 4.04-րդ հոդվածի ներքո նշված՝ փոխհատուցմանն առնչվող որևէ տույժի գումարը, անմիջապես վճարվում է Բանկի կողմից իր պահանջագրում նշված ամսաթվին:

4.03.Գ. **Կանխավճարի փոխհատուցումը**

Կանխավճարի փոխհատուցման դեպք առաջանալու պարագայում փոխհատուցումը, եթե այդպիսին առկա է, որոշվում է 4.02.Բ հոդվածի համաձայն:

4.04. <u>Ընդհանուր</u>

Հետ վճարված կամ կանխավճարված գումարը չի կարող կրկին փոխառվել: 4-րդ հոդվածը չպետք է հակասի 10-րդ հոդվածին:

Եթե Վարկառուն կանխավճար է կատարում Տրանշի համար համապատասխան Վճարման ամսաթվից տարբերվող որևէ այլ ամսաթվի, ապա Վարկառուն փոխհատուցում է Բանկին վերջինիս կողմից սահմանված այնպիսի գումարի չափով, որը պահանջվում է փոխհատուցել իրեն այն միջոցների ստացման համար, որոնք ստացվել են ոչ համապատասխան Վճարման ամսաթվին:

<u>ՀՈԴՎԱԾ 5</u>

<u>Վճարումները</u>

5.01. <u>Օրերի հաշվարկման մեթոդը</u>

Սույն Պայմանագրի ներքո Վարկառուի կողմից փոխանցվող տոկոսների, փոխհատուցման կամ վճարների ցանկացած գումար, որը հաշվարկվում է տարվա կտրվածքով, սահմանվում է հետևյալ մեթոդներով.

ա) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի շրջանակներում տոկոսների և փոխհատուցումների առնչությամբ՝ մեկ տարի՝ 360 (երեք հարյուր վաթսուն) օր և մեկ ամիս՝ 30 (երեսուն) օր,

բ) Լողացող տոկոսադրույքով տրանշի շրջանակներում տոկոսների և

փոխհատուցումների առնչությամբ՝ մեկ տարի՝ 360 (երեք հարյուր վաթսուն) օր և անցած օրերի թիվը, և

գ) վճարների առնչությամբ՝ մեկ տարի՝ 360 (երեք հարյուր վաթսուն) օր և անցած օրերի թիվը:

5.02. <u>Վճարումների վայրը և ժամանակը</u>

Եթե այլ բան սահմանված չէ, ապա տոկոսներից, փոխհատուցումից և հիմնական գումարից բացի՝ մյուս գումարները ենթակա են վճարման Բանկի պահանջագիրը Վարկառուի ստանալուց հետո՝ 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

Սույն Պայմանագրի շրջանակներում Վարկառուի կողմից վճարվելիք յուրաքանչյուր գումար վճարվում է Բանկի կողմից Վարկառուին ծանուցված համապատասխան հաշվին: Բանկը նշում է հաշիվը Վարկառուի կողմից առաջին վճարման ենթակա ամսաթվից ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ, իսկ հաշվի ցանկացած փոփոխման դեպքում ծանուցում է փոփոխման համար կիրառվող առաջին վճարման ամսաթվից ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ: Ծանուցման տվյալ ժամանակահատվածը չի կիրառվում 10-րդ հոդվածի ներքո վճարման դեպքում:

Սույն փաստաթղթի ներքո կատարված յուրաքանչյուր վճարման համար Վարկառուն նշում է պայմանագրի համարը (FI համար), որը գրված է սույն Պայմանագրի տիտղոսաթերթին: Վարկառուի կողմից վճարման ենթակա գումարը համարվում է վճարված, երբ Բանկը այն ստանում է:

5.03. <u>Վարկառուի կողմից հաշվանցում չկատարվելը</u>

Սույն Պայմանագրով Վարկառուի կողմից կատարվելիք բոլոր վճարումները հաշվարկվում և կատարվում են առանց որևէ հաշվանցման (ինչպես նաև՝ առանց պահումների) կամ հակընդդեմ հայցի:

5.04. <u>Վճարային համակարգերի խաթարումը</u>

Այն դեպքերում, երբ Բանկը (իր հայեցողությամբ) որոշում է, որ առաջացել է Խաթարման իրավիճակ կամ այդպիսի իրավիճակ առաջանալու մասին տեղեկացվում է Վարկառուի կողմից, ապա.

ա) Բանկը կարող է, իսկ Վարկառուի պահանջի դեպքում՝ պարտավոր է, խորհրդակցել վերջինիս հետ՝ նպատակ ունենալով համաձայնեցնելու Վարկառուի հետ սույն Պայմանագրի իրականացման կամ կիրարկման ընթացքում առաջացած փոփոխությունները, որոնք Բանկը կարող է անհրաժեշտ համարել առաջ եկած հանգամանքներում,

բ) Բանկը պարտավոր չէ Վարկառուի հետ խորհրդակցել *ա)* պարբերության մեջ նշված որևէ փոփոխության առնչությամբ, եթե, իր կարծիքով, դա առկա պայմաններում նպատակահարմար չէ, և, ցանկացած

դեպքում, պարտավոր չէ համաձայնել այդպիսի փոփոխություններին, և

գ) Բանկը պատասխանատվություն չի կրում խաթարման իրավիճակի հետևանքով առաջացած որևէ տեսակի վնասի, ծախսի կամ կորստի կամ սույն՝ 5.04-րդ հոդվածի համաձայն կամ դրա հետ կապված՝ որևէ միջոց ձեռնարկելու կամ չձեռնարկելու համար:

5.05. <u>Ստացված գումարների օգտագործումը</u>

ա) **Ընդհանուր դրույթներ**

Վարկառուից ստացված գումարները նրան ազատում են իր վճարման պարտավորությունների կատարումից միայն այն դեպքում, եթե դրանք ստացվել են սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:

բ) **Մասնակի վճարումները**

Եթե Բանկին կատարված վճարումը բավարար չէ սույն Պայմանագրով Վարկառուի կողմից վճարման ենթակա բոլոր գումարների մարման համար, ապա Բանկն այն կիրառում է հետևյալ վճարումների դիմաց.

(i) առաջին՝ սույն Պայմանագրով նախատեսված՝ ցանկացած չկատարված վճարի, ծախքի, փոխհատուցման և ծախսերի համամասնական վճարումների մասով կամ դրանց դիմաց,

(ii) երկրորդ՝ սույն Պայմանագրի ներքո վճարման ենթակա, սակայն չվճարված՝ կուտակված տոկոսների մասով կամ դրանց դիմաց,

(iii) երրորդ՝ սույն Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա, սակայն չվճարված հիմնական գումարի մասով կամ դրա դիմաց, և

(iv) չորրորդ՝ սույն Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա, սակայն չվճարված ցանկացած այլ գումարի մասով կամ դրա դիմաց:

գ) **Տրանշների հետ կապված գումարների բաշխումը**

i) Ա) Մի քանի մասնաբաժիններով մարման ենթակա Տրանշի կամավոր մասնակի կանխավճարման դեպքում Կանխավճարի գումարն օգտագործվում է համամասնորեն՝ մարման ենթակա յուրաքանչյուր չվճարված մասնաբաժնի դիմաց կամ, Վարկառուի խնդրանքով, մարման հետընթաց կարգով,

Բ) մի քանի մասնաբաժիններով մարման ենթակա Տրանշի՝պարտադիր մասնակի կանխավճարման դեպքում Կանխավճարի գումարն օգտագործվում է՝ կրճատելով չվճարված մասնաբաժինները մարման հետընթաց կարգով:

ii) 10.01-ին հոդվածում նշված պահանջի ներկայացման դեպքում Բանկի ստացած և Տրանշի դիմաց օգտագործված գումարները կրճատում են չմարված վճարումների մասնաբաժինները մարման հետընթաց կարգով: Բանկը տրանշների միջև ընկած ժամանակահատվածում ստացված գումարները կարող է օգտագործել իր հայեցողությամբ:

iii) Այնպիսի գումարների ստացման դեպքում, որոնց օգտագործումը որևէ Տրանշի նկատմամբ չի կարող որոշվել, և որոնց օգտագործման վերաբերյալ Բանկի և Վարկառուի միջև որևէ պայմանավորվածություն չի գործում, Բանկն այդ գումարները կարող է օգտագործել տրանշների միջև՝ իր հայեցողությամբ:

ՀՈԴՎԱԾ 6

Վարկառուի պարտավորությունները և հավաստիացումները

Սույն՝ 6-րդ հոդվածում նշված պարտավորություններն ուժի մեջ են մնում սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ այնքան ժամանակ, քանի դեռ սույն Պայմանագրի ներքո որևէ գումար վճարված չէ, կամ քանի դեռ Փոխառությունն ուժի մեջ է:

6.01. Վարկի օգտագործումը և այլ միջոցների հասանելիությունը

Վարկառուն Վարկի շրջանակներում իր փոխառած բոլոր գումարները օգտագործում է Ծրագրի իրականացման նպատակով: Վարկառուն ապահովում է, որ Օժանդակողն օգտագործի սույն Պայմանագրի ներքո Ծրագրի իրականացման համար իր ստացած ամբողջ գումարը:

Վարկառուն երաշխավորում է, որ ունի 5-րդ Դեկլարատիվ դրույթում թվարկված՝ իրեն հասանելի այլ միջոցներ, և որ նման միջոցները, ըստ հարկի, ծախսվում են Ծրագրի ֆինանսավորման նպատակով:

6.02. Ծրագրի ավարտը

Վարկառուն Ծրագիրն իրականացնում է Տեխնիկական նկարագրության համաձայն, որը Բանկի հավանությամբ կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխությունների ենթարկվել, և որ Ծրագիրն ավարտվելու է այնտեղ նշված վերջնաժամկետում:

6.03. Ծրագրի հավելյալ ծախսերը

Եթե Ծրագրի հետ կապված ընդհանուր ծախսերը գերազանցում են 5-րդ Դեկլարատիվ դրույթում նշված գումարի չափը, ապա Վարկառուն, առանց Բանկին դիմելու, ձեռք է բերում միջոցներ՝ Ծրագրի հավելյալ ծախսերը վճարելու համար, որպեսզի Ծրագիրն ավարտին հասցվի Տեխնիկական նկարագրությանը համապատասխան: Հավելյալ ծախսերի վճարման

վերաբերյալ ծրագրերը անհապաղ ներկայացվում են Բանկ:

6.04. <u>Գնումների ընթացակարգը</u>

Վարկառուն երաշխավորում է, որ Ծրագրի իրականացման նպատակով և դրա հետ կապված սարքավորումները ձեռք են բերված, ծառայությունների մատուցումն ապահովված է, և աշխատանքները պատվիրված են միջազգային բաց մրցույթների կամ այլ ընդունելի գնումների ընթացակարգերի միջոցով՝ ՎՎԲ-ի գնումների կանոնների, այլ միջազգային չափանիշների և Եվրոպական միության ու հայաստանյան իշխանությունների միջև Ֆինանսավորման համաձայնագրով համաձայնեցված այլ կանոնների համաձայն, ինչը պետք է արժանանա Բանկի հավանությանը:

6.05. <u>Ծրագրի շրջանակներում շարունակական պարտավորությունները</u>

Վարկառուն ապահովում է, որ.

ա) **տեխնիկական սպասարկման մասով՝** Ծրագրի մաս կազմող ամբողջ սեփականությունը ենթարկված լինի տեխնիկական սպասարկման, լինի վերանորոգված, զննում անցած և նորացված, ինչպես հարկն է, աշխատանքային լավ վիճակում պահելու համար.

բ) **Ծրագրի ակտիվների մասով՝** բացառությամբ այն դեպքի, երբ Բանկը նախապես տրամադրած կլիներ իր գրավոր համաձայնությունը, Վարկառուն և (կամ) Օժանդակողը (ըստ իրավիճակի) պահպանում են սեփականության կամ օգտագործման իրավունքը Ծրագրի մաս կազմող բոլոր կամ գրեթե բոլոր ակտիվների նկատմամբ կամ անհրաժեշտության դեպքում, փոխարինում կամ նորացնում են այդ ակտիվները, ինչպես նաև ապահովում են Ծրագրի բնականոն գործունեությունը՝ համաձայն դրա սկզբնական նպատակների՝ պայմանով, որ Բանկը կարող է հետ վերցնել իր համաձայնությունը միայն այն դեպքում, երբ առաջարկվող գործողությունը վնաս կհասցնի Բանկի՝ որպես Վարկառուի համար փոխատու հանդիսանալու շահերին, կամ Ծրագիրը ոչ ենթակա կդարձվի Բանկի կողմից Ծրագրի ֆինանսավորմանը՝ Բանկի կանոնադրության կամ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 309-րդ հոդվածի համաձայն.

գ) **ապահովագրության մասով՝** սկսած սույն Պայմանագրի ներքո երկրորդ հատկացման ամսաթվից՝ ապահովագրել Ծրագրի մաս կազմող բոլոր աշխատանքները և սեփականությունը ապահովագրական հեղինակավոր ընկերությունների միջոցով՝ ելնելով արդյունաբերության ոլորտի համապատասխան համապարփակ գործելակերպից.

դ) **իրավունքների և թույլտվությունների մասով՝** պաշտպանվում են

Ծրագրի իրականացման և գործարկման համար անհրաժեշտ՝ տեղաշարժի և օգտագործման բոլոր թույլտվությունները.

ե) **Շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի մասով՝** Վարկառուն, Օժանդակողն ու Վերջնական շահառուները, եթե առկա են.

(i) իրականացնում և գործարկում են Ծրագիրը Բնապահպանական և սոցիալական չափանիշներին համապատասխան,

(ii) ձեռք են բերում և պահպանում ու հետևում են Ծրագրի համար պահանջվող՝ Բնապահպանական և սոցիալական թույլտվություններին, և

(iii) պարտավորվում են կատարել և հետևել Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրից յուրաքանչյուրին և Շահառուի ներգրավվածությանը, ինչպես նաև պարտավորվում են Բանկին տեղեկացնել՝ i) Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրով չնախատեսված՝ Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ցանկացած անբարենպաստ ազդեցության մասին, ii) Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ցանկացած անբարենպաստ ազդեցությունը նվազեցնող կամ վերացնող՝ ձեռնարկված անբավարար միջոցառումների մասին, և iii) Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին կամ Բնապահպանական և սոցիալական չափանիշներին ցանկացած էական անհամապատասխանության մասին,

(iv) նախքան աշխատանքների սկիզբը նախապատրաստում են Բանկի պահանջները բավարարող՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան: Շահագործող ընկերություններն ապահովում են, որ աշխատանքներն իրականացվեն այնտեղ նշված պահանջները հաշվի առնելով,

(v) չեն տրամադրում Բանկի միջոցները այնպիսի ծրագրերի համար, որոնք, ազգային Օրենքի համաձայն, պահանջում են շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում կամ կենսաբազմազանության գնահատում նախքան իրավասու մարմնից համաձայնություն ստանալը և հանրությանն ու մասնավորապես Բանկին շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Ոչ տեխնիկական եզրակացություններ տրամադրելը.

զ) **ԵՄ իրավունքը**. Վարկառուն և Վերջնական շահառուները (եթե կիրառելի է) Ծրագիրն իրականացնում և գործարկում են ԵՄ Օրենքի կիրառելի չափանիշներին համապատասխան՝ այնքանով, որքանով դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ սահմանված են Բանկի կողմից մինչև սույն Պայմանագրի ամսաթիվը, և

է) **ազդեցությունը բնական ջրային ռեսուրսների վրա.** Վարկառուն՝

i) ջանքեր է գործադրում՝ խուսափելու համար երրորդ կողմերի կողմից բացասական ազդեցություններից,

Ա) բնական ջրային ռեսուրսների,

Բ) խմելու ջրի որակի և

Գ) Ծրագրի տարածաշրջանում ակտիվների և ներդրումների վրա,

ii) մեծապես աջակցում է Ծրագիրն իրականացնող չորս ջրամատակարար ընկերություններին՝ Լոռի, Շիրակ, Նոր Ակունք և ՀՋԿ ՓԲԸ-ներին (միասին՝ **Ընկերություններ**) երրորդ կողմերի նկատմամբ իրենց իրավունքների կիրառման գործում, և

iii) Ընկերություններին ապահովել համապատասխան միջոցներով, ինչը թույլ կտա վերջիններիս վերացնել երրորդ կողմերի պատճառած ցանկացած վնաս, որը ի հայտ է եկել հանքարդյունահանման արդյունքում:

6.06. <u>Օրենքները պահպանելը</u>

Վարկառուն պարտավոր է պահպանել և ապահովել, որ Օժանդակողը և Վերջնական շահառուները պահպանեն բոլոր այն օրենքներն ու կանոնակարգերը, որոնք տարածվում են Վարկառուի, Վերջնական շահառուների կամ Ծրագրի վրա:

6.07. <u>Ընդհանուր հավաստիացումները և երաշխիքները</u>

Վարկառուն Բանկին հավաստիացնում և երաշխավորում է, որ.

ա) Վերջնական շահառուները պատշաճ կերպով գրանցված և գոյություն ունեցող վավերական սուբյեկտներ են՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան, և իրավասու են իրականացնելու գործունեություն, ինչպես այն իրականացվում է այժմ, և ունենալու իրենց սեփականությունն ու այլ ակտիվները,

բ) ինքն իրավասու է իրականացնելու, ներկայացնելու և կատարելու իր պարտավորությունները սույն Պայմանագրի ներքո, և որ բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարվել են վերոնշյալ գործառույթների լիազորման նպատակով,

գ) սույն Պայմանագիրը կազմված է իրավաբանորեն վավեր, պարտադիր ուժ ունեցող և կատարման ենթակա պարտավորություններից,

դ) համաձայն սույն Պայմանագրի դրույթների՝ իր պարտավորությունների կատարումը, ներկայացումն ու իրականացումը չեն խախտում կամ չեն խախտի՝

i) իր վրա տարածվող որևէ կիրառելի օրենք, ստատուտ, կանոն կամ կանոնակարգ, կամ որևէ վճիռ, որոշում կամ թույլտվություն, կամ՝ չեն հակասում և չեն հակասի դրանց,

ii) իր համար պարտադիր որևէ համաձայնագիր կամ այլ փաստաթուղթ, կամ՝ հակասել դրանց, որը կարող է էական անբարենպաստ ազդեցություն ունենալ Պայմանագրի ներքո իր պարտավորությունների կատարման վրա,

ե) Օժանդակողի և Վերջնական շահառուների՝ աուդիտի ենթարկված վերջին հասանելի համախմբված հաշիվները պատրաստվել են նախկին տարիների հիման վրա և հաստատվել են իր աուդիտորների կողմից, որոնք ներկայացնում են իր գործունեության արդյունքների իրական և արդար պատկերը այդ տարվա համար և պատշաճ կերպով բացահայտում ու պահպանում են Վերջնական շահառուների բոլոր պարտավորությունները (փաստացի կամ չնախատեսված),

զ) սույն Պայմանագրի կնքման պահից՝ 2013 թվականի դեկտեմբերի 18-ից, Էական անբարենպաստ փոփոխություններ չեն արձանագրվել,

է) առաջ չի եկել Պարտավորության չկատարման դեպք հանդիսացող որևէ իրավիճակ կամ հանգամանք, որը շարունակում է մնալ չշտկված կամ չհրաժարված,

ը) ոչ մի դատավարություն, արբիտրաժային և վարչական վարույթ կամ հետաքննություն առկա չէ կամ, ըստ իր իմացության, չի սպառնում սկսվել որևէ դատարանում, արբիտրաժային մարմնում կամ գործակալությունում, որը հանգեցրել է և/կամ անբարենպաստ վճռի դեպքում կարող է հանգեցնել էական անբարենպաստ փոփոխության, և որ իր կամ Օժանդակողի նկատմամբ առկա չէ որևէ չկատարված դատական վճիռ կամ որոշում,

թ) սույն Պայմանագրի առնչությամբ ինքը տրամադրել է կառավարական կամ պետական մարմինների կամ իշխանությունների բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, լիազորագրերը, լիցենզիաները կամ հաստատումները, բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, լիազորագրերը, լիցենզիաները կամ հավաստումներն ուժի մեջ և վավերական են և ընդունելի,

ժ) Վերջնական շահառուները ձեռք են բերել սույն Պայմանագրի և

Ծրագրի համաձայնագրի առնչությամբ կառավարական կամ պետական մարմինների կամ իշխանությունների բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, լիազորագրերը, լիցենզիաները կամ հաստատումները՝ օրինականորեն հետևելու համար իրենց պարտավորություններին, և բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, լիազորագրերը, լիցենզիաները կամ հաստատումներն ուժի մեջ և վավերական են ու ընդունելի,

ժա) սույն Համաձայնագրի շրջանակներում իր վճարման պարտավորութ-յունները դասվում են որպես բոլոր՝ ներկա և ապագա չերաշխավորված այլ պարտավորությունների վճարման Օրենքին առնվազն համարժեք՝ իր ցանկացած պարտքային գործիքի ներքո,

ժբ) ինքը և Վերջնական շահառուները գործում են 6.05.ե հոդվածին համապատասխան, և պատշաճ ու մանրակրկիտ հարցումների արդյունքում ամրապնդված իր իմացության ու համոզմունքի համաձայն՝ (կատարելով պատշաճ և մանրակրկիտ հարցումներ) Բնապահպանական կամ սոցիալական հայցով որևէ դատաքննություն չի սկսվել և չի սպառնում, որ կսկսվի իր և Վերջնական շահառուների նկատմամբ,

ժգ) ինքը գործում է 6-րդ հոդվածով սահմանված իր բոլոր պարտավո-րություններին համապատասխան:

ժդ) ո՛չ Վարկառուն, Օժանդակողը, Վերջնական շահառուները, նրանց աշխատակիցները և տնօրենները և ո՛չ էլ նրա կամ նրանց անունից հանդես եկող այլ անձ նրա կամ նրանց վերահսկողության ներքո չի դրսևորել կամ չի դրսևորի՝ i) Ծրագրի կամ որևէ պայմանագրով սահմանված գործարքի առնչությամբ որևէ Արգելված վարքագիծ կամ ii) Ահաբեկչության ֆինանսավորմանը կամ Փողերի լվացմանն առնչվող անօրինական գործողություն, և

ժե) Ծրագիրը (առանց սահմանափակման՝ ներառելով բանակցությունը, կնքումը և Վարկից ֆինանսավորված կամ ֆինանսավորվելիք պայմանագրերի կատարումը) չի ներառել կամ պատճառ դարձել որևէ Արգելված վարքագծի:

Վերը շարադրված հավաստիացումները և երաշխիքներն ուժի մեջ են մինչև սույն Պայմանագրի գործողության ավարտը և, բացառությամբ վերը՝ *զ)* պարբերության մեջ նշված հավաստիացման, համարվում են կրկնված յուրաքանչյուր Հատկացման ընդունման, Հատկացման և Վճարման ամսաթվերին:

6.08. <u>ԱՄՀ պահանջները և սահմանափակումները</u>

Վարկառուն պահպանում է ֆինանսական պարտավորություններ ստանձնելու իր կարողությունների մասով առկա

սահմանափակումները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ համաձայնեցված սահմանափակումներով՝ ԱՄՀ Արտոնյալ պայմանների տրամադրման վերաբերյալ Հայաստանի հետ համաձայնագրի կամ ԱՄՀ որևէ այլ փաստաթղթի ներքո:

6.09. <u>Ազնվության մասով հանձնառությունը</u>

ա) Արգելված վարքագիծը

i) Վարկառուն չպետք է ընդգրկվի և երաշխավորում է, որ Օժանդակողը չի ընդգրկվի (և չի լիազորի կամ թույլատրի իր անունից գործող որևէ անձի ընդգրկվելու) Ծրագրին առնչվող որևէ Արգելված վարքագծում, Ծրագրի համար մրցույթի ընթացակարգերում կամ Պայմանագրով նախատեսված որևէ գործարքում:

ii) Վարկառուն պարտավորվում է ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք Բանկը ողջամտորեն պահանջում է՝ Ծրագրի առնչությամբ՝ ենթադրյալ կամ կասկածելի ցանկացած Արգելված վարքագիծ հետաքննելու կամ դադարեցնելու համար, iii) Վարկառուն պարտավորվում է երաշխավորել, որ սույն Վարկից ֆինանսավորվող պայմանագրերը կներառեն անհրաժեշտ դրույթներ՝ Վարկառուին հնարավորություն ընձեռելով հետաքննելու կամ դադարեցնելու Ծրագրի առնչությամբ՝ ենթադրյալ կամ կասկածելի ցանկացած Արգելված վարքագիծ:

բ) **Պատժամիջոցները:** Վարկառուն չի կատարում և ապահովում է, որ Օժանդակողը չկատարի հետևյալը՝ i) գործարար հարաբերությունների մեջ մտնի Պատժամիջոցների ենթարկված անձի հետ կամ ii) ի շահ Պատժամիջոցների ենթարկված անձի՝ ուղղակի կամ անուղղակի կերպով միջոցները հասանելի դարձնի:

գ) **Կառավարումը:** Վարկառուն ձեռնարկում կամ ապահովում է, որ Վերջնական շահառուները և Օժանդակողը խելամիտ ժամանակահատվածում ձեռնարկեն

համապատասխան միջոցներ իր այն աշխատակիցների կամ Օժանդակողի կառավարման մարմինների այն անդամների նկատմամբ, որոնք.

i) դառնում են Պատժամիջոցների ենթարկված անձ,

ii) իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում Արգելված վարքագիծ դրսևորելու առնչությամբ նրանց վերաբերյալ կայացվում է վերջնական և անբեկանելի դատական որոշում՝

ապահովելու համար, որպեսզի նմանատիպ անձը ազատված, հեռացված կամ որևէ այլ կերպով բացառված լինի Վարկի և Ծրագրին առնչվող՝ յուրաքանչյուր Վարկառուի, Վերջնական Շահառուների կամ Օժանդակողի գործողություններից:

6.10. <u>ԵՆԲ Վարկային հաշիվը</u>

Վարկառուն պարտավորվում է նախատեսել ԵՆԲ Վարկային հաշիվ՝ Բանկից Վարկի հատկացումները ստանալու նպատակով: Վարկառուն պարտավորվում է առանձնացնել ԵՆԲ Վարկային հաշիվը իր որևէ այլ ակտիվներից և ապահովել, որ վճարումները այդ հաշվից կատարվեն միայն Ծրագրի իրականացման նպատակով՝ սույն Պայմանագրի, ԵՄ Պատվիրակման համաձայնագրի, ՎՎԲ Իրականացման ֆինանսավորման համաձայնագրի և, եթե առկա են, համապատասխան այլ փաստաթղթերի համաձայն: Այնուհետև Վարկառուն պարտավորվում է ապահովել, որ ԵՆԲ Վարկային հաշիվը երբևէ չլինի անվճարունակ, և որ Վարկառուի ոչ մի այլ վարկատու իրավունք չունենա գումարներ ստանալու այդ հաշվից

6.11. <u>Սակագների ճշգրտումը</u>

Վարկառուն, բոլոր կիրառելի օրենքներին ու գնագոյացմանը համապատասխան, մատչելիության սահմաններում կազմում է սակագնային ծրագիր՝ ջրամատակարարման համակարգին, խմելու ջրի մատակարարմանն ու տեղաբաշխմանը, տեղի կեղտաջրերի արտահոսքին ու մաքրմանը և ոլորտի հետ կապված՝ շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող կայուն ծախսերի (բացառությամբ ամորտիզացիոն ծախսերի) ամբողջական ծածկման սկզբունքի հիման վրա:

Վարկառուն՝ ի դեմս Ջրային տնտեսության պետական կոմիտեի, կանոնավոր կերպով տեղեկացնում է Բանկին սակագների և դրանց ուժի մեջ մտնելու և (կամ) համապատասխան սուբսիդավորման քաղաքականության վերաբերյալ, եթե որևէ փոփոխություն է տեղի ունենում:

6.12. <u>Հաշվեմատյանները և գրանցամատյանները</u>

Վարկառուն համոզվում է, որ Վերջնական շահառուները հաշվի համար համապատասխան հաշվեմատյաններ և գրանցամատյաններ են պահել ու վարել և կշարունակեն պահել և վարել, որոնց մեջ լրիվ և ճշգրիտ գրանցումներ են կատարվում Վերջնական շահառուների բոլոր ֆինանսական գործարքների, ակտիվների ու գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ Ծրագրի հետ կապված ծախսերը՝ համաձայն կիրառելի ՖՀՄՍ-ի:

6.13. <u>Ակտիվների օտարումը</u>

ա) Վարկառուն ապահովում է, որ Վերջնական շահառուները, առանց Բանկի գրավոր համաձայնության, մեկ կամ մի շարք գործարքների միջոցով չօտարեն Ծրագրի մաս կազմող իրենց որևէ ակտիվ՝ անկախ այն հանգամանքից՝ դա կատարվում է կամավոր, թե ոչ կամավոր:

բ) Վարկառուն առնչվող կամ չառնչվող մեկ կամ մի շարք գործարքների միջոցով չի օտարում Ծրագրի մաս կազմող իր որևէ ակտիվ՝ անկախ այն հանգամանքից, թե դա կատարվում է կամավոր, թե ոչ կամավոր կերպով՝ բացի՝ i) համաձայն Կառավարման պայմանագրի կամ ii) Բանկի նախնական գրավոր համաձայնության:

Սույն հոդվածի նպատակներով **«օտարել»-**ը և **«օտարում»-**ը ներառում են որևէ գործողություն, որն ազդում է առևտրի, փոխանցումների, վարձակալության և այլ օտարումների վրա:

6.14. Գործունեության փոփոխությունը

Վարկառուն ապահովում է, որ Վերջնական շահառուների ընդհանուր գործունեության բնույթի մեջ ընդհանուր առմամբ որևէ էական փոփոխություն չկատարվի:

6.15. Ջրային ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը և քննարկումը

Վարկառուն Բանկին տեղեկացնում և հրավիրում է, որպես թույլատրելի մասնակից, մասնակցելու Հայաստանի Հանրապետությունում ջրային ոլորտում տեղի ունեցած փոփոխություններին առնչվող ցանկացած էական քննարկման:

ՀՈԴՎԱԾ 7

Երաշխիքը

7-րդ հոդվածում նշված պարտավորություններն ուժի մեջ են մնում սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ այնքան ժամանակ, քանի դեռ սույն Պայմանագրի ներքո որևէ գումար վճարված չէ, կամ քանի դեռ Վարկն ուժի մեջ է:

7.01. Պարտավորությունների մարման հավասար առաջնահերթությունը

Վարկառուն ապահովում է, որ իր վճարման պարտավորությունները սույն Պայմանագրի շրջանակներում դասակարգվեն բոլոր՝ ներկա և ապագա՝ չապահովված ու չստորակարգված այլ պարտավորությունների վճարման Օրենքին *հավասար առաջնահերթությամբ*՝ իր ցանկացած Պարտքային փաստաթղթի ներքո:

Մասնավորապես, եթե Բանկը պահանջ է ներկայացնում, համաձայն 10.01-ին հոդվածի, կամ եթե Վարկառուի Պարտքային փաստաթղթի ներքո իր որևէ գործակալության կամ մարմնի չերաշխավորված կամ չստորակարգված որևէ պարտավորության չկատարման կամ հավանական չկատարման դեպք է տեղի ունեցել, և այն շարունակվում է, Վարկառուն չի կատարում (կամ թույլատրում) որևէ վճարում՝ կապված որևէ այլ՝ այդպիսի Պարտքային փաստաթղթի հետ (պարբերաբար պլանավորված կամ այլ կերպ)՝ առանց միաժամանակ վճարելու կամ հաջորդ Վճարման ամսաթվին նշանակված հաշվին փոխանցելու որոշակի գումար, որը հավասար է սույն Պայմանագրի ներքո չմարված պարտքի նույն համամասնությանը, ինչ համամասնությամբ այդպիսի Պարտքային փաստաթղթի ներքո վճարումը պետք է ուղղվի այդ Փաստաթղթի ընդհանուր չմարված պարտքին: Այդ նպատակով Պարտքային փաստաթղթի ցանկացած վճարում, որը կատարվում է այլ գործիքի միջոցների հաշվին, և որի առնչությամբ նույն անձինք պահանջ են ներկայացրել Պարտքային փաստաթղթի ներքո, անտեսվում են:

7.02. <u>Լրացուցիչ երաշխիքը</u>

Եթե Վարկառուն որևէ երրորդ կողմի տրամադրում է որևէ երաշխիք Պարտքային փաստաթղթի կատարման վերաբերյալ կամ տրամադրում է որևէ առավելություն կամ նախապատվություն, ապա Վարկառուն, Բանկի պահանջի համաձայն, տրամադրում է համարժեք երաշխիք սույն Պայմանագրի ներքո իր պարտավորությունների կատարման մասով կամ տրամադրում է Բանկին համարժեք առավելություն կամ նախապատվություն:

7.03. <u>Ներառման կարգով հոդվածները</u>

Եթե Վարկառուն ցանկացած այլ վարկատուի հետ կնքում է միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման համաձայնագիր, որը պարունակում է վարկանիշի կորստի վերաբերյալ դրույթ կամ պարտավորությունների մարման հավասար առաջնահերթության կամ պարտավորությունների խաչաձև չկատարման համաձայնություն կամ այլ դրույթ՝ կիրառելի լինելու դեպքում, որոնք ավելի խիստ են, քան սույն Պայմանագրի համարժեք որևէ դրույթն է, Վարկառուն Բանկին անմիջապես տեղեկացնում է այդ մասին և, Բանկի պահանջով, ձեռք է բերում համաձայնություն սույն Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ հոգուտ Բանկի համարժեք դրույթ նախատեսելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 8
Տեղեկատվությունը և այցերը

8.01. Ծրագրին առնչվող տեղեկատվությունը

Վարկառուն անձամբ կամ պարտավորվում է ապահովել, որ Օժանդակողը.

ա) Բանկին տրամադրի՝

i) տեղեկատվություն Ա.2 Առդիրում նշված բովանդակությամբ, ձևով և ժամանակին կամ այլ կերպ, ինչպես ժամանակ առ ժամանակ համաձայնեցվում է սույն Պայմանագրի կողմերի միջև: Կողմերը համաձայնում են, որ Վարկառուին Բանկի կողմից ծանուցելուն պես, բայց միայն ՎՎԲ Առանձին համաձայնագրի կատարումից հետո Ա.2 Առդիրը կարող է փոխարինվել վերանայված Ա.2 Առդիրով՝ հաշվի առնելով համապատասխան Ծրագրին առնչվող տեղեկատվությունը և փոխանցման եղանակը, որը կարող է նշվել ՎՎԲ Առանձին համաձայնագրի համապատասխան բաժիններում, և

ii) Ծրագրի համար ֆինանսավորման, գնումների, իրականացման, կյանքի կոչման և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն կամ լրացուցիչ փաստաթուղթ, որը Բանկը կարող է հիմնավոր կերպով պահանջել ողջամիտ ժամանակահատվածում՝

պայմանով, որ եթե նման տեղեկատվությունը կամ փաստաթուղթը Բանկին չի տրամադրվում ժամանակին, և Վարկառուն չի շտկում բացթողումը Բանկի կողմից գրավոր սահմանված ժամանակահատվածում, Բանկը հնարավորության սահմաններում կարող է լրացնել բացը՝ նշանակելով իր անձնակազմին կամ խորհրդատուի կամ որևէ երրորդ կողմի՝ Վարկառուի հաշվին, և Վարկառուն տվյալ անձանց ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն.

բ) Ծրագրի ցանկացած էական փոփոխություն անհապաղ ներկայացնի Բանկի հաստատմանը՝ հաշվի առնելով Ծրագրի մասով Բանկին ներկայացված բացահայտումները, որոնք հայտնաբերվել են սույն Պայմանագիրը ստորագրվելուց առաջ, այդ թվում՝ Ծրագրի գնի, նախագծման, պլանների, ժամանակացույցի կամ նախատեսված ծախսերի կամ ֆինանսական ծրագրի հետ կապված,

գ) անհապաղ տեղեկացնի Բանկին՝

i) որևէ երրորդ կողմի նախաձեռնած ցանկացած գործողության, բողոքի կամ առարկության, ինչպես նաև Վարկառուի, Օժանդակողի կամ Վերջնական շահառուի կողմից ստացված որևէ իրական դժգոհության, էական դատավարության կամ Բնապահպանական կամ Սոցիալական որևէ կարևոր հայցի մասին, որը, իր տեղեկություններով, մեկնարկել է կամ ընթացքի մեջ է գտնվում կամ սպառնում է դրան,

ii) Վարկառուին հայտնի ցանկացած փաստի կամ դեպքի մասին, որոնք կարող են էապես վնասել Ծրագրի կատարման կամ իրականացման պայմանները,

iii)Բնապահպանական և սոցիալական չափանիշին որևէ անհամապատասխանության մասին և

iv) Բնապահպանական կամ սոցիալական հաստատման ցանկացած կասեցման, չեղյալ հայտարարման կամ փոփոխման մասին,

v) Ծրագրի հետ կապված որևէ Արգելված վարքագծի առնչվող իրական ենթադրության կամ բողոքի մասին,

vi) եթե ինքը տեղեկացել է որևէ փաստի կամ տեղեկատվության մասին, որը հաստատում կամ ողջամտորեն առաջարկում է, որ՝ ա) որևէ Արգելված վարքագիծ է դրսևորվել Ծրագրի առնչությամբ կամ բ) անօրինական կերպով բաժնեմասային կապիտալում կամ Ծրագրում ներդրվել են միջոցներ,

և գործուն միջոցներ ձեռնարկել այս հարցերի լուծման ուղղությամբ, և

դ) Բանկի կողմից պահանջի դեպքում նրան տրամադրի՝

i) 6.05.գ հոդվածի պահանջների կատարումը հավաստող տեղեկանք իր ապահովագրական ընկերության կողմից,

ii) տարեկան կտրվածքով գործող ապահովագրական պոլիսների ցանկ, որը ծածկում է Ծրագրի մաս կազմող՝ ապահովագրված սեփականության ծախսերը՝ առկա հավելավճարների մուծումների կատարման հաստատման հետ միասին, և

iii) Վարկի միջոցներով ֆինանսավորվող պայմանագրերի իսկական օրինակներ և հատկացումներին առնչվող ծախսերի մասին ապացույց:

8.02. <u>Վարկառուին, Օժանդակողին և Վերջնական շահառուներին առնչվող տեղեկատվությունը</u>

Վարկառուն անձամբ կամ ապահովում է, որ Օժանդակողը և Վերջնական շահառուները (եթե կիրառելի է)՝

ա) Բանկին տրամադրեն.

i) Օժանդակողի՝ տարեկան կտրվածքով աուդիտի ենթարկված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) կամ Հայաստանում կիրառվող ընդհանուր հաշվապահական ստանդարտների համաձայն, որոնք հետևողականորեն կիրառվում և աուդիտի են ենթարկվում Բանկի համար ընդունելի անկախ աուդիտորների կողմից՝ միջազգային մակարդակում ընդունված աուդիտորական սկզբունքներին և ստանդարտներին համապատասխան, և

ii) ժամանակ առ ժամանակ լրացուցիչ տեղեկատվություն իր կամ Վերջնական շահառուների ընդհանուր ֆինանսական վիճակի մասին՝ համաձայն Բանկի հիմնավոր պահանջի, կամ իր կամ Վերջնական շահառուների վերաբերյալ նմանատիպ հավաստագրեր՝ 6-րդ հոդվածում նշված պարտավորությունների և Ծրագրի համաձայնագրի պահանջների կատարման վերաբերյալ Բանկի հիմնավոր պահանջի դեպքում,

բ) ապահովի, որ Վերջնական շահառուների հաշվապահական հաշվետվությունները ամբողջովին արտացոլեն Ծրագրի իրականացման հետ կապված ֆինանսական, իրականացման և շահագործման գործընթացները, և

գ) Բանկին անհապաղ տեղեկացնեն՝

i) սույն Պայմանագրի ամսաթվից հետո Վերջնական շահառուների իրավական ակտերի կամ բաժնետիրական կառուցվածքի որևէ էական փոփոխության մասին,

ii) ցանկացած փաստի մասին, որը Վարկառուին կամ Վերջնական շահառուներին պարտավորեցնում է նախօրոք կատարել որևէ ֆինանսական պարտավորություն կամ ԵՄ որևէ ֆինանսավորում,

iii) ցանկացած դեպքի կամ որոշման մասին, որը հանդիսանում է կամ կարող է հանգեցնել 4.03.Ա հոդվածում նկարագրված դեպքերին,

iv) Ծրագրի մաս կազմող որևէ ակտիվին վերաբերող արժեթուղթ որևէ երրորդ կողմի փոխանցելու՝ իր կամ Վերջնական շահառուի ցանկացած մտադրության մասին,

v) Ծրագրի որևէ էական բաղադրիչի սեփականությունից հրաժարվելու առնչությամբ Վերջնական շահառուի որևէ մտադրության մասին,

vi) որևէ փաստի կամ իրադարձության մասին, որը հիմնավոր կերպով կարող է կանխել Վարկառուի որևէ պարտավորության կատարումը սույն Պայմանագրի ներքո,

(vii) 10.01-ին հոդվածում թվարկված որևէ դեպքի մասին, որը առաջացել է կամ այդպիսի սպառնալիք կա կամ կանխատեսվում է,

(viii) որևէ փաստի կամ դեպքի մասին, որն ազդում է՝ ա) Օժանդակողի կամ Վերջնական շահառուի կառավարման մարմինների որևէ անդամի վրա կամ բ) Պատժամիջոցների ենթարկված անձ հանդիսացող՝ Օժանդակողի կամ Վերջնական շահառուի վերահսկող մարմինների որևէ անդամի վրա,

(ix) որևէ դատավարության, արբիտրաժի կամ վարչական վարույթի կամ հետաքննության մասին, որոնք առկա են, սպառնում են կամ արդեն ընթացքի մեջ են և կարող են հանգեցնել էական անբարենպաստ փոփոխության, և (կամ)

(x) օրենքով թույլատրված սահմաններում՝ դատարանի, ղեկավարության կամ նմանատիպ պետական իշխանության կողմից իրականացված որևէ դատավարության, արբիտրաժի, վարչական վարույթի կամ հետաքննության մասին, որը վերաբերում է Փոխառությանը կամ Ծրագրին առնչվող Արգելված վարքագծին և, իր համոզմամբ, ընթացքում է, սպառնացող կամ առկախված Օժանդակողի կամ Վերջնական շահառուի կամ նրա վերահսկող մարմինների կամ Օժանդակողի կամ Վերջնական շահառուի կառավարման մարմինների անդամների կամ Վարկառուի աշխատակիցների նկատմամբ,

(xi) Վարկառուի, Օժանդակողի ու Վերջնական շահառուի կողմից ձեռնարկված ցանկացած միջոցառման մասին՝ սույն Պայմանագրի 6.09-րդ հոդվածի համաձայն:

8.03. <u>Հետաքննությունները և տեղեկատվությունը</u>

Վարկառուն պարտավորվում է.

ա) ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք Բանկը ողջամտորեն պահանջում է, հետաքննելու և (կամ) դադարեցնելու համար որևէ ենթադրյալ կամ կասկածվող գործողություն, որն ունի 6.09-րդ հոդվածում (*Ազնվության մասով հանձնառությունը*) նկարագրված բնույթը,

բ) Բանկին տեղեկացնել այն միջոցառումների մասին, որոնք ձեռք են առնվել որևէ կորստի համար պատասխանատու անձանց գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում ստանալու ուղղությամբ, և

գ) օժանդակել ցանկացած հետաքննության, որը կարող է իրականացնել Բանկը նման գործողության առնչությամբ:

8.04. <u>Այցելությունները, մատչելիության իրավունքը և հետաքննությունը</u>

ա) Վարկառուն թույլատրում և ապահովում է, որ Օժանդակողը և Վերջնական շահառուները թույլատրեն Բանկի կողմից նշանակված անձանց, ինչպես նաև Եվրոպական միության այլ հաստատությունների կամ

մարմինների կողմից նշանակված անձանց, երբ դա պահանջվում է Եվրոպական միության Օրենքի համապատասխան պարտադիր դրույթներով, ինչպես նաև իրավասու ԵՄ հաստատությունների՝ ներառյալ Եվրոպական համայնքների աուդիտորների դատարանի, Եվրոպական հանձնաժողովի և Խարդախության պայքարի դեմ եվրոպական գրասենյակի կողմից նշանակված անձանց.

i) այցելելու Ծրագրի մաս կազմող վայրերը, կայանները, շինարարական հրապարակները ու իրականացնելու այնպիսի ստուգումներ, որոնք հարկավոր են սույն Պայմանագրի և Ծրագրի ֆինանսավորման առնչությամբ,

ii) զրուցելու Վարկառուի, Օժանդակողի և Վերջնական շահառուների ներկայացուցիչների հետ և, առանց խոչընդոտի, շփվելու Ծրագրում ներգրավված կամ դրա հետ առնչություն ունեցող ցանկացած այլ անձի հետ, և

iii) Ծրագրի կատարման առնչությամբ վերանայելու Վարկառուի, Օժանդակողի և Վերջնական շահառուների հաշվեմատյաններն ու գրանցամատյանները և ստանալու համապատասխան փաստաթղթերի պատճեններն այն դեպքերում, երբ կիրառելի օրենքները դա թույլ են տալիս:

բ) Վարկառուն նպաստում է Բանկի և ԵՄ այլ հաստատությունների կամ մարմինների կողմից ենթադրվող կամ կասկածվող՝ Արգելված վարքագծի ցանկացած դեպքի հետաքննությանը և Բանկին տրամադրում ու ապահովում է, որ Վերջնական շահառուները Բանկին տրամադրեն կամ ապահովեն, որ Բանկին տրամադրվի սույն հոդվածում նկարագրված նպատակներից բխող ամբողջ անհրաժեշտ աջակցությունը:

գ) Վարկառուն ընդունում է, որ Բանկը կարող է պարտավորված լինել Վարկառուին և Ծրագրին առնչվող այնպիսի տեղեկատվություն փոխանցել ԵՄ ցանկացած իրավասու հաստատության կամ մարմնի, ներառյալ Եվրոպական համայնքների աուդիտորների դատարանը, Եվրոպական հանձնաժողովը և Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը, որն անհրաժեշտ է, Եվրոպական համայնքների օրենքների համաձայն, իրենց առաջադրանքներն իրականացնելու համար՝ ԵՄ Իրավունքի համապատասխան պարտադիր դրույթների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 9

Վճարները և ծախսերը

9.01. Հարկերը, տուրքերը և վճարները

Վարկառուն վճարում է բոլոր հարկերը, տուրքերը, վճարները և ցանկացած բնույթի այլ պարտադիր վճար, ներառյալ պետական տուրքը և գրանցման վճարները, որոնք ծագում են սույն Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի կատարումից կամ իրականացումից՝ կիրառելի սահմաններում Փոխառության համար որևէ երաշխիքի ստեղծման, կատարելագործման, գրանցման կամ կիրարկման համար:

Վարկառուն վճարում է ամբողջ հիմնական գումարը, տոկոսը, փոխհատուցման գումարը և սույն Պայմանագրի ներքո վճարման ենթակա մյուս գումարները առանց որևէ ազգային կամ տեղական հարկման նվազեցման. եթե Վարկառուն պարտավորվում է կատարել նման նվազեցում, ապա նա այնպիսի հաշվարկով վճարում կկատարի Բանկին, որ նվազեցումից հետո Բանկի կողմից ստացվող զուտ գումարը համարժեք լինի վճարման ենթակա գումարին:

9.02. <u>Այլ գանձումներ</u>

Վարկառուն կրում է բոլոր գանձումների և այլ ծախսերի վճարման պարտավորությունը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ տարադրամի փոխանակման գանձումները, որոնք առաջանում են սույն Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի նախապատրաստման, փոփոխման, կատարման, իրականացման և դադարեցման կամ սույն Պայմանագրից կամ այլ համապատասխան փաստաթղթից հրաժարման, ինչպես նաև Վարկի համար որևէ երաշխիքի փոփոխման, ստեղծման, կառավարման, իրականացման և իրացման առնչությամբ:

9.03. <u>Ավելացած ծախսերը, փոխհատուցումը և հաշվանցումը</u>

ա) Վարկառուն Բանկին վճարում է ցանկացած գումար կամ ծախս, որն առաջացել է, կամ Բանկը կրել է որևէ օրենքի կամ կանոնակարգի ներդրման կամ փոփոխության (կամ մեկնաբանման, կառավարման կամ կիրառման) արդյունքում կամ ցանկացած օրենքի կամ կանոնակարգի կատարման արդյունքում՝ սույն Պայմանագրի ստորագրման ամսաթվից հետո, և որոնց համաձայն՝

i) Բանկը պարտավոր է կրել լրացուցիչ ծախսեր ֆինանսավորելու կամ կատարելու համար սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, կամ

ii) սույն Պայմանագրի ներքո Բանկին վճարվելիք ցանկացած գումար կամ ֆինանսական եկամուտ՝ առաջացած Բանկի կողմից Վարկառուին Վարկի կամ Վարկ տրամադրելուց, նվազեցվում է կամ վերացվում:

բ) Չսահմանափակելով սույն Պայմանագրի կամ կիրառելի Օրենքի ներքո Բանկի որևէ իրավունք՝ Վարկառուն պարտավոր է հատուցել և Բանկին զերծ պահել որևէ կորստից, որը հետևանք է Վարկառուի կողմից կատարված որևէ վճարման կամ մասնակի մարման, որը տեղի է ունենում սույն Պայմանագրի հստակ սահմանված ձևից տարբերվող ձևով:

գ) Բանկը կարող է հաշվանցել սույն Պայմանագրի ներքո Վարկառուի կողմից կատարվելիք ցանկացած պարտավորություն (Բանկին սեփականության իրավունքով պատկանող չափով) Բանկի կողմից Վարկառուին ցանկացած պարտավորության դիմաց (անկախ մարման ենթակա լինելու փաստից)՝ անկախ վճարման վայրից, հաշվարկային մասնաճյուղից կամ որևէ պարտավորության արժույթից: Եթե պարտավորությունները տարբեր արժույթով են, ապա Բանկը կարող է հաշվանցման նպատակով փոխարկել ցանկացած պարտավորություն շուկայական փոխարժեքով իր սովորական գործունեության ընթացքում: Եթե որևէ պարտավորություն լուծարված կամ սահմանված չէ, ապա Բանկը կարող է հաշվանցել այն իր կողմից գնահատված այնպիսի գումարով, որ բարեխիղճ կերպով համապատասխանում է այդ պարտավորության գումարին:

ՀՈԴՎԱԾ 10
Պարտավորությունը չկատարելու դեպքերը

10.01. Հետվճարման պահանջի իրավունքը

Բանկի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու դեպքում Վարկառուն անմիջապես հետ է վճարում Վարկը ամբողջությամբ կամ մասամբ սույն Պայմանագրի ներքո կուտակված տոկոսների կամ այլ չվճարված գումարների հետ միասին՝ համաձայն հետևյալ դրույթների.

10.01.Ա. **Անհապաղ պահանջը**

Բանկը կարող է անմիջապես նման պահանջ ներկայացնել.

ա) Եթե Վարկառուն չի վճարում սույն Պայմանագրով վճարման ենթակա գումարը նշված վայրում, նշված արժույթով, պատշաճ ժամկետում, եթե՝

i) չվճարելու պատճառը պայմանավորված չէ վարչական կամ տեխնիկական սխալով կամ Խաթարման իրավիճակով, և

ii) վճարումը չի կատարվում նշված վճարման ամսաթվից հետո 3 Աշխատանքային օրվա ընթացքում,

բ) եթե Վարկառուի, Օժանդակողի կամ Վերջնական շահառուի կողմից կամ անունից Բանկին տրված որևէ տեղեկատվություն կամ փաստաթուղթ կամ որևէ հավաստիացում, երաշխիք կամ հաստատում, որը Վարկառուի կողմից կատարվել է կամ համարվում է կատարված սույն Պայմանագրում կամ դրա համաձայն, կամ սույն Պայմանագրի կատարմանը կամ դրա շուրջ

բանակցություններին, ճշգրիտ չէ, ոչ ամբողջական է կամ մոլորեցնող, կամ պարզվում է, որ այդպիսին է որևէ էական մասով,

գ) Վարկառուի կողմից որևէ այլ փոխառության կամ Վարկին չառնչվող ցանկացած ֆինանսական գործարքի մասով որևէ այլ պարտավորություն չկատարվելու դեպքում՝

i) Վարկառուից պահանջվում է կամ հնարավոր է պահանջել կամ պայմանագրային արտոնյալ ժամկետը լրանալուց հետո կպահանջվի կամ հնարավոր կլինի պահանջել մարման ժամկետից առաջ կանխավճարել, մարել, փակել կամ դադարեցնել այդ մյուս փոխառությունը կամ պարտավորությունը, կամ

ii) այդ որևէ այլ փոխառությունից կամ պարտավորությունից բխող ֆինանսական հանձնառությունը չեղյալ է հայտարարվում կամ կասեցվում է,

դ) եթե Վարկառուն ի վիճակի չէ ճիշտ ժամկետին վճարելու իր պարտքերը կամ ժամանակավորապես կասեցնում է իր պարտքերի վճարումը կամ փոխզիջումային համաձայնության է գալիս կամ փորձում է նման համաձայնության գալ իր վարկատուների հետ,

ե) եթե գրավատերը կամ դատարանի իրավասության շրջանակներում կամ որևէ այլ իրավասու վարչական պաշտոնյայի կամ անձի կողմից նշանակված ընդունողը, լուծարողը, կառավարիչը կամ վարչական ընդունողը կամ այլ նման պաշտոնյա ստանձնում է Օժանդակողի կամ Վերջնական շահառուի բիզնեսի կամ ակտիվների մի մասի կամ Ծրագրի մաս կազմող որևէ գույքի տնօրինումը,

զ) եթե Ծրագրի մաս կազմող որևէ գույքի նկատմամբ իրականացվում կամ կիրառվում է որևէ կալանք, բռնագրավում, արգելանք կամ այլ գործընթաց, և որը չի կատարվել կամ ընդհատվել է 14 (տասնչորս) օրվա ընթացքում,

է) եթե սույն Պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ Վարկառուի կամ Օժանդակողի դրության մասով տեղի է ունեցել Էական անբարենպաստ փոփոխություն,

ը) եթե Վարկառուի, Օժանդակողի կամ Վերջնական շահառուի համար անօրինական է կամ այդպիսին է դառնում սույն Պայմանագրի ներքո պարտավորություններից որևէ մեկի կատարումը, կամ սույն Պայմանագիրը չի գործում համաձայն իր դրույթների, կամ սույն Պայմանագիրը, Վարկառուի, Օժանդակողի կամ Վերջնական շահառուի պնդմամբ, չի գործում համաձայն իր դրույթների,

թ) եթե Վարկառուի ստանձնած որևէ պարտավորություն, որը նշված է Շրջանակային համաձայնագրում՝ կապված Բանկի կամ Եվրոպական միության միջոցներից Վարկառուի տարածքում որևէ Վարկառուի տրվող փոխառություն հետ, դադարում է իրականացվել,

ժ) եթե Վարկառուն չի կատարում ՎՎԲ Վարկային փաստաթղթերի կամ ՎՎԲ Առանձին համաձայնագրի կամ ՎՎԲ Իրականացման ֆինանսավորման համաձայնագրի ներքո ստանձնած իր պարտավորություններից որևէ մեկը, կամ

ժա) եթե Վարկառուն չի կատարում իր պարտավորությունները՝ կապված Բանկի կամ ԵՄ կողմից տրվող որևէ այլ փոխառության կամ ֆինանսական գործիքի հետ, կամ որևէ այլ պարտավորություն՝ կապված Եվրոպական միության կողմից Վարկառուին տրվող դրամական միջոցների ստացման հետ,

ժբ) եթե Վարկառուի, Օժանդակողի կամ Վերջնական շահառուի լուծարման հետ կապված՝ որևէ կորպորատիվ գործողություն, դատական վարույթ կամ այլ ընթացակարգ կամ քայլ է ձեռնարկվում, ինչպես նաև հրաման կամ որոշում է արձակվում, կամ եթե Օժանդակողը կամ Վերջնական շահառուն քայլեր են ձեռնարկում կապիտալի զգալի նվազեցման ուղղությամբ, հայտարարվում են սնանկ, դադարեցնում կամ որոշում են դադարեցնել բիզնեսը կամ գործունեությունն ամբողջությամբ կամ դրա զգալի մասը:

10.01.Բ. **Փոխհատուցման ծանուցումից հետո պահանջը**

Բանկը նաև կարող է նման պահանջ ներկայացնել.

ա) եթե Վարկառուն, Օժանդակողը կամ Վերջնական շահառուն չեն կատարում սույն Պայմանագրով սահմանված որևէ պարտավորություն, և որը չի համարվում որպես 10.01.Ա հոդվածում նշված պարտավորություն, կամ

բ) եթե Դեկլարատիվ դրույթներում նշված որևէ փաստ էականորեն փոփոխվի և չվերականգնվի, և եթե տվյալ փոփոխությունը վնաս հասցնի Բանկի՝ որպես փոխատուից Վարկառուին շահերին կամ բացասաբար ազդի Ծրագրի իրականացման կամ գործարկման վրա, կամ ցանկացած այլ այդպիսի պարտավորություն դադարի լինել վավեր և պարտադիր,

եթե չկատարումը կամ չկատարման հանգեցնող հանգամանքը հնարավոր չէ շտկել և չի շտկվում Բանկի կողմից, համապատասխանաբար, Վարկառուին, Օժանդակողին կամ վերը նշված Վերջնական շահառուին ներկայացված ծանուցման մեջ սահմանված պատշաճ ժամանակահատվածում:

10.02. <u>Օրենքով սահմանված այլ իրավունքներ</u>

10.01-ին հոդվածը չի սահմանափակում օրենքով սահմանված՝ Բանկի ցանկացած այլ իրավունք՝ Վարկի կանխավճար պահանջելու համար:

10.03. <u>Փոխհատուցումը</u>

10.03.Ա. **Ֆիքսված տոկոսադրույքով տրանշները**

Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի մասով՝ 10.01-ին հոդվածի ներքո ցանկացած պահանջի դեպքում Վարկառուն Բանկին վճարում է պահանջվող գումարը Կանխավճարի փոխհատուցման հետ միասին՝ ցանկացած հիմնական գումարի մասով, որը ենթակա է նախապես վճարման: Նման Կանխավճարի փոխհատուցումը կուտակվում է Բանկի պահանջագրում սահմանված վճարման ամսաթվից և հաշվարկվում է այն հիմքով, որ կանխավճարը կատարվում է սահմանված ամսաթվին:

10.03.Բ. **Լողացող տոկոսադրույքով տրանշները**

Լողացող տոկոսադրույքով տրանշի մասով՝ 10.01-ին հոդվածի ներքո ցանկացած պահանջի դեպքում Վարկառուն Բանկին վճարում է պահանջվող գումարը ընթացիկ արժեքի 0.15%-ին (տասնհինգ բազիսային կետ) համարժեք գումարի հետ միասին, որը տարեկան կտրվածքով հաշվարկվում և կուտակվում է վճարման ենթակա գումարի վրա, որը պետք է նախապես վճարվի այնպես, ինչպես այն տոկոսը, որը կհաշվարկվեր և կկուտակվեր, եթե այդ գումարը մնար չմարված՝ Տրանշի մարման ժամանակացույցին համապատասխան՝ մինչև Մարման ամսաթիվը:

Արժեքը հաշվարկվում է Վերաբաշխման դրույքաչափին հավասար զեղչված դրույքաչափով, որը կկիրառվի յուրաքանչյուր համապատասխան Վճարման ամսաթվին:

10.03.Գ. **Ընդհանուր դրույթներ**

10.03-րդ հոդվածի համաձայն՝ Վարկառուի կողմից վճարման ենթակա գումարները վճարվում են Բանկի պահանջագրում սահմանված կանխավճարի ամսաթվին:

<u>10.04. Պատասխանատվությունից հրաժարման բացառումը</u>

Բանկի կողմից իր որևէ իրավունքներ կամ պաշտպանության միջոցներ չիրականացնելը, հետաձգելը կամ դրանց մասնակի կամ առանձին իրականացնելը՝ համաձայն սույն Պայմանագրի, չի կարող մեկնաբանվել որպես այդպիսի իրավունքներից կամ պաշտպանության միջոցներից հրաժարում: Սույն Պայմանագրում նախատեսված իրավունքներն ու պաշտպանության միջոցները փոխլրացնող բնույթ են կրում և չեն բացառում օրենքով նախատեսված այլ իրավունքներն ու պաշտպանության միջոցները:

<u>ՀՈԴՎԱԾ 11</u>

Իրավունքը և իրավազորությունը, այլ դրույթներ

11.01. Կարգավորող իրավունքը

Սույն Պայմանագիրը և դրանից բխող կամ դրա հետ կապված ոչ պայմանագրային պարտավորությունները կարգավորվում են Անգլիայի և Ուելսի օրենքներով:

11.02. Իրավազորությունը

ա) Պայմանագրի Կողմերը սույնով երկուստեք համաձայնում են, որ սույն Պայմանագրին առնչվող բոլոր վեճերը ներկայացվում են Եվրոպական միության արդարադատության դատարան (**Դատարան**), և Կողմերը սույնով ենթարկվում են Դատարանի իրավազորությանը:

բ) Պայմանագրի Կողմերը սույնով հրաժարվում են Դատարանի իրավազորության դեմ առարկելու իրենց անձեռնմխելիությունից և իրավունքներից: Դատարանի որոշումը, համաձայն սույն հոդվածի, վերջնական է և պարտադիր յուրաքանչյուր Կողմի համար՝ առանց սահմանափակման կամ վերապահման:

11.03. Կատարման վայրը

Սույն Պայմանագրի համաձայն՝ կատարման վայրը Բանկի նստավայրն է, եթե Բանկի հետ չկա այլ հստակ գրավոր պայմանավորվածություն:

11.04. Վճարման ենթակա գումարների մասին տվյալները

Սույն Պայմանագրից բխող ցանկացած իրավական գործողության ժամանակ Բանկի հավաստագիրը՝ կապված սույն Պայմանագրի ներքո Բանկին վճարման ենթակա որևէ գումարի կամ տոկոսի հետ, ակնհայտ սխալի բացակայության դեպքում անմիջապես փաստում է նման տոկոսի կամ գումարի մասին:

11.05. Երրորդ կողմերի իրավունքները

Այն անձը, որը չի հանդիսանում սույն Պայմանագրի կողմ, չի կարող կատարել դրա պայմանները կամ օգտվել դրանցից՝ Պայմանագրերի մասին (Երրորդ կողմերի իրավունքները) 1999 թվականի ակտի համաձայն, ինչպես նաև չի պահանջվում որևէ երրորդ կողմի համաձայնությունը սույն Պայմանագրում որևէ փոփոխություն կատարելու կամ դրա գործողությունը դադարեցնելու դեպքերում:

11.06. Ամբողջական համաձայնագիրը

Սույն Պայմանագիրը հանդիսանում է Բանկի և Վարկառուի միջև սույն փաստաթղթի ներքո տրամադրման վերաբերյալ ամբողջական

համաձայնագիր և փոխարինում է նույն հարցի շուրջ ցանկացած այլ՝ կայացած կամ ենթադրյալ, նախորդ համաձայնության:

11.07. <u>Անվավերությունը</u>

Եթե որևէ պահի սույն Պայմանագրի որևէ պայման համարվում կամ դառնում է անօրինական, անվավեր կամ որևէ կերպով կատարման ոչ ենթակա, կամ սույն Պայմանագիրը որևէ իմաստով համարվում կամ դառնում է ուժը կորցրած՝ համաձայն որևէ իրավական համակարգում գործող օրենքների, ապա այդպիսի անօրինականությունը, անվավերությունը, կատարման ոչ ենթակա լինելը կամ ուժը կորցրած լինելը ազդեցություն չեն ունենում՝

ա) այդ իրավական համակարգում սույն Պայմանագրի որևէ այլ պայմանի օրինականության, վավերության և կատարման ենթակա լինելու կամ այդ իրավական համակարգում որևէ այլ կերպով սույն Պայմանագիրն ուժի մեջ լինելու վրա, կամ

բ) իրավական այլ համակարգերում սույն Պայմանագրի՝ այդ կամ որևէ այլ պայմանի օրինականության, վավերության և կատարման ենթակա լինելու կամ, այդ այլ իրավական համակարգերում գործող օրենքների համաձայն, սույն Պայմանագիրն ուժի մեջ լինելու վրա:

11.08. <u>Փոփոխությունները</u>

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք փաստաթղթավորվում են առանձին արձանագրությամբ («**Փոփոխության վերաբերյալ արձանագրություն»**): Այդպիսի արձանագրությունն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից անգլերենով տրված իրավական եզրակացության ընդունումից հետո, որը վերաբերում է Վարկառուի կողմից Փոփոխության վերաբերյալ արձանագրության պատշաճ կատարմանը և վերջինիս վավեր, կատարման ենթակա և պարտադիր լինելու բնույթին: Նման իրավական եզրակացությունը զուգակցվում է բոլոր համապատասխան փաստաթղթերով, որոնք վկայում են նման Փոփոխության վերաբերյալ արձանագրություն կնքելու Վարկառուի Օրենքի մասին, ինչպես նաև՝ Փոփոխության վերաբերյալ նման արձանագրության պատշաճ վավերացման ապացույցով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենքների:

Փոփոխության վերաբերյալ որևէ արձանագրություն ուժի մեջ չի մտնում մինչև Բանկը Վարկառուին ուղարկում է նամակ, որով հաստատում է վերոնշյալ ապացույցների ընդունումը և տրամադրում է ամսաթիվ, երբ Փոփոխության վերաբերյալ համապատասխան արձանագրությունն ուժի մեջ է մտնում, և այդ նամակն անհերքելի ապացույց է, որ համապատասխան Փոփոխության վերաբերյալ համապատասխան

արձանագրությունն ուժի մեջ է մտել:

Կասկածներից խուսափելու համար, մինչ նման նամակի տրամադրումը Բանկի կողմից ո՛չ Վարկառուն և ո՛չ էլ Բանկը չունեն որևէ պահանջ կամ չեն կրում որևէ պատասխանատվություն միմյանց նկատմամբ համապատասխան Փոփոխության վերաբերյալ արձանագրության ներքո կամ առնչությամբ:

11.09. <u>Կրկնօրինակները</u>

Սույն Պայմանագիրը կարող է կատարվել ցանկացած թվով կրկնօրինակներով, որոնք բոլորը միասին կազմում են նույն փաստաթուղթը: Յուրաքանչյուր կրկնօրինակ բնօրինակ է, սակայն բոլոր կրկնօրինակները միասին կազմում են նույն փաստաթուղթը:

<u>ՀՈԴՎԱԾ 12</u>

<u>Եզրափակիչ դրույթներ</u>

12.01. <u>Յուրաքանչյուր Կողմին ներկայացվող ծանուցումները</u>

Սույն Պայմանագրի ներքո սույն Պայմանագրի յուրաքանչյուր Կողմին հասցեագրված ծանուցումներն ու այլ հաղորդագրություններն ուղարկվում են ստորև նշված հասցեներով կամ ֆաքսի համարներով կամ այլ հասցեով կամ ֆաքսով, որոնք կողմերը նախկինում գրավոր հայտնել են միմյանց:

Բանկի կողմից՝	Ուղղված՝ Ops B 98-100 boulevard Konrad Adenauer L-2950 Luxembourg Ֆաքսի հմ.՝ (+352) 4379 47495
Վարկառուի կողմից՝	Ուղղված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն Մելիք Ադամյան փ. 1, Երևան, 0010 Ֆաքսի հմ.՝ (+37460) 700 358

12.02. <u>Ծանուցման ձևաթուղթը</u>

Սույն Պայմանագրի համաձայն՝ ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն պետք է լինի գրավոր:

Ծանուցումները և այլ հաղորդագրությունները, որոնց համար սահմանված են ժամկետներ սույն Պայմանագրով, կամ որոնցով սահմանված են հասցեատերերի համար պարտադիր ժամկետներ, կարող են հանձնվել առձեռն, պատվիրված նամակով կամ ֆաքսով: Նման ծանուցումները և հաղորդագրությունները համարվում են ստացված մյուս Կողմի կողմից առաքման օրը առձեռն կամ պատվիրված նամակով հանձնելու դեպքում կամ՝ փոխանցման ստացականով՝ ֆաքսի դեպքում:

Մյուս ծանուցումները կամ հաղորդագրությունները կարող են տրվել առձեռն, պատվիրված նամակով կամ ֆաքսով կամ, Կողմերի գրավոր համաձայնությամբ, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցով:

Չխախտելով վերը նշված պարբերությունների համաձայն ֆաքսով ուղարկված որևէ ծանուցման վավերությունը՝ ֆաքսով ուղարկված ցանկացած ծանուցման պատճենը համապատասխան Կողմին նաև ուղարկվում է նամակով՝ ամենաուշը հաջորդ Աշխատանքային օրը:

Սույն Պայմանագրի ցանկացած դրույթի համաձայն Վարկառուի կողմից տրված ծանուցումները Բանկի պահանջի դեպքում ներկայացվում են Բանկ այն բավարար փաստերի հետ միասին, որոնցով հավաստվում են Վարկառուի անունից ծանուցումն ստորագրելու լիազորությամբ օժտված անձի կամ անձանց իրավասությունը, ինչպես նաև՝ այդ անձի կամ անձանց՝ վավեր ստորագրության նմուշները:

12.03. <u>Կողմերի փոփոխությունները</u>

Վարկառուն չի կարող սույն Պայմանագրի ներքո իր իրավունքներից կամ պարտավորություններից որևէ մեկը հանձնել կամ փոխանցել՝ առանց Բանկի կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության:

Բանկը կարող է սույն Պայմանագրի ներքո իր իրավունքները կամ արտոնությունները հանձնել ամբողջությամբ կամ մասնակիորեն կամ փոխանցել (զիջման, ենթամասնակցության կամ որևէ այլ ձևով) իր իրավունքները կամ արտոնությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն:

12.04. <u>Լեզուն</u>

Վարկառուի կողմից Բանկին տրամադրվող կամ Վարկառուի կողմից այլ սուբյեկտներից, այդ թվում, առանց սահմանափակման, Վերջնական շահառուներից Բանկին տրամադրելու նպատակով ձեռք բերվող բոլոր փաստաթղթերի ու ամբողջ տեղեկատվության լեզուն անգլերենն է:

12.05. <u>Սույն Պայմանագրի գործողության մեջ մտնելը</u>

Սույն Պայմանագիրը գործողության մեջ է մտնում միայն Բանկի կողմից, Բանկի համար ընդունելի ձևով ու բովանդակությամբ, սույն Պայմանագրի 1.04.Ա.ա) հոդվածով պահանջվող ապացույցերը ստանալուց հետո:

Սույն Պայմանագիրը գործողության մեջ չի մտնի մինչև Բանկը Վարկառուին ուղարկի վերը նշված պայմանների կատարումը հավաստող նամակ, ինչպես նաև ծանուցում այն ամսաթվի մասին, երբ սույն Պայմանագիրը գործողության մեջ է մտնում («**Գործողության մեջ մտնելու ամսաթիվ»),** և այդ նամակը սպառիչ ապացույց է, որ սույն Պայմանագիրը գործողության մեջ է մտել:

Կասկածելի դեպքերից խուսափելու համար, մինչև այն պահը, երբ նամակը ուղարկվել է Բանկի կողմից, ո՛չ Վարկառուն, ո՛չ էլ Բանկը որևէ պահանջ չպետք է ունենան միմյանց դեմ, և որևէ պատասխանատվություն չպետք է կրեն սույն Պայմանագրի ներքո կամ դրա հետ կապված:

12.06. Դեկլարատիվ դրույթները, Առդիրները և հավելվածները

Դեկլարատիվ դրույթները և հետևյալ Առդիրները կազմում են սույն Պայմանագրի մաս:

Առդիր Ա	Ծրագրին ներկայացվող տեխնիկական պահանջները և հաշվետվությունը
Առդիր Բ	EURIBOR-ի սահմանումը
Առդիր Գ	Վարկառուի համար ձևաթղթերը
Առդիր Դ	Վարկառուի կողմից տրամադրվող հավաստագիրը

Հետևյալ հավելվածները ներկայացվում են սույն Պայմանագրին կից՝

Հավելված Ի Լիազորագիր

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն Պայմանագրի Կողմերը ապահովել են սույն Պայմանագրի կազմումը չորս բնօրինակով՝ անգլերենով, և, համապատասխանաբար, ապահովել են, որ ֆինանսների նախարարի տեղակալ պարոն Վախթանգ Միրումյանը և իրավախորհրդատու Ժուլիեն Բրուսո Կուելլոն իրենց անունից ստորագրեն սույն Պայմանագրի յուրաքանչյուր էջին:

Երևանում՝ 2014 թվականի հունիսի 24-ին

Լյուքսեմբուրգում՝ 2014 թվականի հունիսի 27-ին

Ստորագրված է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ կողմից և անունից՝	Ստորագրված է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ կողմից և անունից՝

Գ. Խաչատրյան

Ֆինանսների նախարար

Հ. Օլբերս

Վարչության պետ

Վ. Ջարդեի

Բաժնի պետ

Առդիր Ա

Ա.1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակը, աշխատանքների իրականացման վայրը

Առաջարկվող ծրագիրն իրենից ներկայացնում է Հայաստանի փոքր քաղաքներում և համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուղու) ենթակառուցվածքների վերականգնումն ու կառուցումը: Ծրագիրն իրականացվելու է մարզեր սպասարկող չորս ընկերությունների կողմից՝ «Նոր Ակունք» ՓԲԸ, «Շիրակ» ՓԲԸ, «Լոռի» ՓԲԸ և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ («ՀՋԿ»), Ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ)-ի պատասխանատվության ներքո: Միջազգային օպերատորների հետ առկա կառավարման պայմանագրերը կերկարաձգվեն՝ ապահովելու համար օպերատորների տեխնիկական և առևտրային կարողությունները, ինչպես նաև ներդրումների որակը: Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել խմելու ջրի կայուն և շարունակական

մատակարարումը և բարելավել կոյուղաջրերի սանիտարահիգիենիկ հեռացումը համակարգի հիմնական կետերում, ինչպես նաև ապահովել կոյուղաջրերի մաքրման էկոլոգիապես առողջ և կայուն գործընթաց «Նոր ակունք»-ի սպասարկման տարածքում: Դրանով ծրագիրը կնպաստի բնակչության կյանքի պայմանների տևական բարելավմանը, կնպաստի մարզերում ջրային ռեսուրսների կայուն և էկոլոգիապես առողջ կառավարմանը և կբարելավի շրջակա միջավայրի վիճակը, ինչպես նաև կնվազեցնի առողջության համար բացասական հետևանքները:

Այս ծրագրի նպատակային խմբերը հետևյալ վայրերի բնակիչներն են՝ ա) Վանաձոր, Գյումրի և Արմավիր քաղաքները (մոտ 275,000 բնակիչ), բ) Լոռու, Շիրակի և Արմավիրի մարզերում ավելի լայն շրջանները (մոտ 65,000 բնակիչ), ինչպես նաև՝ գ) մինչև 40 փոքր քաղաք և գյուղ Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում (մոտ 62,000 բնակիչ), այսինքն՝ ընդամենը մոտ 400.000 շահառու բնակիչ: Արմավիրի (Մեծամոր) (Նորապատ) մոտ 47,000 բնակիչների համար կիրականացվի միայն կոյուղաջրերի մաքրման բաղադրիչը:

Նկարագրությունը

Ծրագրի նպատակն է ապահովել խմելու ջրի կայուն և շարունակական մատակարարումը և բարելավել կոյուղաջրերի սանիտարահիգիենիկ հեռացումը համակարգի հիմնական կետերում, ինչպես նաև ապահովել կոյուղաջրերի մաքրման էկոլոգիապես առողջ և կայուն գործընթաց «Նոր ակունք»-ի սպասարկման տարածքում:

Սույն ծրագիրը ընդհանուր Համայնքային ենթակառուցվածքների II ծրագրի (Փուլ 1-3) երրորդ փուլն է, բոլոր նախորդ փուլերը ֆինանսավորվել են ՎՎԲ-ի կողմից: Ծրագիրը ներառում է.

1. Վանաձորում և Գյումրիում ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների շարունակական վերանորոգումը, ինչպես նաև Լոռու և Շիրակի մարզերի գյուղական շրջաններում այդ օբյեկտների բարեկարգումը:
2. Արմավիրի մարզում ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների շարունակական վերականգնումը, ինչպես նաև համատեղ մաքրման կայանի կառուցումը Արմավիրի (Մեծամոր) (Նորապատ) քաղաքների համար:
3. Ջրամատակարարման և կոյուղաջրերի հավաքման համակարգեր Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի մոտ 40 փոքր քաղաքներում և գյուղերում՝ «Հայջրմուղկոյուղի» ընկերության (ՀՋԿ) սպասարկման տարածքներում:
4. Փոքրածավալ միջոցառումներ փորձնական ծրագրի ձևաչափով մոտ 560 գյուղում, որոնք նախկինում չէին սպասարկվում հինգ ջրային ընկերություններից որևէ մեկի կողմից: Այն հիմնված է լինելու «Հայաստանում 560 ցրված համայնքների (գյուղերի) մատակարարման նպատակով ինտեգրված՝ տեխնիկական, սոցիալական, ինստիտուցիոնալ և առևտրային մեխանիզմների կառուցման վերաբերյալ հայեցակարգային ուսումնասիրության» արդյունքների

վրա, որոնք ակնկալվում են 2014 թվականին: Ազդակիր համայնքները կկցվեն համապատասխան ջրային կոմունալ ծառայությանը իրենց տարածաշրջանում:

Ներդրումային միջոցառումները ներառում են հետևյալի փոխարինում, արդիականացում, տեղադրում կամ կառուցում.

- ջրի «մաքրման» և նման սարքավորումներ,
- մայր ջրատարներ և պոմպեր,
- ջրի բաշխման խողովակներ և սարքավորումներ,
- ջրընդունիչ խցիկներ, հաշվիչներ, ինչպես նաև տեխնիկական սպասարկման և շահագործման սարքավորումներ բոլոր կոմունալ օբյեկտների համար,
- կոյուղաջրերի կոլեկտորներ և պոմպեր,
- կոյուղաջրերի մաքրման կայան,
- ջրամբարի վերանորոգում և փոխարինում,
- խորհրդատվական ծառայություններ՝ աջակցելու համար ընկերություններին պլանավորման, մրցույթի, շինարարության մոնիտորինգի, ընդունման և շահագործման փուլերի ընթացքում,
- Առկա կառավարման պայմանագրերի երկարաձգում:

Ժամանակացույցը

Ծրագիրն իրականացվելու է 2014-2018 թվականների ընթացքում, ընդ որում՝ խորհրդատվական ծառայությունները կմատուցվեն 2014 թվականին, իսկ աշխատանքները կսկսվեն 2015 թվականին:

Ա.2. ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ՝ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑԸ

1. Տեղեկատվության փոխանցումը, պատասխանատու անձի նշանակումը

Ստորև նշված տեղեկատվությունը պետք է ուղարկվի Բանկ՝ հետևյալ անձի պատասխանատվության ներքո:

Կազմակերպություն	Հայջրմուղկոյուղի (ՀՋԿ) ընկերություն
Կոնտակտային անձ	Նորիկ Գևորգյան
Պաշտոն	Ներդրումային ծրագրերի համակարգման գծով տնօրեն

Գործառույթ/ Բաժին	
Հասցե	Հայաստան, ք. Երևան, 0010, Վարդանանց փ., փակ. 8ա
Հեռախոս	+ 37410 540101
Ֆաքս	+ 37491 200031
Էլ. փոստ	ngevorgyan@armwater.am

Վերոնշյալ կոնտակտային անձը պատասխանատու անձ է ներկա պահի դրությամբ:

Վարկառուն տեղեկացնում է ԵՆԲ-ին ցանկացած փոփոխության դեպքում:

2. Տեղեկատվություն հատուկ հարցերի վերաբերյալ

Վարկառուն պարտավոր է Բանկին տրամադրել հետևյալ տեղեկատվությունը ամենաուշը ստորև նշված վերջնաժամկետում:

Փաստաթուղթ/տեղեկատվություն	**Վերջնաժամկետ**
Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան	*մինչև 3-րդ փուլի աշխատանքների սկիզբը*
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ԲԱԳ) ոչ տեխնիկական ամփոփ նկարագրություն	նախքան ԲԱԳ պահանջող համապատասխան աշխատանքների համար Բանկի միջոցների բաշխումը

3. Տեղեկատվություն ծրագրի իրականացման վերաբերյալ

Վարկառուն Բանկին է տրամադրում ծրագրի առաջընթացի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը իրականացման ընթացքում ամենուշը ստորև նշված վերջնաժամկետում:

Փաստաթուղթ/տեղեկատվություն	**Վերջնաժամկետ**	**Հաշվետվությունների հաճախականություն**

Ծրագրի առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը՝ - *տեխնիկական նկարագրության համառոտ ներկայացում նախնական նախագծից տեղի ունեցած շեղումների պատճառների բացատրությամբ,* - *ծրագրի հիմնական յուրաքանչյուր բաղադրիչի իրականացման նախատեսվող ավարտի ժամկետների մասին թարմացված տեղեկատվություն՝ հնարավոր ուշացումների պատճառների բացատրությամբ,* - *թարմացված տեղեկատվություն ՎՎԲ-ի հետ պայմանագրով նախատեսված «Ձեռքբերումների և չափորոշիչների» կատարման վերաբերյալ,* - *թարմացված տեղեկատվություն ծրագրի արժեքի մասին՝ նախնական բյուջեից տեղի ունեցած շեղումների բացատրությամբ,* - *շրջակա միջավայրի վրա ազդող հիմնական գործոնների նկարագրություն,* - *թարմացված տեղեկատվություն գնումների գործընթացի վերաբերյալ,* - *թարմացված տեղեկատվություն ծրագրի պահանջարկի կամ օգտագործման և մեկնաբանությունների մասին,* - *առաջացած որևէ բարդություն և որևէ ռիսկ, որոնք կարող են ազդել ծրագրի իրականացման ընթացքի վրա,* - *ծրագրի հետ կապված ցանկացած իրավական գործընթաց, որը կարող է ընթացքի մեջ լինել:*	Մարտի 31/ սեպտեմբերի 30	կիսամյակային կտրվածքով

4. Աշխատանքների ավարտի և գործարկման առաջին տարվա վերաբերյալ տեղեկատվությունը

Վարկառուն Ծրագրի ավարտի և սկզբնական գործարկման մասին Բանկին տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը ամենաուշը մինչև ստորև նշված վերջնաժամկետը:

Փաստաթուղթ/տեղեկատվություն	**Բանկին ծանուցելու ամսաթիվը**
Ծրագրի ավարտի վերաբերյալ հաշվետվությունը՝ ներառյալ. *- ավարտված ծրագրի տեխնիկական բնութագրի համառոտ նկարագրություն՝ ցանկացած էական փոփոխության պատճառների բացատրությամբ,* *- ծրագրի հիմնական յուրաքանչյուր բաղադրիչն ավարտելու ամսաթվերը՝ առաջացած ուշացումների պատճառների բացատրությամբ,* *- ծրագրի վերջնական արժեքը՝ ծրագրված բյուջեի համեմատ ցանկացած գերազանցված ծախսի պատճառների բացատրությամբ,* *- ծրագրի շնորհիվ ստեղծված նոր աշխատատեղերի թիվը՝ ծրագրի իրականացման ընթացքում և մշտական,* *- շրջակա միջավայրի վրա ազդող հիմնական գործոնների նկարագրություն,* *- թարմացված տեղեկատվություն գնումների գործընթացի վերաբերյալ,* *- թարմացված տեղեկատվություն ծրագրի պահանջարկի կամ օգտագործման և մեկնաբանությունների մասին,* *- առաջացած որևէ բարդություն, և որևէ ռիսկ, որոնք կարող են ազդել ծրագրի իրականացման ընթացքի վրա,* *- ծրագրի հետ կապված ցանկացած իրավական գործընթաց, որը կարող է ընթացքի մեջ լինել,* *- թարմացված տեղեկատվություն ծրագրի ցուցանիշների համար փաստացի արժեքների վերաբերյալ՝ Բանկի Արդյունքների չափման (ԱՉ) աղյուսակում ներառելու համար*:	2020 թվականի մարտի 31 (ավարտից 15 ամիս հետո)

5. <u>Ծրագրի ավարտի վերաբերյալ հաշվետվությունից 3 տարի հետո պահանջվող տեղեկատվությունը (միայն ԵՄ-ից դուրս)</u>

Վարկառուն ծրագրի կատարման հաշվետվությունից 3 տարի հետո Բանկին

տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը ամենաուշը ստորև նշված վերջնաժամկետում:

Փաստաթուղթ/տեղեկատվություն	**Բանկին ծանուցելու ամսաթիվը**
3 տարի հետո ներկայացվելիք հաշվետվություն, որը ներառում է՝ - *թարմացված տեղեկատվություն ծրագրի ցուցանիշների համար փաստացի արժեքների վերաբերյալ՝ Բանկի Արդյունքների չափման (ԱՉ) աղյուսակում ներառելու համար*:	*2021 թվականի դեկտեմբերի 31*

Հաշվետվությունների լեզուն անգլերենն է:

Արդյունքների չափման (REM) աղյուսակ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ		Ելակետ	Ակնկալվող արժեքը ԾԱՀ-ի դրությամբ	Ակնկալվող արժեքը ԾԱՀ+3 տարի
Արտադրողականություն				
Ջրամբարի տարողությունը (հում կամ մաքրված ջրի)	մ3			
Նորակառույց կամ նորոգված ջրամատակարարման համակարգին միացված տներ	Քանակը			
Նորակառույց կամ նորոգված կոյուղաջրերի մաքրման կայանների հզորությունը	Բնակչության թիվը			
Նորակառույց կամ նորոգված կոյուղու ցանցին միացված տներ	Քանակը			
Նորակառույց կամ բարելավված մայր ջրատարների կամ բաշխման խողովակների երկարությունը	կմ			
Արդյունքներ				
Անվտանգ խմելու ջրից օգտվելու հնարավորություն ստացած բնակչությունը	Տնային տնտեսություններ			
Ջրամատակարարման համար էներգիայի սպառում	կՎտժ/մ3			
Հոսակորուստ/չհաշվառված ջուր	%			
Ծառայության մակարդակը	% հաճախորդներ, ովքեր ունեն 24ժ մատակարարում			
Ջրամատակարարումն ապահովող աշխատողների քանակը	Յուրաքանչյուր 1000 տան միացումներն ապահովող աշխատողների թիվը			
Հիմնական արդյունքների գուցանիշներ				
Կառուցման ընթացքում զբաղվածություն	Մարդ-տարի (քանակը)			
Զբաղվածություն՝ լրացուցիչ ուղղակի աշխատատեղ շահագործման ընթացքում (տեղական/մարզային)	Լրիվ դրույքին համարժեք			
Էներգաարդյունավետություն	Խնայված էներգիա ՄՎտժ և %			
Ածխաթթու գազի արտանետում	CO2՝ տոննաներով համարժ.			

Առդիր Բ

EURIBOR-ի սահմանումը

Ա. EURIBOR-ը

«EURIBOR» նշանակում է.

ա) մեկ ամսից պակաս համապատասխան ժամանակահատվածի մասով՝ մեկ ամիս ժամկետով Սահմանված տոկոսադրույք (Screen Rate), (ինչպես սահմանված է ստորև),

բ) մեկ կամ ավել ամիսների համապատասխան ժամանակահատվածի մասով, որի համար Սահմանված տոկոսադրույքը հասանելի է՝ համապատասխան ամիսների քանակի ժամկետով կիրառելի Սահմանված տոկոսադրույք, և

գ) մեկից ավել ամիսների համապատասխան ժամանակահատվածի մասով, որոնց համար Սահմանված տոկոսադրույքը հասանելի չէ, որը ստացվել է գծային միջարկման արդյունքում՝ հղում կատարելով երկու Սահմանված տոկոսադրույքներին, որոնցից մեկը կիրառելի է հաջորդ ավելի կարճ, իսկ մյուսը' հաջորդ ավելի երկար ժամանակահատվածի համար, քան համապատասխան ժամանակահատվածի տևողությունն է,

(այն ժամանակահատվածը, որի ընթացքում հաշվարկվում է տոկոսադրույքը, կամ որից միջարկվել են տոկոսադրույքները՝ **Ներկայացուցչական Ժամանակահատված**):

Վերոնշյալ *բ)* և *գ)* պարբերությունների նպատակներով՝ **«հասանելի»** նշանակում է՝ այն տոկոսադրույքները, որոնք հաշվարկվում են EURIBOR EBF-ի և EURIBOR ACI-ի (կամ EURIBOR EBF-ի և EURIBOR ACI-ի այդ գործառույթն իրականացնող ցանկացած իրավահաջորդ, ինչպես որոշվում է Բանկի կողմից) հովանու ներքո՝ տվյալ մարման ժամկետների համար:

«**Սահմանված տոկոսադրույք**» նշանակում է՝ եվրոյով արտահայտված ավանդների տոկոսադրույք համապատասխան ժամանակահատվածի համար, ինչպես այն հրապարակվում է Բրյուսելի ժամանակով ժ. 11.00-ին կամ Բանկի համար ընդունելի օրվա **(՝«Կողմնորոշիչ տոկոսադրույքի փոփոխման ամսաթիվ»)** ավելի ուշ ժամի, համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվան նախորդող 2 (երկու) Համապատասխան աշխատանքային օրվա ընթացքում, «Ռոյթերսի»՝ «EURIBOR 01» կամ դրան հաջորդող էջում կամ, հակառակ դեպքում, Բանկի կողմից այդ նպատակով ընտրված ցանկացած այլ հրապարակման միջոցով:

Եթե այդ Սահմանված տոկոսադրույքը նշված կերպով չի հրապարակվել, ապա Բանկն իր կողմից ընտրված՝ եվրագոտում գործող չորս հիմնական բանկերի՝ եվրագոտում գործող գլխամասային գրասենյակներին կխնդրի ներկայացնել իրենց հայտերը այն տոկոսադրույքի վերաբերյալ, որով նրանք առաջարկում են համեմատելի գումարով եվրոյով ավանդներ, Բրյուսելի ժամանակով ժ. 11.00-ի դրությամբ, Կողմնորոշիչ տոկոսադրույքի փոփոխման ամսաթվին՝ եվրագոտու միջբանկային շուկայի առաջատար բանկերին, Ներկայացուցչական ժամանակահատվածին հավասար ժամկետով: Առնվազն 2 (երկու) հայտի ներկայացման դեպքում տվյալ Կողմնորոշիչ տոկոսադրույքի փոփոխման ամսաթիվ կհամարվի հայտերի միջին թվաբանականը:

Եթե հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել են 2-ից (երկուսից) պակաս հայտեր, այդ դեպքում Կողմնորոշիչ տոկոսադրույքի փոփոխման ամսաթվի տոկոսադրույքը կհամարվի Բանկի կողմից ընտրված՝ եվրագոտու հիմնական բանկերի կողմից ներկայացված տոկոսադրույքների միջին թվաբանականը, Բրյուսելի ժամանակով մոտ ժ. 11.00-ին, Կողմնորոշիչ տոկոսադրույքի փոփոխման ամսաթվից 2 (երկու) Համապատասխան աշխատանքային օր անց, առաջատար եվրոպական բանկերին համեմատելի գումարով Ներկայացուցչական ժամանակահատվածին հավասար ժամկետով տրամադրված՝ եվրոյով փոխառությունների համար:

Եթե վերոնշյալից ստացվող տոկոսադրույքը զրոյից ցածր է, ապա EURIBOR-ը կհամարվի զրո:

Եթե վերոնշյալ կարգով տոկոսադրույք առկա չէ, ապա EURIBOR կհամարվի Բանկի կողմից սահմանված այն տոկոսադրույքը (արտահայտված որպես տարեկան տոկոսադրույք), որը կհանդիսանա Բանկի՝ համապատասխան տրանշի ֆինանսավորման ամբողջական ծախսը՝ հիմնվելով Բանկի կողմից այդ պահին ներքին կարգով գեներացված բազային տոկոսադրույքի կամ Բանկի կողմից այլընտ-րանքային եղանակով որոշված մեթոդով հաշվարկված տոկոսադրույքի վրա:

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Վերը նշված սահմանումների նպատակներով.

ա) սույն Առդիրում նշված հաշվարկների արդյունքում ստացված բոլոր տոկոսադրույքներն անհրաժեշտության դեպքում կկլորացվեն մինչև տոկոսային կետին ամենամոտ մեկ հարյուրհազարերորդականը՝ թվերը կլորացնելով 0,5–ի չափով.

բ) Բանկը Վարկառուին անհապաղ տեղեկացնում է իր ստացած հայտերի մասին.

գ) եթե վերը նշված դրույթներից որևէ մեկը չի համապատասխանում EURIBOR EFB-ի և EURIBOR ACI-ի (կամ EURIBOR EBF-ի և EURIBOR ACI-ի այդ գործառույթը կատարող ցանկացած իրավահաջորդ, ինչպես

որոշվում է Բանկի կողմից) հովանու ներքո ընդունված դրույթներին, ապա Բանկը կարող է, Վարկառուին տեղեկացնելով, փոփոխել այդ դրույթը՝ այն համապատասխանեցնելու համար այդպիսի այլ դրույթների հետ:

ԱՌԴԻՐ Գ[1]

<u>Վարկառուի համար ձևաթղթերը</u>

Գ.1. Հատկացման առաջարկի/ընդունման ձևաթուղթը

(հոդվածներ 1.02.Բ և 1.02.Գ)

Ստացող՝ Հայաստանի Հանրապետություն

Ուղարկող՝ Եվրոպական ներդրումային բանկ

Ամսաթիվ՝

Թեմա՝ Եվրոպական ներդրումային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև [ամսաթիվ] թվագրված՝ Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք ֆինանսական պայմանագրի Հատկացման առաջարկը/ընդունումը (**«Ֆինանսական պայմանագիր»**)

FI համարը՝ 82.043 Serapis համարը՝ 2012-0322

Հարգելի՛ պարոնայք,
Սույն գրությամբ հղում ենք կատարում Ֆինանսական պայմանագրին: Ֆինանսական պայմանագրով սահմանված տերմինները սույն նամակում գործածվելիս ունեն նույն նշանակությունը:

Հետևելով Ձեր՝ Բանկից Հատկացման առաջարկի վերաբերյալ հարցմանը, Ֆինանսական պայմանագրի 1.02.Բ հոդվածին համապատասխան, սույնով առաջարկում ենք Ձեզ համար հասանելի դարձնել հետևյալ տրանշը.
ա) Հատկացման ենթակա գումարը,
բ) Հատկացման սահմանված ամսաթիվը,
գ) Տոկոսադրույքի հաշվարկման հիմքը,
դ) Տոկոսի վճարման հաճախականությունը,
ե) Վճարման ամսաթվերը,
զ) Հիմնական գումարի կանխավճարի պայմանները,
է) Հիմնական գումարի կանխավճարի առաջին և վերջին օրերը,
ը) Մինչև Մարման ամսաթիվը կիրառելի Ֆիքսված տոկոսադրույքը կամ

Սպրեդը:
Տրանշը Ֆինանսական պայմանագրի պայմանների համաձայն հասանելի դարձնելու համար Բանկը պետք է ստանա Հատկացման ընդունումը Ձեր անունից պատշաճ կերպով ստորագրված սույն Հատկացման առաջարկի օրինակի ձևով, հետևյալ ֆաքսով [__], ոչ ուշ քան մինչև Հատկացման ընդունման վերջնաժամկետը [ամսաթիվը], [ժամը] Լյուքսեմբուրգի ժամանակով:

---

[1] Պետք է տրամադրվի թղթային տաբերակով՝ Վարկառուի ձևաթղթի վրա:

Հատկացման ընդունմանը կից պետք է ներկայացվեն (եթե նախկինում չեն տրամադրվել).

i) բանկի այն հաշվեհամարը (համապատասխան արժույթի համար պատշաճ ձևաչափով), որին պետք է կատարվի տրանշի հատկացումը, և

ii) Վարկառուի անունից ստորագրելու լիազորությամբ օժտված անձի կամ անձանց իրավասության հաստատումը, ինչպես նաև այդ անձի կամ անձանց ստորագրության նմուշները:

Եթե դրանք չեն ստացվում վերոնշյալ ժամանակին, ապա սույն փաստաթղթում պարունակվող առաջարկը համարվում է մերժված և ինքնաբերաբար համարվում է ուժը կորցրած:

Եթե Դուք ընդունում եք տրանշը, ինչպես նկարագրված է Հատկացման առաջարկում, ապա կիրառվում են Ֆինանսական պայմանագրի բոլոր պայմանները:

Հարգանքով՝

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿ

Սույնով մենք ընդունում ենք վերը նշված Հատկացման առաջարկը՝

_____

Հայաստանի Հանրապետության անունից և կողմից

[անուն]

[պաշտոն]

Ամսաթիվ

Առդիր Դ

<u>Վարկառուի կողմից տրամադրվող հավաստագրի ձևը (հոդված 1.04.Գ)</u>

Ստացող՝ Եվրոպական ներդրումային բանկ
Ուղարկող՝ Հայաստանի Հանրապետություն
Ամսաթիվ՝
Թեմա՝ Եվրոպական ներդրումային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև [ամսաթիվ] թվագրված՝ Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք ֆինանսական պայմանագիր (**Ֆինանսական պայմանագիր**)
FI համարը՝ 82.043 Serapis համարը՝ 2012-0322

Հարգելի՛ պարոնայք,
Ֆինանսական պայմանագրով սահմանված տերմինները սույն նամակում գործածվելիս ունեն նույն նշանակությունը:
Ֆինանսական պայմանագրի 1.04-րդ հոդվածի իրականացման նպատակով մենք սույնով վստահեցնում ենք Ձեզ հետևյալում.
ա) Կանխավճարի դեպք չի առաջացել և չի շարունակում մնալ չշտկված,
բ) Ծրագրի որևէ հայեցակետում չի կատարվել որևէ էական փոփոխություն, որի վերաբերյալ մենք պարտավորված ենք տեղեկացնել՝ համաձայն 8.01-ին հոդվածի, բացառությամբ մեր կողմից նախկինում հաղորդված դեպքերի,
գ) մեր տրամադրության տակ առկա են բավականաչափ միջոցներ Ա.1 Առդիրին համապատասխան սահմանված ժամկետներում Ծրագրի պատշաճ իրականացումն ու ավարտն ապահովելու համար,
դ) որևէ դեպք կամ հանգամանք, որը հանդիսանում է կամ կհանդիսանա, ժամանակի ընթացքում կամ սույն Ֆինանսական պայմանագրի ներքո ծանուցում տրամադրելիս, որևէ Պարտավորության չկատարման դեպք կամ Կանխավճարի դեպք, որն առաջացել է և շարունակվում է մնալ չշտկված կամ չմերժված,
ե) ոչ մի դատավարություն, արբիտրաժային վարչական վարույթ կամ հետաքննություն առկա չէ կամ, մեր տեղեկություններով, չի սպառնում լինել կամ ընթացքի մեջ չէ որևէ դատարանում, արբիտրաժային մարմնում կամ գործակալությունում, որը հանգեցրել է կամ, ողջամտության սահմաններում, կարող է հանգեցնել Էական անբարենպաստ փոփոխության, և ոչ էլ մեր մասով առկա է որևէ չկատարված վճիռ կամ որոշում,
զ) 6.07-րդ հոդվածի ներքո մեր կողմից հավաստիացումների և երաշխիքների ներկայացումը և կրկնումը ճիշտ են բոլոր դեպքերում,

է) սույն Ֆինանսական պայմանագրի ամսաթվից սկսած՝ չի առաջացել էական անբարենպաստ փոփոխություն մեր դրության համեմատությամբ:

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության կողմից և անունից՝
Ամսաթիվ՝

Հավելված I

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ